2-38

899

Библіотека
О. Теръ-Нерсесянца
въ Эчмиадзинѣ

134

282
2-58

(ԱՐՏԱՏՊԱԾ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻՑ 1892 Թ.)

ՊՏ
33570

4-26

ԳԵՕԼԻՆԳԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԵՒ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԱՏԻԿԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ

ՄԱՄԻՆ 1869—1887

862

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
1892

899-62

ՀՐԱՄԱՆԱՒ

ԱՄԵՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ։

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՀԱՄԱՐ
681-2013

Ճեմարանի սաներից երկուսը՝ վերջին լսարանի ուսանողներ՝ պ. պ. Աղեք. Զուբարեան և Յակովբ Խաչվանքեան ընդունելով մեր առաջարկութիւնը յանձն առան այս գեղեցիկ գրքուկի թարգմանութիւնը։ Նոր կրթուող սերնդին՝ ապագայ հայ հոգևորականներին ամենակարևոր է ինչպէս անհաւատութեան փորձանքներից խուսափել նոյնպէս և զգուշանալով զգուշանալ եզուիտական հակաքրիստոնէական՝ կործանիչ և խաւարամոլ ուղղութիւնից։ Եթէ այս գրքուկի թարգմանութիւնը որ և է չափով նպաստէ այդ բանին՝ նպաստէ աւետարանական աստուածային վարդապետութեան լուսաւոր և ազատամիտ ըմբռնողութեան՝ թէ մենք և թէ երիտասարդ թարգմանիչները լիովին վարձատրուած կը համարենք մեզ այս փոքրիկ աշխատութեան համար։

ՄԻԱՒԱՆ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ· 1869—1887 [1]։

ՌՈՒՍ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՑԱՌԱՋԱԲԱՆԸ։

Դեօլլինգեր վախճանուեցաւ Միւնխենում 1890 թուի Յունուարի 10-ին (նոր տոմար)։ Նորա «Վատիկանի հրովարտակների մասին նամակները և յայտարարութիւնները» հրատարակեց նորա մահուանից յետոյ իւր վաղեմի բարեկամ և Բոնի համալսարանի աստուածաբանութեան յայտնի ուսուցչապետ Ռէյշը, որ Դեօլլինգերի կեանքի վերջին տարիները աշխատակից էր եղել նորա «Բելլարմինի ինքնակենսագրութիւն»[2]) և «Հռոմէական—կաթոլիկական եկեղեցու մէջ բարոյականութեան մասին եղած վէճերի պատմութիւնը ԺԶ դարից սկսած» հրատարակութիւններին [3])։

Թէև Ռէյշը Դեօլլինգերի «նամակներին և յայտարարութիւններին» կցել էր մի յառաջաբան և ճշտիւ որոշել էր իւրաքանչիւրի գրուելու տարեթիւն ու ամսաթիւը՝ այնուամենայնիւ ռուս թարգմանիչը աւելորդ չէ համարել իւր կողմից մի քանի նախագիտելիքներ հաղորդել գլխաւորապէս այն ընթերցողների

---

1) *Այս յօդուածը թարգմանուած է* "Христіанское Чтеніе„ *Ամսագրի* 1891 *թ.* Յուլիս—Օգոստ.—Սեպ.—Հոկ.—Նոյեմ.—Դեկ. *համարներից։*

Briefe und Erklärungen von I. von Döllinger über die Vaticanischen Decrete 1869—1887. München. 1890.

2) Die Selbstbiographie des Cardinals Bellarmin lateinisch und deutsch mit geschichtlichen Erläuterungen herausgegeben von Ioh. Ios. Ign. von Döllinger und Fr. Heinrich Reusch. Bonn. 1887.

3) Geschichte der Moralstreitigkeiten in der römisch-katholischen Kirche seit dem XVI Ihrhdt. Auf Grund ungedruckter Aktenstücke bearbeitet von Ignaz von Döllinger und Fr. Heinrich Reusch. 2 Bände. München.

համար, որոնք շատ քիչ ծանօթութիւն ունին Վատիկանի ժողովի ներքին բնաւորութեան և Եւրոպայում հին-կաթոլիկութեան (старокатолицизмъ) սկզբնաւորութեան մասին։

Բէյրի հրատարակութեան մէջ Դեօլլինգերի երեք «յայտարարութիւնները» տպուած են «նամակներից» առաջ։ Նոցանից առաջինը գրուած և հրատարակուած է Վատիկանի ժողովի բացումից ոչ շատ առաջ—1869 թուի վերջը. իսկ միւս երկուսը—նորա նիստերի ժամանակ՝ 1870 թուին։ Նոցա բոլորի նպատակն էր ազդել հասարակաց կարծիքի վերայ և օգնել այդ ժողովի յայտնի փոքրամասնութեան, որ կազմուած էր Հռոմէական—կաթոլիկական աշխարհի աւելի լուսաւորուած եպիսկոպոսներից՝ մաքառելու պապի և եզուիտների դէմ, որոնք նախապէս միացրել էին իրենց նպատակներին նպաստաւոր մի մեծամասնութիւն և նախապէս որոշել էին պապի անսխալականութեան և անոտնման իշխանութեան վարդապետութիւնը։ Դեօլլինգերի «յայտարարութիւններից» առաջինը խօսում է պապի անսխալականութեան մասին և ուղղուած է եպիսկոպոսներին՝ Վատիկանի ժողովի անդամներին. երկրորդը խօսում է այն խնդրագրի մասին, որով ժողովի վերայիշեալ մեծամասնութիւնը խնդրում է պապին անել առաջին քայլը, որ անհրաժեշտ է նորա անսխալականութեան մասին դատողութիւններ սկսելու և այդ կարծիքը աստուածայայտնեալ ճշմարտութիւն և փրկութեան համար անհրաժեշտ հաւատի անդամ դարձնելու համար—մի քայլ՝ որին իբր թէ սպասում և ցանկանում է ամբողջ Հռոմէական—կաթոլիկական աշխարհը[1]). երրորդը խորհրդածում է ժողովի գործաւորութեան մասին, որ պապի հինգ կարգինալներից կազմուած մասնաժողովը նորա վերայ էր գրել. խօսում է նոյնպէս ժողովի գործադրութեան յանձնած այդ կարգի աստուածաբանական նշանակութեան մասին։

Այս յայտարարութիւնների մէջ կարելի է տեսնել ոչ միայն

1) Հռոմից ուղարկած հրաւիրագրերի (ժողովի և նորա ծրագրի) մէջ ամենևին չէր յիշուած պապի անսխալականութեան մասին։

Դեօլլինգերի անձնական, այլ և Գերմանիայի Հռոմէական—կաթոլիկական ամբողջ աստուածաբանական դպրոցի կարծիքները, որի (դպրոցի) յայտնի ներկայացուցիչն էր անցեալ դարի վերջերում և ներկայ ամբողջ դարի ընթացքում Միւնխենի աստուածաբանական ֆակուլտետը (Բաադեր, Ջէյլեր, Հիրշեր, Դեօլլինգեր, Ֆրիդրիխ, Հուբեր). մինչև Վատիկանի ժողովը այս դպրոցին համակրում և նորա ազդեցութեան տակ կրթւում էին համարեա Գերմանիայի և Աւստրօ-ունգարիայի բոլոր Հռոմէական—կաթոլիկական եպիսկոպոսները. նորան յարեցան Վատիկանի ժողովին դիմադրելու համար և բոլոր աչքի ընկնող Գերմանիայի Հռոմէական—կաթոլիկական աստուածաբանները և կանոնիկոսները—Բոննայում՝ Դիրինգեր, Հիլֆերդ, Բէյշ, Լեանգեն, Կնօոդ (փիլիսոփայ). Տիւբինգենում՝ Կուն և Հեֆելէ. Բրեսլաւում՝ Բաղցեր, Բէյնկենս, Վէբեր. Բրաունսբերգում՝ Մենցել և Միխելիս. Վիեննայում՝ Մասսեն. Պրագայում՝ Շուլտէ, իսկ Վատիկանի ժողովից յետոյ՝ Բոննայում՝ Հեսսէնում՝ Լիւտերբեկկ և այլն։ Դեօլլինգերի յայտարարութիւնների մէջ ընթերցողը առանձին հետաքրքրութեամբ կարող է տեսնել, թէ ինչպէս են որոշում գերմանական լուրջ գիտական—աստուածաբանները ժողովների սիեզերականութիւնը և վարդապետութեան ուղղափառութիւնը ընդհանրապէս, և մասնաւորապէս՝ ինչպէս են նայում եպիսկոպոսների իրաւունքների, աստուածաբանական գիտութիւնների նշանակութեան և ժողովների գործաւորութեան կարգի վերայ, Լիոնի, Տրիդենտի, Ֆլորենցիայի և Վատիկանի ժողովների ու նոցա որոշումների վերայ, եկեղեցու գլխաւորութեան և անսխալականութեան վերայ, պապական գրականութեան մէջ եղած պապերի անսխալականութեան և գլխաւորութեան մասին ոսկորական ապացոյցների վերայ և այլն։

Թէ ինչ տեսակ սիրապետող նշանակութիւն ձեռք բերեց ներկայումս Հռոմէական հոգևորականութեան մէջ եզուիտական ուղղութիւնը, որպիսի անանցանելի անդունդ ստեղծեց Վատիկանի ժողովը մի կողմից աստուածաբանական և եկեղեցական-պատմական գիտութիւնների, և միւս կողմից վատիկանի հաւատի ո-

բողումների մէջ, և սրպիսի վսեմ շարժառիթներ առաջնորդում էին գիտնականներին, որոնք մերժեցին նորահնար վարդապետութիւնները և հին կաթոլիկական շարժումին առաջին զարկը տուին՝ այդ բոլորը, որ արդէն Դեօլլինգերի զեկուցումների մէջ մասամբ երևումէր՝ աւելի ակնյայտնի երևումէ այն «նամակների» մէջ, որ ուսուցչապետ Ռէյշը «զեկուցումներից» յետոյ հրատարակեց 1)։

Այդ թուով 26 նամակները, բացի մէկից, բոլորը գրուած են Վատիկանի ժողովից յետոյ։ Նոցանից 1) տասն և մէկը պատկանումեն չորս առաջնորդներին և մի բարձրաստիճան կնոջ, որոնք զանազան ժամանակներում փորձել էին Դեօլլինգերին համոզելով ենթարկել Վատիկանի ժողովի որոշումներին։ Դոքա էին Միւնխենի ամբիոնի միմեանց յաջորդող երկու արքեպիսկոպոսներ — ֆոն Շերը և ֆոն Շոէյխէլէ, երրորդը պապի նուիրակ Բաւարիայում՝ Ռուֆֆօ Սցիլլան և չորրորդը Դեօլլինգերի նախկին ընկերներից և նորան յարգողներից՝ Տիւբինգենի աստուածաբանութեան յայտնի ուսուցչապետ Հեֆելէն, որ Վատիկանի ժողովի նիստերի սկզբում ստացաւ Ռոտենբուրգի եպիսկոպոսի աստիճանը Վիւրտեմբերգի թագաւորութեան մէջ, և որը մեզ յայտնի «Ժողովների պատմութեան» հեղինակն էր. իսկ բարձրաստիճան կնոջ անունը Ռէյշը առայժմ անկարելի համարեց յայտնել։ 2) Զորս նամակը, որոնց չի էլ կարելի նամակ անուանել — դոքա եկեղեցական պաշտօնական վաւերաթղթեր են. մէկը ֆոն Շերը արքեպիսկոպոսի հովուական թուղթն է իւր հօտին ուղղած՝ Դեօլլինգերին Հռոմէական եկեղեցուց մերժելու առթիւ և երեքը Միւնխենի վիճակային օրտինարիատի (մի հաստատութիւն, որ մի տեսակ նմանութիւն ունի մեր կոնսիստորիաներին) թղթերը — երկուսը Դեօլլինգերին վերոյիշեալ գործի առթիւ և միւսը Միւնխենի այն եկեղեցու գործակալին, ուր

1) Այդ բոլորը գիտնականօրէն և կատարեալ մանրամասնութեամբ նկարագրուած է այն նշանաւոր հին—կաթոլիկական շարադրութիւնների մէջ, որ ես ցոյց եմ տուել «հին—կաթոլիկների դէպի ուղղափառութիւնը ունեցած յարաբերութեան մասին» շարադրութեան մէջ տես «Церковный Вѣстникъ» ամսագրի 1890 թ. 44, 45 և 46 համարները։

պիտի կատարուէր այդ մերժումը։ Բոլոր նամակներից միայն տասն և մէկը պատկանում են Դեօլլինգերին. սոցանից հինգը ուղղուած են զանազան ուսումնականներին, կամ պարզն ասած՝ նորան ծանօթ եկեղեցական անձնաւորութիւններին, իբրև պատասխան նոցա հարցերին, օրինակ՝ արդեօք ճշմարիտ են այն տպագրութեամբ տարածուած լուրերը, իբր թէ Դեօլլինգեր ենթարկուել է ժողովի հրովարտակներին, կամ թէ ինչպէս է նա մտածում հին կաթոլիկութեան խնդիրների մասին և այլն։ Ընթերցողի համար աւելի հետաքրքրական են Դեօլլինգերի այն վեց նամակները, որոնց մէջ նա տալիս է մանրամասն պատասխան վերոյիշեալ առաջնորդների և բարձրաստիճան կնոջ Վատիկանի ժողովին հպատակելու հրաւէրներին։ Այդ նամակների մէջ Դեօլլինգեր կատարեալ անդորրութեամբ և համբերութեամբ, բայց և համոզուած ուսումնականի արժանաւորութեամբ բացատրումէ նամակագիրներին իւր դէպի Վատիկանի ժողովը ունեցած վարմունքի նշանաւոր ուսումնական և բարոյական շարժառիթները և թախանձելով խնդրումէ նոցա, որ նոքա, եթէ համոզուած են թէ Վատիկանի հրովարտակները ճշմարիտ են, օգնեն նորան՝ Դեօլլինգերին, ճանաչելու այդ ճշմարտութիւնը և փոխելու իւր համոզմունքները, որոնց նա երկար ժամանակ հիմնաւոր էր համարում և որոնց նա քառասունեօթ տարուց աւելի բացատրումէր համալսարանի ամբիոնից իւր ունկնդիրներին և ընթերցող հասարակութեան իւր շարադրութիւններով. միևնոյն ժամանակ նա ցոյց է տալիս իւր այդպիսի համոզման ամենալաւ միջոցը...։

Բայց շատ առաջ չը գնանք։ Այստեղ չէ կարելի ընթերցողի ուշադրութիւնը չդարձնել Ռէյշի հրատարակած «նամակների» այն մանաւոր հանգամանքի վերայ, որ նոցանից մէկը — Դեօլլինգերի նախկին ընկեր Հեֆելէի նորան գրած սիրալի նամակը մնացել է անպատասխան։ Ի՞նչ է նշանակում այդ։ Ռէյշ ուսուցչապետը իւր յառաջաբանի մէջ նկատումէ, որ Հեֆելէի նամակը տպուել է Դեօլլինգերի համաձայնութեամբ։ Բայց ինչո՞ւ է Դեօլլինգերը անպատասխան թողել այդ նամակը։

ընթերցողը ինքը կը հասկանայ այդ, եթէ մի փոքր նեղութիւն քաշէ կարդալ Հեֆելէի Վատիկանի ժողովում ունեցած վարմունքի մասին հետաքրքիր ծանօթութիւնները և նորա նամակների քաղուածքները, որ նա գրել էր Գեօլլինգերին և ուրիշ ուսումնական բարեկամներին Հռոմում եղած ժամանակ և այնտեղից վերադառնալուց յետոյ նախ քան Վատիկանի հրովարտակներին հնազանդելը։ Այս ծանօթութիւնները և քաղուածքները ևս առաւել կարևոր են այստեղ, որովհետև Հեֆելէի վարմունքը ժողովում և նորանից յետոյ և նորա նամակագրութիւնները մասամբ լոյս են սփռում Վատիկանի ժողովի պատմութեան ներքին կողմի վերայ ընդհանրապէս և նորա գլխաւոր գործիչների բնաւորութեան և ուղղութեան վերայ—Հռոմէական նուիրապետութեան...։

Ժողովում Հեֆելէն պատկանում էր փոքրամասնութեան ամենաւսումնական և ամենից գործունեայ անդամներին, որոնք մաքառում էին եզուիտների և պապերի որոգայթների դէմ։ մասնակցում էր այն ամեն բանին, ինչ որ այդ փոքրամասնութիւնը ձեռնարկում էր հեռացնելու ժողովի վճիռների և դատողութիւնների ազատութեան դէմ եղած բոլոր արգելքները Հռոմում։ և սորագրում էր այն զեկուցումները, որոնք ուղղուած էին պապի անսխալականութեան դէմ։ 1870-ի Ապրելին նա բաժանեց ժողովի անդամներին իւր Հոնորիոս պապի մասին գրած փոքր շարադրութիւնը Causa Honorii papae. Scripsit Carolus Josephus de Hefele Episcopus Rotheuburgensis. Neapoli typis fratrum de Angelis in via Pellegrini 4. MDCCCLXX. Շուլտէի վկայութեան նայելով - որի Altkatholicismus [1]) շարադրութիւնից մենք քաղում ենք ինչպէս Հեֆելէի մասին տեղեկութիւնները, նոյնպէս էլ նորա նամակներից քաղուածները—Հեֆելէի Հոնորիոսի մասին գրած շարադրութեան էութիւնը ամփոփում է հետևեալ դրութիւնների մէջ։ 1) Հոնորիոս պապը մերժեց էրկո- կամ և էրկո- գորշ-ղո-ՐԿ-ն ուղղափառ

1) Der Altkatholicismus. Geschichte seiner Entwickelung, innerer Gestaltung und rechtlichen Stellung in Deutschland, Von D-r Ioh. Friedrich von Schulte. Giessen. 1887. երես 216—236.

արտայայտութիւնը և ընդհակառակն յայտարարեց, որ ճշմարիտ արտայայտութիւնն է մի կամ կամ մի ցոնկո-ՐԿ-ն (հերետիկոսական) և հրամայեց հաւատալ այն կրկնակի մոլորութեան [1]։ 2) Վեցերորդ Տիեզերական ժողովը իրեն իրաւունք համարեց դատել ex cathedra վարդապետող պապին։ Նորա հրատարակած ex cathedra հաւատի որոշումը և նոյն իսկ պապին ենթարկել նզովքի այն բանի համար, որ նա հերետիկոսական վարդապետութիւն էր հաստատել։ 3) Այնուհետև իրաքանչիւր պապ մինչև ԺԱ. դարը պաշտօն ստանձնելիս պարտաւորուում էր երդումով հաստատել, որ ա. Տիեզերական ժողովը կարող է դատել պապին հերետիկոսութեան համար և բ. վեցերորդ Տիեզերական ժողովը արդարացի կերպով էր նզովքի ենթարկել Հոնորիոս պապին, որովհետև նա իւր հաւատի որոշումով խրախուսեց ոտ վարդապետութիւնը։

Ժողովի անդամներին իւր ժամանակին բաժանուած էին Վատիկանի հրովարտակների նախագիծը, որպէս զի նոքա կարողանային իրենց նկատողութիւններն անել նոցա վերայ։ Պապի անսխալականութեան մասին արած իւր ծանօթութիւնների մէջ Հեֆելէն բացատրում և պատմական փաստերով հաստատում է թէ «Հռոմի պապի անսխալականութեան վարդապետութիւնը» չունի հիմունքներ ոչ ս. Գրքի և ոչ էլ եկեղեցական աւանդութիւնների մէջ, և թէ նախկին դարերում քրիստոնէութիւնը հաստատութեամբ պահպանում էր դորան հակառակ վարդապետութիւն։

1870 թուի Ապրիլի 2-ին Հեֆելէն գրում է Գեօլլինգերին Հռոմից. Բարձրապատիւ տէր, յարգելի ընկեր։

... Մեծամասնութիւնը ստրկէն այն ստոիճանի գրգռուած է մեր դէմ որ դժուար է ոտրանից յետոյ ազատ խօսել... թէ ինչպիսի բուռն ցանկութեամբ է ձգտում պապը հասնել անսխալականութեան և ինչպէս հրապարակաւ հայհոյում է ընդդիմադրողներին՝ այդ ձեզ յայտնի է լրագիրներից։ Այդ բանը շատ եպիսկոպոսների վերայ խիստ ծանր տպաւորութիւն է թողնում

1) Այս հատուածը համաձայն չէ Հայկական Եկեղեցու վարդապետութեան։ Ծնթ. Միաբ.

և Բաուշէրի [1]) մեծ հաւաքուողների առանց այն էլ սակաւաթիւ խումբը կամաց կամաց նուազում է: Ի՞նչ կը լինի եթէ բոլորն էլ նոյն թակարդի մէջ ընկնեն. շատ քչերը միայն մոռացումն են ազագայում անելիքի մասին:

Մեծամասնութիւնը այնքան քաղաքավարի է, որ այժմ ասում է մեզ. «Մեր ձայները կը տանք և կը ներկայացնենք պապին մեր կարծիքները. եթէ նա ձեր կարծիքը հաստատէ՝ մենք կը հնազանդենք, իսկ եթէ մերը հաստատէ՝ դուք պարտաւոր էք հնազանդելու: Իսկ ով որ չէ կամենում՝ թող եկեղեցուց դուրս գայ»: Ահա թէ ինչպէս են կամենում գործել: Հիմունքների մասին և ոչ մի խօսք. ապացոյցի հոտն էլ չը կայ, չէ՞ որ գործը բոլորովին վրճռուած է: Զը նայելով մեր այս անյուսալի դրութեան՝ ես այնուամենայնիւ Հոնորիոսի մասին մի գրքոյկ գրեցի մեր ընկերների աչքը բաց անելու համար, այդ խնդրի վերաբերմամբ. իսկ որովհետև այդ գրքոյկը համակրութիւն գտաւ, ուստի և տպւում է Նէապոլում և արդէն պատրաստ է... Բոլորովին անկարելի է մեծամասնութիւնից որ և է մէկին համոզել. ես ինձ նպատակ եմ դրել եղբայրներին զօրացնելը և այդ պատճառով միշտ գնում և խօսում եմ գերմանական և ունգարական ժողովներում և գերմանացիների, ֆրանսիացիների, անգլիացիների, ամերիկացիների և ուրիշների միջազգային ժողովներում: Բայց այդ միջոցն էլ միշտ չէ յաջողւում: Գովասանքի արժանի են Շվարցենբերգ [2])

---

1) Բաուշէր կարդինալը՝ Վիեննայի իշխան—արք-եպիսկոպոսը՝ Հռոմի ժողովի փոքրամասնութեան ամենաճուկական պարագլուխներից մէկն էր՝ այնտեղ գրեց և տարածեց ժողովի անդամների մէջ այն փոքրամասնութեան ոգու համաձայն հետևեալ շարադրութիւնը—Observationes quaedam de infallibilitatis ecclisiae subjecto Բայց, ինչպէս ասում է Հուլտէն. հոգւով բիւրոկրատ և իշխանասէր լինելով՝ նա, Վիեննա վերադառնալուց յետոյ ինչպէս փոքրամասնութեան միւս եպիսկոպոսները՝ խոնարհեցաւ Հռոմի առաջ հերձուածից խուսափելու նպատակով:

2) Շվարցենբերգ կարդինալը—Պրագայի իշխան արքեպիսկոպոսը՝ ժողովում եռանդուն կերպով պաշտպանում էր ճշմարտութիւնը թէ խօսքով և թէ Մայիսի աստուածաբանի շարադրութիւնները տարածելով. և եթէ Հռոմից վերադառնալուց յետոյ հաւատարիմ մնաց իւր համոզմունքներին՝ համարձակ կարող էր հին կաթոլիկական շարժման գլուխը կանգնել իրեն

և Բաուշէր երկու կարդինալները, նոքա հաստատ են կանգնած:

Մեծարգոյ ընկեր. ընդունեցէք հաճութեամբ այս տողերը և հաւատացէք, որ ես կը ցանկանայի վերադառնալ իմ ակադեմիական ամբիոնը աւելի քան իսրայէլացիք կարող էին ցանկանալ վերադառնալ իրենց մոլի կճուճներին: Երբէք ես ինձ այնքան դժբաղդ չեմ զգացել, որքան այժմ:

Ձեր հաւատարիմ Հեֆելէ:

Յուլիսի 13-ին ժողովը պապի անսխալականութեան հարցը քուէարկութեան ենթարկեց: Հեֆելէն փոքրամասնութեան հետ միասին այդ նորահնար դաւանանքին հակառակ ձայն տուեց: Այդ ժողովի նախընթաց օրը նա դարձեալ իւր փոքրամասնութեան հետ միասին ստորագրեց պապին ուղղած զեկուցումը և չը մասնակցելով 1870 թ. Յուլիսի 18-ի ժողովի վերջին նիստին վերադարձաւ իւր վիճակը:

Ահա թէ ինչ էր գրում նա Դեոլլինգերին 1870 թ. Օգոստոսի 10-ին այս զեկուցման պատմութեան մասին, որ կազմուել էր նորահնար վարդապետութեան յայտարարելու նախընթաց օրը՝ Յուլիսի 17-ին:

«Գերապատիւ Տէր Stiftsprobst, [1]) յարգելի պաշտպան և ընկեր:

Հէնց նոր ստացայ Ձեր պատուական նամակը և ահա շտապում եմ պատասխանել, մանաւանդ որ ես մի քանի անգամ ցանկացել եմ Ձեզ գրել: Թոյլ տուէք մի քիչ մանրամասն խօսել:

Ութսուն ութը հոգւով Non placet ասելուց յետոյ (այսինքն Յու-

նուիրուած հօտի և հոգևորականութեան հետ միասին, որոնց մէջ անսխալականութեան մասին և ոչ մի խօսք չկար... բայց ինչպէս ասում է Հուլտէն, նա կարող է ծառայել իրրև ապացոյց այն բանին, թէ ինչպէս աղնիւ և կամքի տէր մարդիկ հեշտութեամբ ընկճւումեն, երբ քաղաքականութեան մոմենտների որ և է կոմբինացիայի ժամանակ նոքա չեն ունենում հիմնական ծանօթութիւններ:

1) Բաւարիայի գիտութեանց Ակադեմիայի նախագահի, Միւնխենի համալսարանի պրոֆեսսորի, կայսերական խորհրդի անդամի և այլ պաշտօնների հետ Դեոլլինգեր լրիւ հոգևորական անձն ունէր նոյնպէս Ս. Կայէտանի ուխտի վանահայրութեան պաշտօնը, եպիսկոպոսական խոյր կրելու իրաւունք և կոչւում էր Stiftsbrobst.

լիսի 13-ին վերոյիշեալ քուէարկութեան ժամանակ) եւ յոյս ունէի, որ ընդհանուր նիստի ժամանակ գոնէ հոյնքանը հանդիսաւոր կերպով կը կրկնեն—ոչ։ Բայց դժբաղդաբար շատերը խակոյն թողնելով կռուի դաշտը հեռացան, միւսները վախեցան և այն յոյսը թէ վերջ ի վերջոյ juxta modum [1]) ձայն տուողները մեզ հետ կը միանան՝ ի դերև անցաւ...։

Բայց ահա իմանում ենք, որ վերջին ընդհանուր ժողովի ժամանակ նորահնար դաւանանքը յայտարարելուց յետոյ պէտք է իւրաքանչիւրից պահանջեն ա. հանդիսաւոր կերպով ընդունել նորահնար վարդապետութիւնը և բ. խոստովանել թէ ժողովը ազատ և կանոնական էր։ Սակայն նախագահները (այսինքն այն մանաժողովների նախագահները, որոնց մէջ բաժանուած էին ժողովի գործերը) վերջին կէտը բաժանեցին առաջինից. Յուլիսի 16-ին նոքա անսպասելի կերպով պահանջեցին, որ եպիսկոպոսները ստորագրեն լրագրական յօդուածների դէմ բողոքը, որոնք չէին ընդունում ժողովի կանոնական և ազատ լինելը։ Փոքրամասնութիւնից շատերը չը կարողացան դիմադրել և մոլեռանդութեան տեղի տուին։ Արդարև շատ շատ եռանդ էր հարկաւոր, որ կարողանային այդ լրբերից ազատուել և առանց ստորագրութիւն տալու պահպանել իրենց տեղը։ Երբ մանաժողովի օգնութեամբ պապի վերայ ազդեցութիւն գործելու վերջին փորձը ապարդիւն անցաւ [2]) և երբ ուրուագիծը (схема) փոխանակ մեղմացնելու ընդհակառակն աւելի եւս խստա-

1) Վատիկանի ժողովի սկզբում բոլոր անդամների թիւը հասնում էր 764-ի. Յուլիսի 13-ին նոցանից մնացել էր 601։ Սոցանից 88-ը non placet ձայն տուին, 62-ը juxta modum, այսինքն այն պայմանով, որ հաւատի որոշման ծրագրի բնագիրը ձայն տուողների պահանջների համեմատ փոփոխութեան ենթարկուի։

2) Փոքրամասնութեան ընտրած և Յուլիսի 16-ին պապին ներկայացած մանաժողովի գլուխ կանգնած էր, բացի միւսներից, և Մայնցի արքեպիսկոպոս ֆն Կետտելեր։ Սա ծունկ չոքելով պապի առաջ աղերսեց նորան, ի հարկէ իզուր, որ մեղմացնէ պապի անսխալականութեան մասին կազմած ուրուագիծը։

ցաւ [1]), այնժամանակ, այն է Յուլիսի 17-ին կիւրակի օրը յառաջ եկաւ մի հարց՝ quid faciendum—ինչպէս պէտք է վարուել ընդհանուր նիստի վերաբերմամբ։

Ամենալաւ միջոցը այն կը լինէր, ինչպէս եւ այդ բացատրեցի, եթէ ներկայանայինք ժողովին և կրկնէինք մեր non placet-ը և եթէ պահանջէն հպատակութիւն՝ բացատական պատասխան տայինք։

Այստեղ է գլխաւոր գործը։ Բայց մի քանիսը յայտնեցին, որ իրենք այդքան հեռու չեն գնայ և վերջ ի վերջոյ կը հնազանդեն։ Մնում էր վարուել այնպէս, ինչպէս որ մենք վարուեցանք խակապէս [2])։

Բայց ավաղ, ազդեցութիւնը թոյլ եղաւ, որովհետև ոչ խակապէս պաշտօնական բողոք չէր, խակ բողոքին համաձայն չէին

1) Այդ ուրուագծի մէջ, որ չկարողացաւ ընդունել փոքրամասնութիւնը, դեռ ևս չէին մուծուած նշանաւոր խօսքերը—«non autem ex consensu ecclesiae», այսինքն պապի հաւատի որոշումները տնսխալական են անկախ այն հանգամանքից թէ արդեօք համաձայն են դոքա եկեղեցու վարդապետութեան թէ ոչ։ Այդ խօսքերը մուծուած են կաթոլիկական հաւատի որոշումների մէջ առանց որ և է վիճաբանութեան, այն է հակառակ փոքրամասնութեան խնդիրներին և առաջարկութիւններին։

2) Յուլիսի 17-ին, այսինքն ժողովի վերջին նիստի և նոր դաւանանքների հրատարակման նախընթաց օրը փոքրամասնութիւնը կազմում էին ոչ թէ 88 այլ 56 եպիսկոպոս։ Այդ եպիսկոպոսները, որոնք ամենահին, ամենաբազմամարդ և ամենալուսաւորուած վիճակների ներկայացուցիչներն էին, վճռելով չը ներկայանալ վերոյիշեալ նիստին նոյն ամսաթուին ուղղեցին պապին հետևեալ զեկուցումը։

Ս ո ւ ր բ Հ ա յ ր։

«Սոյն ամսի 13-ի ընդհանուր ժողովում մենք տուինք մեր ձայնը Քրիստոսի եկեղեցու առաջին դաւանաբանական որոշման ծրագրի մասին։

«Ձեր Սրբութիւնը գիտէ, որ 88 Հայրեր իրենց խղճից և դէպի Քրիստոսի եկեղեցին ունեցած սիրուց դրդուած «ոչ» ձայն տուին, միւս 62-ը հետևեալ կերպով արտայայտեցին իրենց ձայնը. «այո՝ եթէ ծրագիրը մեր պահանջների համեմատ կը փոխուի (placet juxta modum)». վերջապէս մօտ 70 Հայրեր բացակայ էին ժողովից և ձայն չը տուին։ Սորա վերայ

նոքա՝ որոնք որոշել էին յամենայն դէպս հնազանդել։ Մեր գերբաւոր զեկուցումը միայն ուշադրեց վերջնական որոշումը։ Այդ որոշումը անհրաժեշտ պէտք է իրագործուի՝ երբ մեզանից պահանջեն՝ որ մենք ընդունենք նորահնար դաւանութիւնը և տարածենք։ «Այս դէպքում մենք պայմանաւորուեցանք Հռոմում՝ որ ոչ ոք չշտապի առանձին գործել՝ այլ ընդհակառակն որոշեցինք՝ որ իւրաքանչիւր ազգի եպիսկոպոսները նախապէս գումարեն իրենց ժողովները և ամեն մի ազգ միւսի հետ բանակցութեան մէջ մտնի»։ Բայց ահա լսում եմ՝ որ Ֆրանսիացիք արդէն հնազանդել են՝ որին գժուարանում եմ հաւատալ և որ կեօլնի արքեպիսկոպոսն արդէն հրատարակել է նորահնար դաւանութիւնը և բաժանուել է փոքրամասնութիւնից։ Միւսների մասին էլ նոյնն եմ լսում։

«Թէ ինչ պէտք է անեմ այսուհետև՝ այդ ինձ համար պարզ է։ Ես համաձայն եմ իմ եկեղեցական ժողովի և փակուլտետի (Տիւբինգենի) հետ։ Նախ և առաջ ես չեմ շտապի պատասխանելու և ամեն կերպ կաշխատեմ ժողով կազմել մեր գերմանացի ընկերներից։ Իսկ այնուհետև՝ է՜ էրբէ՜ չէ՞մ ընդունի նորա-

պէտք է աւելացնել և նոցա՝ որոնք հիւանդութեան և այլ յարգելի պատճառներով վերադարձան իրենց վիճակները։

«Այսպիսով Ձեր Սրբութեան և ամբողջ աշխարհին յայտնի է մեր ձայնը և պարզ է՝ թէ որքան եպիսկոպոսներ համակրումեն մեր կարծիքին և այսպիսով մենք կատարեցինք մեր պարտականութիւնը։

«Այդ ժամանակից յետոյ ոչինչ չը պատահեցաւ՝ որ կարողանար փոխել մեր կարծիքը՝ ընդհակառակն՝ շատ և նշանաւոր բաներ պատահեցան՝ որոնք թոյլ չեն տալիս մեր մտադրութիւններից յետ մնալ։ Եւ այդ պատճառով էլ յայտնում ենք՝ որ մենք նորոգում և հաստատում ենք մեր տուած կարծիքը։

«Հաստատելով այս գրաւոր զեկուցմամբ մեր ձայնատուութիւնը՝ մենք որոշեցինք չը ներկայանալ ամսոյ 18-ին լինելիք նիստին։ Որովհետև որդիական սէրը և ակնածութիւնը՝ որ առ ոտս Ձեր բերին մեր ներկայացուցիչներին՝ թոյլ չեն տալիս մեզ Ձեր Սրբութեան անձնաւորութեան վերաբերող գործում հրապարակաւ և Ձեր առաջ ոչ ասել»։

Ապա մի քանի խօսք եպիսկոպոսների իրենց վիճակները շուտ վերադառնալու պատճառի մասին և ստորագրութիւններ։

հընար դա-ան-ի-նը ա-ան՝ ոչ պահանջած ահմանափակ-մնէրէ և ոչ դէպ կը դերժէմ ժողովի կանոնական-ի-ն ու ապա-ի-նը։ Թող հռոմայեցիք զրկեն ինձ պաշտօնակատարութեան իրաւունքից։ Թող մերժեն եկեղեցուց և միճակաւոր առաջնորդ ուրիշին նշանակեն։ գուցէ Աստուած այնքան ողորմած կը լինի՝ որ կուրի ասպարէզից կը հեռացնէ եկեղեցու խաղաղութիւնը փրդոլոլին... Այժմ կարևոր է 1) որ գերմանական՝ աւստրիական և հունգարական եպիսկոպոսներից որքան կարելի է շատերը հրաժարուին հնազանդելուց՝ 2) որ գիպանականներէրը մնանոյ ժամանակ հեր-փեն ժողովի պրոշ-մնէրէ պարտա-որեցա-ցնէ լինելը այն պատճառով՝ որ ժողովը ոչ ազատ էր և ոչ էլ մնբէան...»։

Հեֆելէ եպիսկոպոսը՝ ինչպէս երևում է՝ այս նամակով խրախուսում է գիտականներին՝ որ մերժեն Վատիկանի ժողովը իւր նոր հաւատի որոշումների հետ միասին։ Երբ գերմանական եպիսկոպոսներից մի քանիսը ժողովուեցան Ֆուլդում և համաձայնեցան հպատակել հրովարտակներին և նոցա տարածել՝ Հեֆելէն խիստ կերպով նոցա պախարակեց՝ որ մոռացան իրենց Հռոմում գրած պայմանը։ «Նոքա կարծես թէ մոռացան»՝ գրում է նա Դեօլլինգերին Սեպտեմբերի 14-ին Ֆրիդրիխսհաֆէնից «թէ՝ Հռոմում ինչ էին անում և ինչ էին խօսում... Ես չեմ կարող ասել այո՝ ուր հարկաւոր է ասել ո՛չ և կամ ընդհակառակն չեմ կարող ասել ոչ որտեղ հարկաւոր է ասել այո... Ի՞նչ առաջ-ա-ծայնն յայտնո-ի-ն ի՞նչ համարձակն այն՝ ինչ որ ճշմարիտ էլ՝ ես այդ բանը չեմ կարող անել— non possum»։

Հեֆելէն դարձեալ շարունակում է պահպանել իւր հակատիկանեան համոզմունքները և այս երևում է նորա 1870 թուի Նոյեմբերի 11-ի նամակից՝ որ նա գրել էր իբրև պատասխան Բոննայում կազմուած մասնաժողովին՝ որի նպատակն էր փոքրամասնութեան պատկանող գերմանական եպիսկոպոսներին գրգռել նորահնար վարդապետութեան դէմ եղած շարժման գլուխ կանգնելու։ «Ինչպէս Հռոմում՝ այնպէս էլ Բոտենբուրգում չեմ կարող չը խոստովանել՝ որ նոր դա-ան-ի-նը դ-ի է շշմարիտ բնական և ա-ա-դական հիմունքներից։ Նա դեռ վնասներ է հասցնում եկեղեցուն՝ այնպէս

ոչ վերջին։ երբէ՛ւ չէ ենթարկուել ա՛ելի խիստ և օրհասական հարուածի ենչպէս այս տարուայ Յունիսի 18-ին։... Հանարեա բոլոր գերմանական եպիսկոպոսները, այսպէս ասած՝ մի գիշերուայ մէջ փոխեցին իրենց համոզմունքները և նոցա մի մասը անցաւ անսխալականութեան կողմը, որ ստեղծուած է հալածանքի ոգով... Ես չեմ հրատարակելու վիճակիս մէջ նոր դաւանանքը. միայն մի քանի եկեղեցականներ են, որ քարոզում են վիճակումս անսխալականութեան ոգով։ Ժողովրդիս շատ մեծ մասը չէ՛ ճանաչում նոր դաւանութիւնը, և ի բաց առեալ մի քանի ազնուականներ՝ ամենևին չէ՛ մտածում նորա մասին և շատ գոհ է, որ եպիսկոպոսը լռում է այդ մասին»։

Կեօլնի Մելխերս արքեպիսկոպոսը արդէն սկսել էր պատժել վատիկանի հրովարտակներին չհնազանդուող քահանաներին, որոնցից մէկին քաջալերելով՝ Հեֆելէն 1870 թ. Դեկտեմբերի 3-ին ի միջի այլոց գրում է. «Նուիրապետութիւնն իսկապէս ցանկութիւն ունի ԺԹ դարում տեսնելու դարձեալ հաւատաքննական խարոյկներ։ Այդ տեսակ խարոյկներ, այդ տեսակ տանջանքները ձեղանում արդէն շատ շատ են։ Ինչ որ ձեր գլխին է եկել, նոյնն էլ ինձ է սպասում։... աղօթենք փոխադարձաբար, որ Աստուած սրտապնդութիւն (spritus fortitudinis) տայ մեզ...» Բայց Հեֆելէի այդ արիական ոգին էլ սկսեց թուլանալ։ 1870 թ. Դեկտեմբերի 17-ին նա գրում է Դեօլլինգերին, թէ բոլոր գերմանական և աւստրօ-ունգարական եպիսկոպոսները արդէն հնազանդուել են և թէ հաւանական է, որ ինքն էլ շուտով կը զբաղուի իւր պաշտօնից։ Շուլտէի նոր հրատարակած «Հռոմի եպիսկոպոսների իշխանութիւնը» շարադրութեան առթիւ Հեֆելէն 1871-ի Յունուարի 25-ին նկարագրում է Դեօլլինգերին, թէ ինչ տեսակ նեղութիւնների է ենթարկում Հռոմը նորա հօտը, ազգակցութեան որոշ աստիճաններում ամուսնութեան առիթով, բայց այնուամենայնիւ նա գտնում է իւր մէջ բաւականին ոյժ և այսպէս է արտայայտում իւր միտքը. «Դժբաղդաբար ստիպուած եմ Շուլտէի հետ միասին կրկնելու՝ շատ տարիներ ապրել եմ անհնարին խաբէութեան մէջ...։ Ես կարծում էի թէ ձա-

ռայում եմ ոչիղձական եկեղեցու, բայց նկատեցի ձառայելեմ նոր ապաստաղաշտ պապկերին, որ բոմանիզմի և եպիսկոպոսական արքունի է։ Միմիայն Հռոմում ես պարզ տեսայ, որ այն ամենը, ինչ որ այնտեղ կատարում և ինչ բանում վարժուում են՝ քրիստոնէութեան միայն սուտերն է, միայն կեղևն է. միջուկը անյայտացել է և ամենայն ինչ դարձել է լոկ ծիսականութիւն»։

Ո՞վ կարող էր կարծել, որ հռչակաւոր Հեֆելէի նման գիտնական և համոզուած եպիսկոպոսը ընդունակ լինէր ի՛ր խղճին հակառակ ենթարկուել վատիկանի հրովարտակներին։ Աւա՜ղ նա էս նոցա ենթարկուեցաւ, այն էլ իւր խղճին հակառակ...։ Այդ բոլոր նամակների վերջինից մի քանի շաբաթ յետոյ նա հովուական թղթով յայտնեց իւր հօտին, թէ նոր հրովարտակները ապաշաւոյցանելի ճշմարտութիւններ են... իսկ մի քանի տարուց յետոյ փորձեց Դեօլլինգերին էլ ենթարկել վատիկանի եկեղեցուն և այնքան համարձակութիւն ունեցաւ, որ այդ նպատակով նորան մի առանձին նամակ գրեց... 1)։

Այս այն նամակն էր, որ ստագրեց Ռէյշը և որին չը պատասխանեց Դեօլլինգեր։ Եւ միթէ կարելի՞ էր պատասխանել։

Պ. Ի. ԵԱՆԻՇԵԻ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՑԱՌԱՋԱՐԱՆԸ։

1886-ի Հոկտեմբերի 2-ին հանգուցեալ Դեօլլինգերը գրում էր ինձ.

«Վերջերումս մէկը միւսից յետոյ ստացայ զանազան կողմերից

---

1) Որ Հեֆելէն իւր ժողովների պատմութեան նոր հրատարակութեան նոյնպէս և միւս հռոմէական—կաթոլիկական պատմաբանները—ինչպէս օրինակի համար Kraus իւր եկեղեցական պատմութեան նոր հրատարակութեան ժամանակ՝ փոխումէին, որտեղ այդ պահանջումէր համաձայն նոր դաւանութեան, որ ընդհանրապէս դաւանանքը պատմութիւն է ստեղծում—այդ իրողութիւն է, որ յայտնի է ամբողջ գիտնական աշխարհին և մասնաւորապէս պարզ նշանակած է Միւնխենում հրատարակուող «Deutscher Merkur»-ի մէջ։

երկու նամակ. մինը Միւնխենի արքեպիսկոպոսից (քաղաքավարի և վայելուչ ձևով), իսկ միւսը՝ Հեֆելէից, որոնք երկուսն էլ գրել էին պապի կողմից և յորդորում էին հնազանդել: Ես ինքս զգում եմ, որ քանի դեռ կենդանի եմ, պարտաւոր եմ ներկայացնել աշխարհին մի պատճառաբանական զեկուցում: Շատ բան է մնում ասելու մեր գործի վերաբերմամբ, որ մինչև այժմ չէր ասուած և թէպէտ երբեմն. արտայայտուել էլ է՝ այն էլ մեղմ կերպով: Ուռանձին հրատարակութեամբ ես այդ բանը չեմ կարող անել. ընդհակառակն ստիպուած եմ լրիւ ներկայացնել շատ ապացոյցներ և իրողութիւններ (aciem argumentorum et factorum instructam): Հարկ եմ համարում հաղորդել և իմ Հռոմ այցելելը և այն ամենը, ինչ որ այնտեղ տեսել եմ: Ես առ այժմ լաւ խորհել եմ ամեն բան. նիւթերը հաւաքուած են...: Այդ ես կարտայայտեմ նամակների մի շարքով, որոնք ուղղուած կը լինին մի բարձրաստիճան եկեղեցականի (прелатъ), որի անունը չեմ կարող տալ մի քանի պատճառներով: Այդպիսի ձևը աւելի ազատութիւն է տալիս: Վերնագիրը, կարծում եմ, կը լինի՝ «Վատիկանի հրովարտակները պատմութեան առաջ»: Ի միջի այլոց ես մտադիր եմ Հռոմի գահի վարդապետական պատմութեան քննութիւնն անել, նորա սկզբից մինչև մեր օրերը: Սորա մէջ պէտք է բացատրեմ և հարկաւոր եղած դէպքում պէտք է քննադատեմ այս կամ այն պապի հրատարակած և քիչ թէ շատ նշանակութիւն ունեցող «decreta fidei et morum»-ները, ինչպէս յայտնի է՝ սորա նման մի բան դեռ եղած չէ: Վերոյիշեալ նամակները և յորդորները ստացած օրից մինչև այժմ՝ ամեն օր և համարեա ամեն ժամ զբաղուած եմ այդ ծրագրով, այնպէս որ չեմ կարողանում ուրիշ գործով լուրջ զբաղուել: Մասամբ այդ և մասամբ էլ ուրիշ արգելքների պատճառով չը կարողացայ խոստմանս համեմատ ուղարկել Իգնատիոս պապի մասին յօդուածս: Ծրագրի մասին խորհրդածութիւններս, իրողութիւնների և վարդապետութիւնների բազմութիւնը, որոնք անհրաժեշտ են նամակների համար և որոնք անհրաժեշտ խառնւում են յիշողութեանս մէջ՝ այս բոլորը այնպէս է ճնշում ինձ այս

շաբաթներումս, որ ես կարծես թէ գտնւում եմ մոռաւոր հեղեղի մէջ: Այժմ վերջացնելով այդ բոլորը՝ ես ինձ ի ներքուստ զգում եմ ազատ և տրամադիր սկսելու Իգնատիոսի մասին աշխատութիւնը»[1]):

Այդ նամակների նախապատրաստական աշխատութիւնները գտան հանգուցեալի թղթերի մէջ, որոնց մշակութեան նա դեռ ևս չէր ձեռնարկած, հաւանօրէն միւս աշխատութիւնների պատճառով:

1887 թուի Հոկտեմբերին Դեոլլինգերն ինձ ցոյց տուեց այն նամակը, որ նա ստացել էր այն ժամանակուայ նուիրակից (պապի) և իւր գրած պատասխանը: Ցոյց տուեց նոյնպէս և այն երկար նամակը, որ նա գրել էր մի քանի ամիս առաջ Միւնխենի հանգուցեալ եպիսկոպոսին: Միևնոյն ժամանակ յայտնեց, որ մտադիր է յարմար դէպքում տպագրութեան յանձնելու նուիրակին և արքեպիսկոպոսին գրած նամակները, մի բարձրաստիճան տիկնոջից և մի միանձնուհուց ստացած նամակների (որոնցով փորձել էին նոքա դարձի բերել նորան՝) պատասխանները, որովհետև Դեոլլինգերի գրած պատասխանները իւր՝ վատիկանի հրովարտակների վերաբերմամբ ունեցած վարմունքը արդարացնելու գործում՝ մէկը միւսին լրացնում են: Հետևաբար հանգուցեալի մտադրութիւններին հակառակ չի լինի, եթէ վերոյիշեալ երեք պատասխանները՝ նուիրակին, արքեպիսկոպոսին և բարձրաստիճան տիկնոջ—միանձնուհուն գրած նամակը չէ գտնուած Դեոլլինգերի թղթերի մէջ—այժմ հրատարակուին այն նամակների հետ, որոնց առթիւ գրել է նա իւր պատասխանները:

Հակառակ իմ սկզբնական ցանկութեանս հրամայեցի տպագրել նոյնպէս Հեֆելէ եպիսկոպոսի նամակը նախ այն պատճառով, որ այդ բանին հմտաձայն էր ինքը հեղինակը և երկրորդ, որ մի յօդուածում, որ արտատպուեցաւ շատ թերթերում՝ նորա մասին տուած էր թէ Դեոլլինգերի բարեկամները չեն համարձակուի

---

1) Վերոյիշեալ «կարդինալ Բելլարմինի ինքնակենսագրութեան» համար։

հրատարակել այդ նամակը, որ, ինչպէս վերևում տեսանք՝ մնացել էր անպատասխան։

Անպատեհ չի լինի կազմել մի հաւաքածու այս դեռ ևս չը տպագրուած նամակներից և նախապէս առանձին առանձին տպագրուած նոյնանման նամակներից և զեկուցումներից։ Վերջում զետեղուած է մի հետաքրքիր նամակ նման բովանդակութեամբ, այդ նամակը գրուած է աւելի վաղ ժամանակում։

Ֆ. Գ. ՐԷՑՇ.

Բոննա. Ցունվ. 1890 թ.։

Ժողովի եպիսկոպոսների համար խորհրդածութիւններ պապի անսխալականութեան հարցի վերաբերմամբ։

Հոկտեմբեր, 1869 թ. 1)։

Ա.

Անցեալ դարերում երբ որ և է նորամուծութիւնների փորձեր էին լինում, կաթուղիկէ եկեղեցին իւր վարդապետութեան հնութիւնն ու անփոփոխութիւնն էր հակադրում նոցա։ Միևնոյն ժամանակ նա մեծ առաւելութիւն և որբաղան պարտք էր համարում, որ նորա ծոցում ուսուցանէին և դաւանէին այն՝ ինչ որ բոլորը միշտ և ամեն տեղ հաւատացել են։ Եթէ մի որ և է վարդապետութեան մասին կարելի լինի ապացուցանել, թէ նա երկար դարերի ընթացքում գոյութիւն չէ ունեցել և կամ չէ եղել ամբողջ եկեղեցու դաւանութիւն, թէ նա սկիզբն է առել յայտնի ժամանակ և թէ հաւատոյ միւս դրութիւնների մէջ չէ պահպանուել ծածուկ կերպով իբրև վերջինների անհրաժեշտ հետևանք—այն ժամանակ այդ ուսմունքը կաթոլիկական տեսակէտով դատապարտուած է, պարզապէս կրում է իւր վերայ ապօրինութեան կնիք, երբէք չէ կարող ճանաչուել իբրև ճշմարիտ հաւատ և պէտք էլ չէ, որ այդպէս ճանաչուի։

Այս բոլորը կարելի է ասել և պապի անսխալականութեան մասին։ Նախ՝ պապի անսխալականութիւնը շատ դարերի ընթացքում ամենևին յայտնի չէր եկեղեցուն։ Բաւական է եթէ միայն մտաբերենք արևելեան եկեղեցին, որ մօտ 1000 տարի միացած էր արևմտեանի հետ, ուր գումարուել են բոլոր տիեզերական ժողովները, որտեղ գլխաւորապէս տեղի են ունեցել Երրորդութեան և մարդեղութեան վարդապետութիւնների հաստատման վերաբերեալ վէճերը, որը յաղթեց մէկը միւսից յետոյ բոլոր հին մոլորութիւններին և ստեղծեց ինքնուրոյն եկեղեցական գրականութիւն։ Իսկ այդ եկեղեցում ոչ մի ժամանակ չէ լսուել և ոչ մի ձայն, որ վերագրէր պապին դաւանաբանական անսխալականութիւն։ Մինչև անգամ Պերրոնէն էլ ոչ մի ապացոյց չէ կարող բերել այդ բանի մասին արևելեան եկեղեցու պատմութիւնից 1)։

Նոյն իսկ արևմտեան եկեղեցու պատմութեան և գրականութեան մէջ ապացոյց չէ կարելի գտնել այդ բանի մասին։ Այն

---

1) Այս հատուածը գտնուեց Մանցի մօտ Միւնխենում առանց հեղինակի անուան։ Մի նամակի մէջ (1869 Նոյեմբեր 25) Դեոլլենգեր ասում է. «գրքոյկը՝ «Կշռադատութիւն և այլն», ձեզ կը հասնի։ Դրութիւնները մուծուած են մեծ մասամբ որպէս անապացոյց հաստատութիւններ։ Փարիզից և ուրիշ տեղերից ինձ նկատեցին, որ անհրաժեշտ են վկայութիւններ և պատմական մանրամասնութիւններ այն բանի վերաբերմամբ, ինչ որ այստեղ այդպէս լակոնական ոճով հաստատուում է։ Այժմ ես զբաղուած եմ զբաղուած և մօտ ժամանակներում կը հրատարակեմ բաւականին մեծ ծաւալով յաւելուած»։ Այդ յաւելուածը լոյս չտեսաւ։

Ծանօթ. Այս և միւս բոլոր հետևեալ ծանօթութիւնները, որ նշանակուած չեն Թարգ. բառով, պատկանում են «Նամակների և յայտարարութիւնների» հեղինակին

Թարգ.։

---

1) Պերրոնէն «Tractatus de locis theologicis», 1. 510, ed. Lovan, թէև հիմնւում է Օրիգինէսի վերայ, բայց աղաւաղելով նորա բնագիրը և մտքերը։ Նոյնպէս անազնիւ է նորա հիմնուելը Կիւրեղ Աղէքսանդրացու վերայ, որի խօսքերը սա աւելի լաւ է համարում մէջ չբերել։

կորների մէջ, որ Պերրոնէն, Շրագէրը և միւս եղուիտները քաղել են լատին հայրերի շարադրութիւնների միջից՝ չը կայ և ոչ մինը, որ գոնէ մի քիչ պարզ և որոշ կերպով յատկացնէր պապին այդ բարձր աստուածային առաւելութիւնը։ Ընդհակառակն բազմաթիւ ասացուածներ կարելի է բերել սուրբ հայրերից, որոնք ուղղակի կամ աներկբայ ենթադրութեամբ մերժում են պապերի այդ արտօնութիւնը և հաւատոյ ճշմարտութեան վերաբերեալ վճիռները ամբողջ եկեղեցուն են վերագրում։

Բ.

Հին հերետիկոսներից ոչ մէկը չէ ուսել և չէ վերջացրել իւր գործունէութիւնը մերժելով պապի հեղինակութիւնը հաւատի գործերի մէջ. իսկ այս կարելի է բացատրել միմիայն նորանով, որ պապերը բարձրագոյն հեղինակութիւն չեն ունեցել. ոչ ոք դորան չէր հաւատում և ոչ ոք չէր դիմում այդ հեղինակութեան, թէպէտև այն իրողութիւնը, թէ Հռոմը առաքեալների արևմուտքում հաստատած աթոռներից միակն էր և շատ եկեղեցիների մայր՝—այդ իրողութիւնը նորան աւելի յարգանք և նշանակութիւն էր տալիս արևմուտքում քան արևելքում։

Գ.

Եկեղեցու հայրերի՝ 1) Տերտուղիանոսի, Օգոստինոսի, Գեննադիոսի և Վիկենտիոս Լիրինացու շարադրութիւնների մէջ, որոնք խօսում են եկեղեցու հեղինակութեան և հաւատոյ կանոնների մասին՝ ամենևին չէ յիշւում Հռոմի գահի դատակնիքի և պապերի վճիռների մասին. չը կայ մի ակնարկ թէ երբ և ինչ գոյութիւն է ունեցել հաւատի ուսման մասին եղած վէճերը դադրեցնելու այնպիսի մի պարզ միջոց, ինչպիսին է պապի անսխալ վճիռը։ Վերոյիշեալ հայրերը ընդունում են միայն եկեղեցու ա-

2) Հեղինակը խիստ զանազանութիւն չէ դնում եկեղեցու «հայրերի» և «վարդապետների» ինչպէս և «սրբերի» և «երանելիների» մէջ, ինչպէս այդ ուղղափառ աստուածաբանների սովորութիւնն է։ Թարգ.։

ւանդութիւնը իւր երեք պայմաններով ու յատկանիշներով, որոնք են՝ հնութիւն, ամենուրեքութիւն և ընդհանուր համաձայնութիւն։

Դ.

Բացի դորանից պապի անսխալականութեան վարդապետութիւնը երևան եկաւ միայն վերջին ժամանակներս, այն էլ կեղծ թղթերի և հնարած պատմութիւնների շնորհիւ։ Թովմա Ակուինատացին 1) էր, որ առաջին անգամ ԺԳ. դարու վերջերում այդ վարդապետութիւնը մտցրեց դպրոցական աստուածաբանութեան մէջ, ինքն էլ մոլորուած էր այս նոր ստութեամբ։ Ինչպէս երևում է Բելլարմինից, աստուածաբանները այս վարդապետութիւնը աւելի հին ցոյց տալու համար մինչև ԺԷ դարի վերջերն անգամ օգտուում էին կեղծիսիդորեան և ուրիշ կեղծ թղթերից։

Ե.

Անսխալականութեան վարդապետութեան կուսակիցների համար եկեղեցու առաջին հազարամեակի պատմութիւնը պէտք է ներկայանայ իբրև մի անլուծանելի հանելուկ։ Հաւատի վարդապետութեան վերաբերեալ եղած վէճերի ամբողջ ընթացքը, սոցա աւելորդութիւնը և խճճուած դրութիւնը նոցա համար անբացատրելի է։ Ամբողջ դարերի ընթացքում աշխատել և չարչարուել են, որպէս զի տաժանելի ճանապարհով և մեծ զոհաբերութիւններով աւելի պարզ կերպով և աւելի շուտ ձեռք բերեն այն՝ ինչ որ աւելի հեշտ կարելի կը լինէր ձեռք բերել, եթէ պապերը անսխալական լինէին։ Եթէ, ինչպէս նոքա կարծում են, ամբողջ եկեղեցին ընդունէր պապի անսխալականութիւնը՝ այն ժամանակ մի որ և է վիճելի հարցի հէնց սկզբից կարելի կը լինէր այդ վէճերի և շփոթութիւնների առաջն առնել։ Իւրաքանչիւր կաթոլիկ իսկոյն կը հնազանդէր անսխալ վճռին, իսկ նոքա, որոնք չէին հնազանդի՝ կամ կը մերժուէին եկեղեցուց

1) Միայն Հռոմի եկեղեցին է ճանաչում սուրբ։ Թարգ.։

և կամ իրենք կը բաժանուէին։ Սակայն իսկապէս ամեն ինչ բոլորովին այլ կերպ էր կատարւում։ Առհասարակ կանչում էին աշխարհի ամեն կողմից եպիսկոպոսներին, նոցա ստիպում էին յանձն առնել երկար յոգնեցնող ճանապարհորդութիւն—որ վնաս էր եկեղեցուն նոցա իրենց վիճակից երկար ժամանակ բացակայ լինելուն պատճառով՝—և այս բոլորը նորա համար, որ զանազան վտանգների և գայթակղութիւնների ենթարկուած մեծ ժողովներում կարողանան հասնել այն եզրակացութիւններին և վճիռներին, որոնք, անսխալականութեան պաշտպանների ասելով՝ իրենց բոլոր ոյժն ու հեղինակութիւնը պապի համաձայնութիւնից էին ստանում։ Մինչև անգամ իրենք պապերը, ինչպէս որ արեց Լեոն՝ յայտնում էին թէ անհրաժեշտ է տիեզերական ժողով գումարել, կամ նոցա կարծիքը հարցնողներին ժողովի վերայ էին մատնացոյց անում՝ ինչպէս այդ արեց Սիրիցիուս պապը։

Պապի անսխալականութեան գլխաւոր պաշտպան Օրսի կարդինալը (ծիրանաւոր) ասում է թէ Հռոմի կայսրներն են եղել պատճառ, որ հին եկեղեցում յառաջ էր գալիս ժողովների «անօգուտ աղմուկը»։ Բայց չէ՞ որ այդ կայսրները ժողով գումարելիս գործում էին եպիսկոպոսների և երբեմն էլ նոյն իսկ պապերի խորհրդով և թէև այդ կայսրներին երբեմն շատ խիստ պախարակում էին նոցա եկեղեցու գործերի մէջ ունեցած իշխանութիւնը ի չարը գործ դնելու համար՝ սակայն ամբողջ 1000 տարուայ ընթացքում ոչ մի յանգիմանական խօսք չէ լսուել այն բանի համար, որ նոքա իբր թէ պապին պատկանած վճիռների իրաւունքը տուած լինին ժողովներին։ Ամբողջ քրիստոնէական աշխարհը հաւատի վերաբերեալ հարցերը ժողովով որոշելը համարում է միակ ուղիղ և եկեղեցու կանոններին համաձայն ճանապարհ։

Զ.

Այս իսկ պատճառով երբէք չէ կարելի հաստատել թէ պապի անսխալականութեան վարդապետութիւնը հետևանք է դաւանաբանական զարգացման գործողութեան, որ եկեղեցու մէջ յառաջ է գալիս ներքին պահանջներից։ Այս նոր կարծիքը հնի կանոնաւոր հետևողութիւն չէ, բայց որպէս հակասութիւն, որպէս մերժումն նախկին վարդապետութեան և որպէս հաստատութիւն նորի, որ իրեն դնում է հնի տեղ՝ բոլորովին տարբեր է նորանից և երբէք չէ համաձայնում նորա հետ։

Հին վարդապետութիւնն ասում է. Աստուծոյ եկեղեցուն առաջնորդելը և պահպանելը նորանից է երևում, որ եկեղեցին, որպէս մի ամբողջութիւն՝ չէ կարող բաժանուել իւր հաւատից, որ նա չէ կարող իրեն հաւատացած ուսմունքը ոչ աղաւաղել և ոչ էլ կորցնել. հետևապէս ամբողջ եկեղեցուն և միմիայն նորան է պատկանում Աստուծոյ այն հովանաւորութիւնը և լուսաւորումն, որ մենք դաւանութեան և վճիռների անսխալականութիւն ենք անուանում և առանց որոնց Քրիստոսի խոստումները չէին կարող կատարուել։

Սորա հակառակն է հաստատում նորը. այն է՝ անսխալականութիւնը շնորհուած է ոչ թէ եկեղեցուն, այլ մի անձնաւորութեան—պապին. առանց նորան եկեղեցին մոլորութեան է դատապարտուած. միայն նա է որ ստանում է նորան ամեն տեսակ մոլորութիւնից պահպանող աստուածային առանձին լուսաւորութիւն, երբ նա ուսուցանում և յայտնում է իւր կարծիքը հաւատոյ մասին, և միմիայն նորանից (պապից) է ստանում եկեղեցին այն լոյն ու ճշմարտութիւնը, որ պապը հաղորդում է նորան։

Է.

Քրիստոնեայ աշխարհը աչքի առաջ ունէր իբրև օրինակ՝ Երուսաղէմի առաջին եկեղեցական ժողովի առաջին վիճելի հարցի որոշումը։ Նախնական ժամանակի նշանաւոր հարցը—հեթանոս

քրիստոնեաների համար Մովսիսականութեան պարտաւորիչ լինելու հարցը — Պետրոս առաքեալի հրամայական վճռով չէր, որ որոշուեցաւ — այլ ընդհակառակն առաքեալները և երէցները Երուսաղէմում բոլոր հաւատացեալների ներկայութեամբ երկարատև խորհուրդ կազմեցին և թէև Պետրոս ամենից առաջ յայտնեց իւր կարծիքը, սակայն ժողովի որոշումը նորա տուած ձայնի համեմատ չսահմանուեցաւ, այլ Յակոբոսի տուած ձայնի համեմատ և յայտարարուեցաւ բոլորի կողմից։

Ը.

Հաւատի հարցերի վերաբերմամբ եղած ժողովների վճիռները ամեն տեղ և ամենքը ընդունում էին առանց ուշադրութիւն դարձնելու թէ արդեօք դորա համար հարկաւո՞ր էր պապի հաստատութիւնը և կամ եղե՞լ է այդպիսի մի հաստատութիւն։ Արդեօք պապերը հաստատել են Նիկիոյ ժողովի որոշումները թէ ոչ՝ այդ յայտնի չէ. նոյնպէս և արիոսականութեան վերաբերեալ վէճերի մէջ ամենևին չեն դիմել Հռոմի գահի կարծիքին կամ դատողութեանը։ Կոստանդնուպոլսի 381 թուի ժողովին պապը չէր մասնակցել ոչ անձամբ և ոչ էլ իւր պատգամաւորների միջնորդութեամբ. սակայն ս. Հոգու վարդապետութեան մասին ժողովի տուած որոշումները ամբողջ եկեղեցին իսկոյն ընդունեց և Թէոդոս կայսրը հրատարակեց այդ որոշումները իբրև պետական օրէնքներ։ Այդ ժողովը վերին աստիճանի յանդուգն, պատասխանատու և մեծ բանի ձեռնարկեց. նա Նիկիական, առաքելական և ամբողջ եկեղեցու համար ընդհանուր հաւատի դաւանութեան խորհրդաւոր յաւելուածներ տուեց, և այս բանը նա արեց առանց պապի նախաձեռնութեան, առանց որ և է մասնակցութեան նորա կողմից։ Այս ժողովը իւր յաւելուածները կամ ընդհանրապէս իւր դաւանաբանական որոշումների վերաբերմամբ պապի համաձայնութիւնը ստանալու համար ոչ մի

քայլ չարեց [1]։ Այս բանից դուրս եկաւ այն՝ որ պապերը երկար ժամանակ չէին ուզում այդ ժողովն ընդունել կամ, աւելի ուղիղն ասած՝ իրենք իրենց հակասում էին այդ ժողովի հեղինակութեան մասին իրենց դատողութիւնների մէջ։

Թ.

Եթէ մի որ և է ժողովի գումարուելուց առաջ արդէն պապերը հաւատի հարցի մասին իրենց կարծիքը յայտնում էին՝ այն ժամանակ պապի թղթերը ժողովում ենթարկւում էին մանրամասն քննութեան, և եղրակացութեան նայելով՝ կամ ընդունւում էին (Լևոն պապի վարդապետական թուղթը Ֆլաւիանոսին, Քաղկեդոնում) և կամ մերժւում էին (Հոնորիոսի թուղթը վեցերորդ ժողովում)։ Եթէ պապերը համարուէին անսխալական, այն ժամանակ այդպիսի քննութիւնը նոցա իշխանութեան դէմ անտանելի ոտնձգութիւն կը լինէր։

Ժ.

Քրիստոսի աղօթքը Պետրոսի համար «...մի պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո» (Ղուկ. ԻԲ. 32) այնպիսի մի կտոր է, որ անսխալականութեան բոլոր պաշտպանները մեկնում են, թէ սա բոլոր պապերին անսխալականութեան մի խոստումն է նոցա՝ իրենց եղբայրների, այսինքն հաւատացեալների հետ վարուելու միջոցին։

Բայց այդպիսի մի մեկնութիւն նախ՝ հակառակում է հին եկեղեցու բոլոր աւանդութիւններին։

Երկրորդ՝ այդ մեկնութիւնը ոչնչացնում է այն երդումը, որ տուել է ամեն մի եպիսկոպոս և քահանայ [2]։

Երրորդ՝ այդ մեկնութիւնը հակառակ է Աստուածաշնչի մեկ-

---

1) Գրենոբլեան եպիսկոպոսի հաստատութիւնը նորերս լոյս տեսած «Le Concile oecuménique' 1869» թ. շարադրութեան մէջ՝ հիմք չունի։

1) Ի հարկէ հռոմէական եկեղեցում։ Ռ. Թ.։

նութեան բոլոր կանոններին և ոչ մի գիտնականօրէն զարգացած մեկնաբան չէ կարող ոչ ընդունել և ոչ էլ անել այդպիսի մի մեկնութիւն:

Չորրորդ՝ պատմական իրողութիւնների մի ամբողջ շարք հերքումն այդ մեկնութիւնը:

Այդ մեկնութիւնը հակառակ է եկեղեցու աւանդութիւններին: Բոլոր ս. հայրերը առանց բացառութեան այլապէս են հասկացել այդ տեղը. ոչ միայն նոցա Աստուածաշնչի մեկնութիւնների մէջ, այլ և միւս մնացած թղթերի մէջ (երբ առիթ էր լինում օգտուելու այդ տեղից) ոչ մի հետք չը կայ, որ եկեղեցու այս հին վարդապետներից գոնէ մէկը տիրոջ այս խօսքերի մէջ գտնէր պապի անսխալականութեան խոստում: Եկեղեցու հայրերը դիտմամբ շատ էին զբաղւում Ղուկասու ԻԲ գլխի 32 համարով: Մեզ ունինք ս. Կիպրիանոսի, Դեկարիոսի, Ոսկեբերանի, երկու աֆրիկական ժողովների՝ Կարթագէնի և Միլեւիի — Օգոստինոսի, Պալլատիոսի, Լեոնի, Թէոդորիդէսի և ուրիշ շատերի խորհրդածութիւնները, որոնք բոլորն էլ ընդունել են թէ այստեղ խօսքը հաւատի անհատական բարեմասնութեան մասին է, որ Պետրոսի և միւս առաքեալների մէջ ծանր փորձութեան միջոցին պիտի թուլանար և պղտորուէր — Պետրոսինը՝ ուրացութեան պատճառով և միւս առաքեալներինը՝ երկիւղի և անկարողութեան պատճառով — սակայն որը բոլորովին չի պակասի նոցա մէջ, այլ նորից կը կենդանանայ և կամրապնդուի աստուածային և Քրիստոսի բարեխօսութեամբ շնորհուած բարերարութեան օգնութեամբ: Քրիստոս իւր աղօթքով ստացաւ Պետրոսի և առաքեալների համար հաւատի հաստատութիւն դէպի Փրկիչը: Պետրոսն էլ իւր դարձից յետոյ պէտք է հաստատէր եղբայրներին այդ հաւատի մէջ — այսպէս են բացատրում և այսպէս են ուսուցանում ս. հայրերը: Սորանից բոլորովին տարբեր բան է եկեղեցական դատաստանի կամ հաւատոյ հարցերի որոշումների մէջ մոլորուելուց զերծ մնալը: Մարդ կարող է հաստատ կերպով հաւատալ Քրիստոսին, այնուամենայնիւ նա կարող է սխալ լինել այդպիսի հարցերի վճիռների մէջ, և այդ շատ է

պատահել. այսպէս. — ոչ ոք չի պնդի թէ Աֆրիկայի բոլոր եպիսկոպոսները, որոնք իրենց գլխաւոր ունենալով Կիպրիանոսին մերժումէին եկեղեցուց դուրս եղած մկրտութիւնը՝ արդէն կորցրին դէպի Քրիստոս ունեցած հաւատը և կամ ամենևին չունէին այդ հաւատը: Եւ ընդհակառակն՝ եթէ մի ինքերքուստ անհաւատ եպիսկոպոսին հարցնեն մի որ և է վարդապետութեան մասին՝ նա կարող է տալ բոլորովին ճշմարիտ և ուղղափառ որոշումն:

Հետևապէս այդ նոր մեկնութիւնը, թէ Քրիստոս իւր աղօթքով պապերի համար վարդապետական անսխալականութիւն ստացաւ՝ աղաւաղումէ բառերի իմաստը. և խօսքի կապը ստիպում է Քրիստոսին «հաւատ» բառը գործածել այդ գաղափարին բոլորովին օտար և նոր կատարանում անօրինակ նշանակութեամբ:

Որովհետև ա) «և դու երբեմն դարձցիս» նախադասութիւնը ապացուցանումէ, որ Քրիստոսի խօսքերը վերաբերումեն բացառապէս Պետրոսի անձնաւորութեան. որովհետև չէ կարելի մոռացել, որ ամեն մի պապի ժամանակ, ինչպէս և Պետրոսի ժամանակ՝ պատահէր բաժանումն հաւատից և դարձեալ վերադարձ դէպի նոյն հաւատը:

բ). Այստեղ Քրիստոս խօսումէ դէպի իւր մեսիական արժանաւորութիւնը և աստուածային առաքելութիւնը ունենալիք հաւատքի մասին: Մինչև անգամ եթէ ընդունենք, որ բնագիրը պարունակումէ իւր մէջ իւրաքանչիւր պապի համար խոստում, որով նա միշտ կը պահպանէր իւր հաւատը դէպի Քրիստոս՝ այնուամենայնիւ դորանով պապին ոչ մի գրաւական չէ տրւում, թէ եկեղեցու վարդապետութեան մի որ և է կէտի վերաբերմամբ նորա տուած իւրաքանչիւր վճիռը անսխալական պիտի լինի:

գ). Պետրոսին տուած խրատը, որ նա հաստատէ իւր եղբայրներին՝ նոյն իսկ իրեն Պետրոսին էլ չէ տուած այն մտքով, թէ նա յիրաւի կը կատարէ այդ խրատը իւրաքանչիւր դէպքում: Բառերի իմաստի բռնի աղաւաղում կը լինէր եթէ պարտքը յիշեցնելը կամ խրատելը հասկանայինք որպէս անդրժելի

խոստում՝ թէ Պետրոսը միշտ պիտի կատարէր իւր պարտքը։ Եթէ՝ մինչև անգամ՝ ընդունենք՝ որ Քրիստոսի նոյն խրատը վերաբերումէ միևնոյն ժամանակ և բոլոր պապերին՝ այնուամենայնիւ և առաւել դժուար կը լինի հաստատել թէ սորանով երաշխաւորութիւն է տրուում՝ որ նոցանից իւրաքանչիւրը ամենայն դէպքում յիրաւի կը կատարէ այդ խրատը։

Առաջինը՝ որ ճգնումէր մեկնել այս ընագիրը այն մտքով՝ թէ դորանով շնորհուումէ Հռոմայ գահին մի առանձին առաւելութիւն՝ էր Աղաթոն պապը 680-ին՝ երբ նա վախենումէր թէ իւր նախորդը — Հոնորիոսը — Կոստանդնուպոլսում կը դատապարտուի. բայց նա էլ աշխատեց իւր նոր և մինչև այժմ չլսուած մեկնութիւնը մեղմացնել՝ առարկելով թէ Հռոմում կատարեալ աստուածաբանական տգիտութիւն է թագաւորում։

Այնուհեաև կեղծ-Իսիդորը Աղաթոնի մեկնութիւնը վերագրեց աւելի հին պապերին՝ իսկ Գրացիանոսը տարածեց և օրէնքի զօրութիւն տուեց նորան և ահա այսպիսի ճանապարհով նա գործածութեան մէջ մնաց՝ թէև գիտնական աստուածաբանները և մեկնաբանները միշտ մերժել են այդ մեկնութիւնը։

Բայց որովհետև այդ մեկնութիւնը այդքան ուշ է հնարուել և բացի դորանից Պիոս Դ-ի երդմամբ ընդունած դաւանութիւնը Տրիդենտի ժողովի յայտնի կանոնի զօրութեամբ իւրաքանչիւր կաթոլիկի պարտաւորեցնում է հետևել եկեղեցու հայրերի՝ հետևապէս և առաջին վեց դարի հայրերի բիբլիական մեկնութեան՝ ապա ուրեմն ով որ վերոյիշեալ վկայութեամբ աշխատումէ հաստատել պապի անսխալականութիւնը՝ իւր ուխտը դրժումէ։ Վերջապէս եկեղեցական պատմութեան իրողութիւնները ապացուցանումեն՝ որ Քրիստոս Պետրոսին խրատելով երբէք չէ բարեհաճել դորանով պապերին տալ անսխալականութեան առաւելութիւն։ Որովհետև՝ եթէ յիրաւի այդ այդպէս լինէր՝ այն ժամանակ պէտք է՝ որ պապերը 1800 տարուայ ընթացքում շարունակ հաստատէին եղբայրներին իրենց հաւատքի մէջ և երբէք չպէտք է հաստատէին և հանդուրժէին որ և է սխալ բան։ Բայց այդ բանը ոչ մի մարդ լուրջ կերպով չէ հաստատում։ Այս բանը նոյնպէս չէ

կարելի վերագրել Պետրոսին՝ որովհետև նա Անտիոքում փոխանակ եղբայրների հաւատը հաստատելու՝ ընդհակառակը պղտորեց իւր կեղծաւորութեամբ՝ ինչպէս ասումէ Պօղոս։ Եթէ Զոսիման ընդունեց սկզբնական մեղքը մերժող դաւանութիւնը՝ եթէ Լիբերիոսը ստորագրեց արիոսական դաւանութիւնը և նոցա հետ եկեղեցական յարաբերութեան մէջ մնաց՝ եթէ Հոնորիոսը տիեզերական ժողովի դատաստանի համեմատ նպաստում էր միաբնակների (моноѳелиты) աղանդի տարածման և այլն՝ ապա ուրեմն ոչ ոք այս փաստերից չէ կարող եզրակացնել թէ պապերը այս գործերով հաստատել են իրենց եղբայրներին հաւատքի մէջ։

ԺԱ.

Այն վկայութիւնը՝ որ պապի անսխալականութեան պաշտպանները առանձին բաւականութեամբ և հաճոյքով բերումեն՝ վկայութիւնը՝ որ ըստ երևոյթին աւելի քան միւսները արտայայտումէ այն՝ ինչ որ ասումեն եկեղեցու ս. հայրերը՝ է Իրինիոսի շարադրութեան նշանաւոր հատուածներից մէկը։ Այդ վկայութիւնը սովորաբար ըմբռնումեն այն իմաստով՝ որպէս թէ Իրինիոս բարոյական պարտք է դնում իւրաքանչիւր մասնաւոր եկեղեցու վերայ՝ համաձայնելու հռոմէական եկեղեցու վարդապետութեան հետ։ Թէ որ աստիճանի սխալ են ըմբռնել Իրինիոսի յայտնած միտքը՝ այդ երևումէ հետևեալից։

Առաջին՝ այն միակ իրողութեան մասին — որ կարող է ծառայել իբրև յենակէտ վերոյիշեալ համաձայնութեան պարտականութեան համար — թէ Պետրոսին շնորհուած է վարդապետական առաւելութիւն՝ որը և անցնում է նորա բոլոր յաջորդներին՝ այդ բանի մասին Իրինիոսի շարադրութեան մէջ չենք գտնի և ոչ մի խօսք։ Այն առաւելութիւնները՝ որ նա վերագրում է Հռոմի եկեղեցուն՝ հետևեալներն են. տարածականութիւն (распространенность), հնութիւն և Պետրոս ու Պօղոսի ձեռքով հիմնուած լինելը՝ մինչդեռ՝ ընդհակառակը՝ պապի անսխալա-

կանութեան պաշտպանները միշտ ցոյց են տալիս Պետրոսին որպէս հռոմէական եկեղեցու միակ հիմնադիր։

Երկրորդ՝ հռոմէական եկեղեցու հետ համաձայն լինելու անհրաժեշտութիւնը երևում է նորանից, որ ամեն կողմի և երկրի հաւատացեալները հարկադրուած են Հռոմի աշխարհագրական դիրքի և զօրութեան պատճառով գտնուել այնտեղ և հետևապէս յարաբերութեան մէջ մտնել տեղական եկեղեցու հետ և նորա դաւանած վարդապետութիւնը պահպանել առաքելական պարզութեան մէջ իւր հետ բերած աւանդութիւնների հետ համեմատելով։

Իրինիոս ասում է. հռոմէական եկեղեցու ուսմունքը կամ աւանդութիւնը այն պատճառով պիտանի է հերետիկոսներին հերքելու համար, որ այստեղ, կենդրոնում հաւաքուող քաղաքակիրթ աշխարհի քրիստոնեաները, որոնք հետները բերում են իրենց հայրենի հաւատը, այս անընդհատ վկայութիւնների և իրենց (ասիական, եգիպտական և Պաղեստինի) աւանդութիւնները հռոմէականի հետ համեմատելով՝ պահպանում են նորան որ և է շեղումից։ Իրինիոսի խօսքը ոչ թէ եկեղեցու հետ համաձայնելու, այլ դէպի եկեղեցին հոսանքի մասին է։ (ոչ թէ convenire cum ecclesia-ի մասին է, այլ ad ecclesiam-ի մասին)։ Բոլորովին նոյնն է ասում Գրիգոր Նազիանզացին (2 դար յետոյ) տէրութեան նոր մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի մասին. «Կոստանդնուպոլիսը, ասում է նա, աշխարհի ակն է. Նորա մէջ է հաւաքում ամեն բան, ինչ որ բարձր և վսեմ է. և նորանից, իբրև հաւաքի շտեմարանից՝ դուրս է գալիս ամեն ինչ»։ Այսպիսով Իրինիոսի բնագիրը մի ապացոյց է ոչ թէ յօգուտ պապի անսխալականութեան, այլ ի վնաս. որովհետև Իրինիոս ոչինչ չէ իմանում այն արտօնութեան մասին, որ շնորհուած է եկեղեցուն և կամ նորա եպիսկոպոսին, իբրև Պետրոսի փոխանորդին. նա այս միայն գիտէ, որ այդտեղ է պահպանուել իսկական տիեզերական աւանդութիւնը, որովհետև աշխարհի ամեն կողմերից այնտեղ էին խմբուում քրիստոնեաները։ Հռոմէական եկեղեցու վարդապետութիւնը կախումն ունի միւս բոլոր եկեղեցիների՝ այսինքն կաթուղիկէ եկեղեցու վարդապետութիւնից։

Բացի դորանից վկայութեան մեկնութիւնը յօգուտ պապի անսխալականութեան հակառակում է նոյն իսկ անսխալականների հնարած սահմանափակումներին, որովհետև եթէ անսխալականութեան բիբլիական հիմքը եղբայրների հաւատը հաստատելն է՝ ապա ուրեմն պապը անսխալական պիտի լինի և այն ժամանակ, երբ նա միմիայն մի քանի եղբայրների հետ գործունի, օրինակ՝ երկուսի կամ երեքի հետ և կամ մասնաւոր եկեղեցիների հետ. մինչդեռ Բելլարմինը, Պերրոնէ'ն և շատ ուրիշները հաստատում են, թէ պապը միայն այն ժամանակ է անսխալական, երբ նա ամբողջ կաթուղիկէ եկեղեցու հետ գործունի [1])։

ԺԲ.

Եկեղեցու մեծ մասը 60 տարի շարունակ մերժել է Ստեփանոս պապի հրատարակած վճիռը հերետիկոսների կատարած մկրտութեան ազդեցութեան վիճաբանութեան մէջ։ Կիպրիանոս, որ ամբողջ աֆրիկական եկեղեցու հետ ի միասին չընդունեց Հռոմի վճիռը և մեռաւ՝ չնայելով դորան նոյն իսկ Հռոմում հին ժամանակներից սուրբ էր համարուում։ Այնքան քիչ էին մտածում անսխալականութեան արտօնութեան վերայ այն ժամանակ մինչև անգամ Հռոմում։ Դորանից յետոյ Օգոստինոս քանիցս անգամ արդարացրեց Կիպրիանոսի և աֆրիկական եկեղեցու վարմունքը նորանով, որ Ստեփանոս պապի յայտարարութիւնը, որքան էլ որոշ արտայայտուած լինէր՝ այնուամենայնիւ նա չունէր այնքան ոյժ, որ ուրիշին էլ պարտաւորեցնէր նոյնն ընդունելու և որ միայն Դ. դարում գումարուած տիեզերական ժողովի հեղինակութիւնն էր, որ վերջնականապէս վճռեց այդ հարցը ամբողջ եկեղեցու համար։ Այստեղ Օրսի կար-

---

1) Նոյն բանը հաստատում է վատիկանի ժողովը իբրև աստուածայայտնեալ դաւանութիւն։

Ռ. Թարգմ.։

դինալը իւր պաշտպանած պապի անսխալականութեան գաղափարին օգնելու համար կարողացաւ միայն այն անել, որ Օգոստինոսին յանդիմանութիւն կարդաց, որ եկեղեցու այս մեծ վարդապետը տիեզերական ժողովի հեղինակութիւնը շատ բարձրացնում, իսկ պապի հեղինակութիւնը շատ ստորացնում է: Այս հարցը դաւանաբանական շրջանում նշանաւոր հարցերից մէկն էր, որովհետև խորհուրդների ոյժի և աղդեցութեան պայմանների վարդապետութիւնը այս հարցի լուծումից կախում ունի:

ԺԳ.

Հոնորիոս պապը դադապարտուեցաւ Զ. տիեզերական ժողովում որպէս հերետիկոս: Ամբողջ եկեղեցին անմիջապէս, առանց հակաճառութեան ընդունեց այս դատապարտութիւնը. նոյն իսկ Հոնորիոսի յաջորդները ընդունեցին և ստորագրեցին այդ դատապարտութիւնը: Բացի Անաստաս գրադարանապետից ոչ ոք նորան պաշտպանելու համար մի խօսք չասաց. ոչ ոք չառարկեց թէ պապերը անսխալական են հաւատի գործերում: Շատ պարզ է, ուրեմն, որ այդ ժամանակ ամբողջ քրիստոնէական աշխարհը չէր էլ երևակայել այդպիսի անսխալականութիւն:

ԺԴ.

Պապի անսխալականութիւնն ընդունելու առաջին հիմքն էր այն դրութիւնը թէ «առաջին (Հռոմի) գահը չէ դատուում:

Այստեղից կամաց կամաց սկսեցին եզրակացնել՝ թէ ով որ հաւատի գործերի մէջ կարող է մոլորուել՝ ուրեմն նորան կարելի է դատել, այսինքն եկեղեցական դատաստանը կարող է նորա երեսը տալ նորա մոլորութիւնը: Իսկ եթէ պապին չէ կարելի դատել՝ ուրեմն այդ առաւելութիւնը մի ուրիշ հիմք էլ պէտք է ունենայ, այն է պապի անսխալականութիւնը: Բայց այդ վերոյիշեալ դրութիւնը առաջին հինգ դարերի ընթացքում հին եկեղեցուն ամենևին յայտնի չէր, այլ միայն կեղծիքի միջոցով է մտել եկեղեցու մէջ:

ԺԵ.

Կոնստանցի և Բազէլի ընդհանուր եկեղեցական ժողովները [1]) քանիցս անգամ մերժել են այդ դրութիւնը թէ «ոչ ոք չէ կարող դատել առաջին գահը» և նորա տեղ հաստատել են հակառակ վարդապետութիւն, թէ պապը, ինչպէս և իւրաքանչիւր քրիստոնեայ՝ հաւատի և եկեղեցու վերանորոգման գործերի մէջ ենթարկուած է տիեզերական ժողովին: Սորանով անսխալականութիւնը մերժուեցաւ—և մինչև այժմ պապի անսխալականութեան իւրաքանչիւր կուսակից ընդունում է այդ—որովհետև եթէ պապը յիրաւի ունենար այդ առաւելութիւնը, այն ժամանակ ժողովը, ինչպէս և ամբողջ եկեղեցին անպայման պէտք է հնազանդէին նորա վճիռներին:

ԺԶ.

Ամբողջ եկեղեցին[2]) և պապերը Կոնստանցի ժողովը ընդունել են ճշմարիտ տիեզերական[3]) և մանաւանդ պապերի մի ամբողջ շարք՝ Մարտինոս Ե., Եւգինոս Դ., Նիկողայոս Ե., Պիոս Բ., ճանաչել են այդ ժողովի Դ. և Ե. նիստերի հրովարտակները, որոնց ժողովը պապերից բարձր էր դասում՝ ճշմարիտ և օրինական: Ինչպէս որ ժողովում նոքա առանց որ և է հակաճառութեան հրատարակուեցան՝ այնպէս էլ ամբողջ եկեղեցում երեսուն տարի շարունակ նոցա դէմ ոչ ոք դուրս չէ եկել: Միմիայն շատ ուշ Տորկվեմադա և Կայէտան Հռոմի կարդինալները փորձեցին կասկածելի դարձնել այդ հրովարտակների նշանակութիւնը: Իսկ երբ, վերջապէս, եզուիտական կարգի աստուածաբանները սկսեցին այդ հարցով զբաղուել՝ այն ժամանակ բանն այնտեղ հասաւ, որ ամբողջ Կոնստանցի ժողովը մերժուեցաւ և տիեզերա-

---

1) Դեօլլինգեր ընդհանուր ասելով հասկանում է տիեզերական ժողովներ, թէև Ռուսաց եկեղեցին չէ մասնակցել այդ ժողովներին: Ռ. Թ.

— Իսկ Հայկական ուղղափառ եկեղեցին ընդունում է դրանցից միայն առաջին երեքը: Միաբ:

2) Ի հարկէ, միայն արևմտեան: Ռ. Թ.

3) Հայոց եկեղեցին, ինչպէս ասացինք, ընդունում է առաջին երեք ժողովները միայն՝ իբրև տիեզերական: Միաբան:

կան ժողովների կարգից ջնջուեցաւ։ Այս բանին նորերումս հետևեցին շատ եպիսկոպոսներ, որին հաղիւ թէ կարելի է հաւատալ։ Մինչդեռ Մարտին Ե. պապը իւր սեպհական մի կոնդակով յայտարարեց, թէ այդ ժողովը մերժողը հերետիկոս է և հրամայեց իւրաքանչիւրին, որ ենթարկուում է կասկածանքի հաւատի վերաբերմամբ՝ հարցնել. ճանաչո՞ւմ է նա արդեօք Կոնստանցի ժողովը տիեզերական և ընդունո՞ւմ է արդեօք այն ամենը, ինչ որ որոշել է այդ ժողովը։[1])

ԺԷ.

Այսպէս, ուրեմն, պապի անսխալականութեան ենթադրութիւնը ընդհանուր եկեղեցու ուսմունք դարձնելու համար անհրաժեշտ է նախ՝ մերժել Կոնստանցի ժողովը, որովհետև նորա Դ. և Ե. Նիստերի հրովարտակների ընկնելով՝ ընկնում է այս մեծ ժողովի արժանիքն ու նշանակութիւնը. երկրորդ՝ անհրաժեշտ է նոյնպէս մերժել Հռոմի գահի ընդունած Բազէլի ժողովի առաջին շրջանը— մինչև Ֆերրար տեղափոխուելը. երրորդ՝ անհրաժեշտ է մերժել և պապերի կոնդակները, որոնք հաստատել են այդ հրովարտակները։ Այսպիսով կաթոլիկական վարդապետութիւնը կը դառնար խճճուած և հակասութիւններով լի մի խաօս, որ եկեղեցու մէջ կը պահպանէր իւր գոյութիւնը ճնշման և բռնութեան միջոցով, իսկ եկեղեցուց դուրս՝ ծաղրանքի և անհերքելի յանդիմանութիւնների անպաշտպան առարկայ կը դառնար արտաքին աստուածաբանների կողմից։

ԺԸ.

ԺԳ. դարուց սկսած՝ պապերը ոչ մի վարդապետութիւն այնքան չէին պնդում և այնքան յաճախ կրկնում իրենց թղթերի և կոնդակների մէջ, որքան այն վարդապետութիւնը, թէ աստուածային պատուիրանը և սուրբ պարտականութիւնը պահանջում են իւրաքանչիւր կայսրից և իւրաքանչիւր կառավարութիւնից, որ նոքա իրենց տուած ոյժն ու իշխանութիւնը գործ-

1) Կոնդակ՝ Inter cuuctas, post. sess. 45. Concil. Constant.

դնեն այդ կրօնները ճնշելու համար, և դաւանութեան ու պաշտամունքի ոչ մի ազատութիւն թոյլ չտան։ Եթէ այժմ պապի անսխալականութեան վարդապետութիւնը հրատարակուի՝ այն ժամանակ նորա հետ միասին կը հրատարակուի իբրև աստուածայայտնեալ ճշմարտութիւն և այն՝ որ կաթոլիկ իշխաններն ու պետութիւնները, որտեղ որ նոքա իշխանութիւն ունին, պարտաւորուած կը լինին բացի կաթոլիկական դաւանութիւնից ոչ մի ուրիշ դաւանութիւն թոյլ չտալ. նոքա պարտաւորուած կը լինին կաթոլիկական դաւանութիւնից շեղուողներին ամեն կերպ հեռու պահել պաշտօններից. նոքա պարտաւորուած կը լինին ամեն տեսակ քրիստոնէական համայնքները թուլացնել և վերջապէս արմատախիլ անել։

Յիսունից աւելի պապեր բազմաթիւ կոնդակներով և հրովարտակներով յառաջացրին հաւատաքննութիւնը կամ «սուրբ պաշտօնը»։ Դեռ մի քանի տարի առաջ, երբ եկեղեցական անիշխանութիւնը ոչնչացրեց այդ հաւատաքննութիւնը՝ նոքա նորոգեցին նորան և արգէն նորերումս, հաւատաքննիչներին սրբերի շարքը դասելու պատճառով՝ նորից բարձրացրին։

Շատ դարերի ընթացքում նոքա պնդում էին այն օրէնքը, թէ ով որ յամառութեամբ շեղւում է եկեղեցու վարդապետութեան միայն մի կէտից անգամ՝ պէտք է մահուան պատիժ ստանայ. նոքա հաստատեցին այն օրէնքը, թէ բեղեզի՛ խոտը, այսինքն եկեղեցու վարդապետութեան մի որ և է կէտից շեղման մէջ երկրորդ անգամ բռնուածը, պէտք է պատիժ ստանայ, մինչև անգամ այն դէպքում, երբ պատրաստ կը լինի հրաժարուել իւր մոլորութիւնից։ Եթէ պապի անսխալականութիւնն ընդունուի, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նա իսկոյն կը տարածուի ամբողջ բարոյագիտութեան և դաւանաբանութեան վերայ։ Այն ժամանակ անկարելի կը լինի մտածելն անգամ, որ պապը բարոյական տեսակէտից վատ կանոն հաստատած լինի, որ նա բարոյականութեան հակառակ որոշումն հրատարակած լինի, որ քրիստոնէական բարոյագիտութեան կանոններին հակառակ մի հաստատութիւն ստեղծած լինի։ Ոչ մի կաթոլիկ այլ և ս չի հա-

մարձակուի մոռանալ կամ ասել թէ հաւատաքննութեան հաստատութիւնը մոլորութիւն է, որ պապերի այս հաստատութեան համար հրատարակած կանոնները երբեմն անբարոյական են եղել։ Մինչդեռ, եթէ այժմեան գրականութեան վերայ մի թեթև հայեացք ձգենք՝ կը տեսնենք, որ գոնէ Իտալիայում ոչ ոք այլ ևս չէ խիզախում պաշտպանելու այս հաստատութիւնը նորա իսկական դրութեան մէջ և այդ հաստատութեան համար պապերի տուած օրէնքներն ու կանոնները։

ԺԹ.

Եթէ պապերի անսխալականութիւնը հաւատի սկզբունք դառնայ՝ այն ժամանակ նորա հետ ի միասին դաւանաբանական դրութեան հեղինակութիւն կը ստանայ Գրիգորիոս Է.-ից սկսած պապերի այն վարդապետութիւնը, որով կայսրները և պետութիւնները ենթարկւում են Հռոմի գահին, որ տարածւում է և այն ամեն բանի վերայ, ինչ որ աշխարհական է և քաղաքական։ Այն ժամանակ իւրաքանչիւր կաթոլիկ քրիստոնեայ, պարտաւորուած կը լինի հաւատալու և իւրաքանչիւր հաւատի ձեռնարկի մէջ պէտք է ուսուցանուի՝ թէ պապերը անսահման իշխանութիւն ունին բոլոր իշխանների և պետերի, տէրութիւնների և համայնքների վերայ, թէ նոքա կատարեալ իրաւունք ունին, երբ որ ցանկանան, խառնուել բոլոր պետական գործերի մէջ. թէ նոքա կարող են կայսրներին գահընկէց անել, օրէնքներ մերժել և պատերազմի կամ խաղաղութեան վերաբերմամբ կարգադրութիւններ անել[1]։ Ով որ սորան չհաւատայ՝ նա չի փըր-

1) Որ այս վարդապետութեան ընդունելը անքակտելի կերպով կապուած է պապի անսխալականութիւնը ճանաչելու հետ՝ այդ վաղուց արդէն ընդունել են անսխալականութեան պաշտպանները։ Այսպէս Բարոնիոս կարդինալն ասում է—Haeresis errore notantur omnes, qui ab Ecclesia Romana, cathedra Petri, e duobus alterum gladium auferunt ac nisi spiritualem concedunt. Annal. ad. a. 1053, 14 և դարձեալ a. 1073, 13. Նոյնպէս և Բելլարմին կարդինալը գրում է ընդդէմ Վիդրինգտոնի—Illa sententia est haeretica,

կուի. այս է յայտնում Բոնիֆացիոս Ը.-ի «Unam Sanctam» կոնդակը, որ ամբողջ եկեղեցուն ուղղուած մի հանդիսաւոր կաւանաբանական վճիռ է։ Լեոն Ժ. հաստատեց այս կոնդակը Լատերանի ժողովում և այս բանը միշտ ենթադրւում է պապերի կոնդակների մէջ։ Ճշմարիտ է, վերջին օրերս փորձեր եղան այս կոնդակը այնպէս խորամանկութեամբ և բռնութեամբ բացատրելու, որ նորա գլխաւոր դրութիւնը (որի համար և հրատարակուեցաւ ամբողջ կոնդակը) աչքի չընկնէր ամբողջ բովանդակութեան մէջից—որը, սակայն, հէնց այդ դրութիւնն էր հաստատում։—հաստատում էին նոյնպէս, որ թէև պապը այս կէտում կարող էր մոլորուել՝ սակայն այս հանգամանքը նորա անսխալականութեան երբէք արգելք պէտք է չլինի նորա միւս վճիռների մէջ։ Սակայն մեկնութեան այս տեսակ մեթոդը եկեղեցու վճիռների մէջ ոչինչ, որոշ բան չէր թողնի և նորա հետևանքը կը լինէր գիտական դաւանաբանութեան կատարեալ կործանումն։

Ի.

Յետոյ. եթէ պապի անսխալականութիւնն ընդունուի, այն ժամանակ կատարեալ ոյժ կը ստանայ Եւգենիոս Դ. պապի 1439 թ. հրատարակած նշանաւոր և ընդարձակ դաւանաբանական հրովարտակը մարդեղութեան և խորհուրդների մասին, որով

cujus contradictoria est de fide. Sed Pontificem habere potestatem deponendi principes, est de fide; est enim definitum et conclusum a S. Gregorio VII in Concilio Romano, quod Papae licead imperatores deponere quod a fidelitate inequorum subjectos potest absolvere. Լեսսիուս եզուիտն էլ՝ Pro potestate summi Pontificis, f. 396. Plane tenendum est, hanc doctrinam non esse ambiguam, ita ut utrumque opinari liceat, sed omnino certam, ita ut absque injuria fidei negari non possit. Primo igitur id probo, quia hae propositiones in terminis definitae sunt in Concilio Romano, quod Papae liceat imperatores deponerequod a fidelitate iniquorum subditos potest absolvere. Adqui definitio facta a summo Pontifice cum Synodo ad fidem pertinet. Եզուիտական կարգի աստուածաբանների մէջ ամենագովուածը—Սուարեցը՝ գրում է—Defensio fidei cathol. lib. 3, c. 22 et 23, lib. 6, c. 4, 6: Tam certum, Papam posse multis de causis principes

իւր եղբայրներին և գլխաւորապէս Հայոց աղգը հաստատել և խրատել ցանկացող պապը չէր կարող մոլորուիլ։ Բայց սորանով ամենակորստաբեր կերպով կը խճճուէր խորհուրդների մասին ամբողջ ուսմունքը և անհրաժեշտ կը լինէր համոզուել, որ ամբողջ քրիստոնէական աշխարհում ինչպէս արևելեան այնպէս և արևմտեան եկեղեցում՝ չկայ այլ և այս ճշմարիտ օրինաւոր քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրութիւն (хиротонія)։

Այսպիսով եթէ պապի անսխալականութիւնը ճշմարիտ դաւանութիւն դառնար և սորանով Եւգենիոս Դ-ի կոնդակը սխալմունքներից զերծ ճանաչուէր՝ այն ժամանակ իրաւացի կը լինէին այն բոլոքական եպիսկոպոսները, ինչպէս Պֆաֆֆ, Մոսգէյմ և շատ ուրիշները, որոնք հաստատում են թէ կաթոլիկ եկեղեցում չկայ այլ և այս ճշմարիտ եպիսկոպոսական յաջորդութիւն։ Բայց, ի միջի այլոց, սորա հետ ի միասին կընկնէր և լինելիք ժողովի ամբողջ հեղինակութիւնը։

ԻԱ.

Եկեղեցու ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս և նորա դուցմունքի համեմատ բոլոր աստուածաբաններն ուսուցանում են, թէ եկեղեցին դաւանած ուսմունքին միայն այն ժամանակ է ամենահաստատ ձև տալիս կամ այն ժամանակ է առանձնապէս սահմանում նորան և լրացնում դաւանաբանական գրութեամբ, երբ այդ ուսմունքը մի քանի անգամ քննութեան է ենթարկուել, մերժուել է կամ ենթարկուել է աղաւաղումների կամ

---

poenis tamporalibus coërcere vel punire, quam est certum, ecclesiam non posse in fide et moribus errare. Lib. 6, c. 8: Propositio haec: Papa habet potestatem ad deponendos reges haereticos et pertinaces, suove regno in rebus ad salutem animae pertinentibus perniciosos, inter dogmata fidei tenenda et credenda est. Nam continetur in verbis Chisti Petro dictis, prout Ecclesia catholica illa intellexit, ut apertissime declaravit Bonifacius VIII in Extrav. Unam Sanctam.

յեղաշրջումների և ենթարկուել է կասկածանքի, թէ մոլորուած է։ Այս վիճակի մէջ էր պապի անսխալականութիւնը Տրիդենտի ժողովի ժամանակ։ Բողոքական ուսմունքների հիմնադիրները և պաշտպանները նորան կնքեցին անհիմն, հնարուած և նորագոյն մոռացածին անուններով։ Իտալիայից դուրս եղած եկեղեցու աստուածաբաններն էլ որոնք ուրիշ դէպքերում մեծ յամառութեամբ պաշտպանում էին վիճելի ուսմունքները՝ այժմ լիչ բացառութեամբ լուռ վերաբերուեցան դէպի այս կարծիքը և կամ ուղղակի մերժեցին նորան։ Ուրեմն Տրիդենտի ժողովը սոփղուած էր այս ուսմունքը եկեղեցու հաւատի կէտ շինել, եթէ միայն համարէր նորան հաւատի գրաւական և եթէ երաշխաւորութիւն ունենար, թէ աւանդութեամբ ճշմարտում է այդ ուսմունքը։

Սակայն ժողովն այդ մերժեց, և պապի նուիրակները յետառան իրենց արդէն ժողովին մատուցած առաջարկութիւնները, հէնց որ իմացան, թէ եպիսկոպոսների մեծ մասը լաւ չէ տրամադրուած դէպի այդ առաջարկութիւնները։

ԻԲ.

Ոչ պակաս նշանակութիւն ունի և այն հանգամանքը, որ պապի անսխալականութեան կարծիքը կարողացաւ տարածուել միայն բռնութեամբ և սոփիսմունքով և բոլոր այլկերպ մոռածողներին ճնշելով։ Իտալիայի, Սպանիայի և Պորտուգալիայի ինկվիզիցիաների շնորհիւ ուրիշ վարդապետութիւն չէր կարելի առաջարկել ոչ գրքերով և ոչ էլ ուսումնական ամբիոնից։ Նոյնպիսի բռնութիւն էր տիրապետում և մեծ հոգևոր կորպորացիաների և կուսակրոն կարգերի մէջ։ Եզուիտներից կախում ունեցող համալսարաններում երբէք չէին համբերում, որ մի որ և է կասկածանքի ենթարկուէր պապի անսխալականութեան կարծիքը։ Եւ բոլոր այն շարադրութիւնները, որոնց մէջ այս կարծիքը ենթարկւում էր գիտական հետախուզութեան և նորա պատմական ապիկարութիւնն ապացուցւում էր՝ այդպիսի գրքե-

ը ինդէքսի մէջ էին ընկնում և որքան կարելի է՝ ոչնչացուում էին [1]։ Բայց որտեղ որ չկայ ուման աղատութիւն՝ այնտեղ եկեղեցա՛ն ընդհանուր միաբանութեան մասին խաք էլ չէ կարող լինել. հէնց միայն այդ խօսքը բաւական է ամեն տեսակ ստիպողութիւն հերքելու համար։

ԻԳ.

Եթէ համեմատենք աստուածաբաններին, որոնք այս կամ այն վարդապետութեան՝ պաշտպաններն են—ընդունում են պապի կամ եկեղեցու անսխալականութիւնը՝—կը տեսնենք, որ հիմնաւոր գիտութիւնը, եկեղեցական—պատմական և ս. հայրերի կեանքի վերաբերեալ տեղեկութիւնները անշուշտ նոցա՛ կողմն է, որոնք հին վարդապետութեան կուսակիցներն են. այս յայտնի է եկեղեցական գրականութեան ամեն մի ծանօթ անձնաւորութեան։ Բոսսիւէտի շարադրութիւնը մինչև անգամ Հռոմում այնպիսի համոզեցուցիչ ազդեցութիւն ունեցաւ, որ այդ շարադրութեան երևալով, Օրսի կարդինալի ասելով, շատ նշանաւոր ձայներ յայտնեցին թէ պապի անսխալականութեան գործը կորաւ։ Mauriner գիտնականները բոլորը նուիրուած էին Գալլիական ուման։ Նոյն բանը կատարուում է և Գերմանիայում։ Կարելի է ասել, որ բոլոր այն եպիսկոպոսները, որոնք պատմական ընդարձակ տեղեկութեան հետ ունին և ս. հայրերի կեանքի գիտութիւն՝ հերքեցին պապի անսխալականութեան մասին նորա կարծիքը։

Բայց ովքե՞ր էին այդ անսխալականութեան պաշտպանները։ Դոքա էին Տորկվեմադան, Կաէտանը, Եակոբացցին, Հոզիոսը, Պօլիսը, Բարոնիոսը, Բելլարմինը, Ագիրրէն, Պալավիչինին, Գոտին, Օրսին—բոլորն էլ այնպիսի մարդիկ՝ որոնք կամ արդէն կարդինալ էին և կամ այդ պաշտպանութեան շնորհիւ կարդինալ դարձան. սոցա հետ և մեծ կարգերի աբեղաները, որոնց գենարալները Հռոմումն են նստում և գլխաւորապէս Եզուիտները, որոնք պապի անսխալականութեան պաշտպանութիւնը և նորա իշխանութեան ամեն ուղղութեամբ գործադրութիւնը իրենց գլխաւոր խնդիր շինեցին և, կարելի է ասել, իրենց կեանքի նպատակ դարձրին։

ԻԴ.

Եւ ահա այս բոլոր աստուածաբանները միշտ հիմնուում էին անհաստատ, կեղծ և հնարած աղացոյցների վերայ և այս պատահում էր հէնց սկզբից։ Կեղծ-Իսիդորեան նամակները, եկեղեցու յոյն հայրերի հնարած գրկայութիւնները, որոնք ս. Թո՛մայի շարադրութիւններից անցան հետևեալ աստուածաբանների և կանոնիկոսների շարադրութիւնների մէջ՝—այս բոլորը շատ ուրիշ անտոյդ բաների հետ ի միասին կազմում են գլխաւոր ապացոյցներ անսխալականութեան թէօրիայի զօրաւիգների՝ Տորկվեմադայ, Կայէտան, Մինօրիդ Կապիստրանօ, Բելլարմին կարդինալների և սոցանից օգտուող (արտագրող) բազմութեան ձեռքում։ Այս բանը այդպէս էլ շարունակուեցաւ։ Նիկոդայոս Անդերս, Ռոկկաբերդի և Ագգիրէ, Բերնանդ, եզուիտների գեներալ Թիրսուս Գոնզալէս, Ֆրանց Տուրիանցի եզուիտը, Ալֆոնս Պիզացին, Ռիկչիօլին, Ռէնօն. յետոյ Հռոմէական հոգևոր դատարանի աստուածաբանները—Թոմաս և Կամելլօն, Կամպիջին Բցոլիուսը Բայրան, Սֆոնդրատի կարդինալը, Բենեատիսը և սոցա շարադրութիւնների բազմաթիւ արտագրողները առանց կեղծիքները երևան հանելու մասին մոռանալու՝ կառուցանում էին իրենց անսխալականութեան շինութիւնը այդ փտած խարխուլ հիմքի վերայ։ Մինչև անգամ այժմ էլ նոքա չեն ուզում յետ քաշուել եկեղեցու պատուի և արժանաւորութեան համար կորստաբեր ապացուցութեան համար այդ եղանակից. նոքա կարծես զգում են թէ առանց այս հնարածոյքի պապի անսխալականութեան կարծիքը չէր կարող յառաջ գալ եկեղեցու մէջ։ Այսպէս էլ Նեոյթրի եպիսկոպոս Բոսկովանին իւր պապի մասին գրած մեծ շարադրութեան մէջ

առաջարկում է ընթերցողին այդ տեսակ կեղծիքների մի ամբողջ շարք. Վենինգեր եղուիսը, որը իւր Նիւ-Եօրքում և Ցինցինատիում լոյս տեսած գրքի մէջ գլխաւորապէս աչքի առաջ ունէր հիւսիսային Ամերիկայի եպիսկոպոսներին և եկեղեցականներին՝ այնքան հեռու է գնում, որ աւաջարկում է Նիկիոյ ժողովի կատարեալ հնարուած մի պատմութիւն, պապի բարձրագոյն և բոլորի համար պարտաւորեցուցիչ հեղինակութիւնը ցոյց տալու համար. և վկայ է բերում եկեղեցու պատմագիր Սոզոմենին, որը, սակայն, այդ մասին ոչ մի խօսք չէ ասում: Նոյնպէս է վարւում և ֆրանսիացի Բուիկոը իւր նոր լոյս տեսած շարադրութեան մէջ (Tractatus de Papa, 1869): Նա հիմնւում է ս. Կիպրիանոսի աղաւաղուած վկայութեան և շատ նոր և ծիծաղելի կեղծիքի վերայ, որ կոչւում է արաբական Նիկիական կանոններ: Նոյնպիսի բաներ պատահում են և Մեխեղնի Dechamps եպիսկոպոսի նոր զեկուցումների մէջ. այսպէս է օրինակ նա գործածել ս. Բարսղի նամակը:

Իե.

Եթէ յիրաւի պապի անսխալականութեան կարծիքը պէտք է եկեղեցու դաւանութիւն դառնայ, այն ժամանակ յոյն, ռուս և բողոքական եկեղեցիների առաջ մի շատ թոյլ կողմ կը մերկանայ: Ա. ն ժամանակ կաթոլիկական վարդապետութեան և եկեղեցու դէմ մինչև այժմ եղած բանակռիւը, աւելի կը կենդրոնանայ այս վարդապետութեան վերայ (որը այն ժամանակ կը դառնայ «articulus stantis vel cadentis ecclesiae») և հակառակորդները կառնեն իրենց ամենաշօրեղ գործիքները, իրենց ամենահամոզեցուցիչ փաստերը նոյն իսկ կաթոլիկական եկեղեցուց, նորա նշանաւոր աստուածաբանների շարադրութիւններից: Ի՞նչ կասեն կաթոլիկական եկեղեցու պաշտպանները, եթէ նոցա ասեն՝ թէ այդ վարդապետութիւնը 1800 տարուայ ընթացքում մասամբ անյայտ էր, մասամբ հերքուած և մերժուած է եղել եկեղեցու անդամների, այն էլ ամենագիտնականների մեծամասնութեան կողմից, թէ եկեղեցու ամենագիտուն և ամենայար-

գելի կորնորացիան Փարիզի բարձրագոյն դպրոցը չորս դար շարունակ բոլորովին հակառակն էր ուսուցանում, ինչ կասեն նոքա եթէ մատնացոյց անեն Բոսսիւէտի, Ֆլեօրիի, Աղէքսանդր Նատալիսի և շատ ուրիշների շարադրութիւնների վերայ: Այն ժամանակ եկեղեցու մասին, մանաւանդ նորա դաւանութեան հրատարակման համար անհրաժեշտ պայմանների և պահանջների մասին վարդապետութիւնը պէտք է կամաց կամաց փոփոխուի:

Իզ.

Եթէ պապի անսխալականութեան թէորիան դառնայ եկեղեցու ուսումն՝ այն ժամանակ նորա անխուսափելի հետևանքներից մինն էլ այն կը լինի, որ դէպի եկեղեցին եղած յարգանքը կը նուազի: Ոչ մի բան չէ կարող այնքան վնասակար լինել եկեղեցու արժանաւորութեան թէ հաւատացեալների և թէ օտարների աչքում, որքան այն, որ կը յայտնուի թէ այս ինչ վարդապետութիւնը ծագեց նորա մէջ երկարատև և գիտակցական կեղծիքների շնորհիւ կամ գոնէ նոցա օժանդակութեամբ: Իսկ այդ բանը անկասկած կատարւում է պապի անսխալականութեան վերաբերմամբ: Ա. ն կեղծիքները, որոնց միջոցով այդ անսխալականութիւնը պատրաստուեցաւ, առաջարկուեցաւ և վերջապէս սիսլասսիկական աստուածաբանութեան և կանոնական գրքերի մէջ մտաւ, տևում են Զ-դ դարից մինչև ԺԳ-դ դարը և մինչև անգամ Թովմայ Ակուինատացին, որի հեղինակութիւնը այնքան օգնեց անսխալականութեան վարդապետութեան տարածուելուն և հաստատուելուն՝ ինքը խաբուած էր այն ապացոյցներից, որ հնարել էր իբր թէ Յոյն եկեղեցին:

---

1) Հարկաւոր է համեմատել թէ ինչ են ասում այդ բանի մասին Le Quien դոմինիկեանները իրենց «Panoplia»—ի յառաջաբանի մէջ և ինչ է ասում Դէ. Բուրէյսը «Contra errores Graecorium» շարադրութեան նախաբանի մէջ, որ ս. Թովմայի շարագրութիւնների իւր արած հրատարակութեան մէջ է:

Մի քանի խօսք անսխալականութեան խնդրի վերաբերմամբ։

1870· 19 յունուարի 1)։

Դուք արդէն տպագրել էք այն նշանաւոր խնդրագիրը, որով Վաթիկանի ժողովի անդամներից ոմանք թախանձում են պապին, որ նա այս ժողովի միջնորդութեամբ իւր անսխալականութիւնը հաւատի անդամ դարձնելու համար անհրաժեշտ քայլն անի։ 180 միլիոն մարդ այնուհետև պէտք է հաւատան և դաւանեն այն՝ ինչ որ մինչև այժմ եկեղեցին ոչ դաւանել է և ոչ էլ վարդապետել· այս բանին չհաւատացողը Լմերժուի եկեղեցուց, կղզիների խուրհուրդներից և յաւիտենական դատապարտութեան կենթարկուի —այս է խնդրագիրը ստորագրող եպիսկոպոսների ցանկութիւնը։ Եկեղեցին չէր հաւատում այդ վարդապետութեանը, որովհետև նոքա էլ, որոնք պապի անսխալականութիւնը ճշմարտութիւն էին համարում՝ նոքա էլ չէին կարող նորան հաւատալ, այն մտքով, ինչ մտքով որ քրիստոնէութիւնը հասկանում է հաւատալ խօսքը։ Հաւատալու (fide divina) և դատողութեամբ մի որ և է կարծիք հաւանական ճանաչելու մէջ անսահման զանազանութիւն կայ։ Կաթոլիկը կարող է և պէտք է հաւատայ միայն այն բանին, ինչ որ եկեղեցին նորան ցոյց է տալիս և հաղորդում է իբրև աստուածայայտնեալ, անկասկած և փրկութեան էութեան ճշմարտութեան վերաբերեալ ճշմարտութիւն· նա պէտք է հաւատայ այն բանին, առանց որը դաւանելու չէ կարելի եկեղեցուն պատկանել և որի հակառակը եկեղեցին չէ համբերում և մերժում է իբրև ակնայայտնի մոլորութիւն (սուր վարդապետութիւն)։ Եկեղեցու սկզբնաւորութիւնից մինչև այժմ ոչ մի մարդ պապի անսխալականութեան անկեղծօրէն չէ հաւատացել, այսինքն այնպէս չէ հաւատացել՝ ինչպէս որ հաւատում է Աստծուն, Քրիստոսին, Հօր, Որդու և սուրբ Հոգու եռակի միութեանը և այլն, այլ շատերը ենթադրում են նոյն իսկ հաւանական կամ մարդկօրէն յայտնի (fide humana) էին կարծում, որ այդ արտօնութիւնը պապին է պատկանում։ Այսպիսով հաւատի և եկեղեցու վարդապետութեան մէջ այն փոփոխութիւնը, որ կամենում էին իրագործել խնդրագիրը ստորագրող եպիսկոպոսները՝ եկեղեցու պատմութեան մէջ անօրինակ մի իրողութիւն կը լինէր։ 18 դարու ընթացքում սորա նման ոչ մի բան չէ եղել· նոցա ցանկացածն է եկեղեցական յեղափոխութիւն, որ և առաւել ընդարձակ ծաւալ է ստանում այն պատճառով, որ խօսքն այստեղ այն հիմունքի մասին է, որի վերայ ապագայում պիտի կառուցանուի իւրաքանչիւր մարդու կրօնական հաւատքը, նոյնպէս և այն պատճառով, որ ամբողջ տիեզերական եկեղեցու (թէ ըստ ժամանակի և թէ ըստ տարածութեան) տեղը կը բռնի մի մարդ միայն—պապը։ Մինչև այժմ կաթոլիկն ասում էր· Ես հաւատում եմ այս կամ այն վարդապետութեան հետևելով ամեն ժամանակների ամբողջ եկեղեցու վկայութեան, որովհետև Փրկիչը խոստացել է, որ նա միշտ պէտք է գոյութիւն ունենայ և միշտ պէտք է ճշմարիտ կը լինի։ Իսկ ապագայում իւրաքանչիւր կաթոլիկ ստիպուած կը լինի ասելու· Ես հաւատում եմ, որովհետև անսխալական հրատարակուած պապը այսպէս է հրամայում ուսուցանել և այսպէս էլ հաւատալ։ Իսկ թէ նա անսխալական է՝ այդ ես հաւատում եմ, որովհետև նա ինքն իւր մասին այդպէս է ասում։ Որովհետև՝ թէև 400 կամ 600 եպիսկոպոս Հռոմում 1870 թուին որոշեցին, որ պապը անսխալական է, բայց չէ՞ որ բոլոր եպիսկոպոսները և իւրաքանչիւր ժողով առանց պապի ենթակայ է մոլորութեան· չէ՞ որ անսխալականութիւնը բացառապէս պապի առաւելութիւնն ու սեպհականութիւնն է։ Եպիսկոպոսները—որքան էլ շատ լինին դոքա—չեն կարող նորա վկայութիւնը ոչ զօրացնել և ոչ էլ թուլացնել· ապա ուրեմն այդ որոշումը այնքան այժ և հեղինակութիւն կունենայ, որքան որ պապը կը տայ նորան՝ իրեն յատկացնելով այդ վճիռը։ Այսպիսով, վերջապէս, ամեն ինչ հիմնը դրում է պապի իւր մասին տուած վկայութեան վերայ, որ իհարկէ պարզ է։ Բայց թող յիշուի և այն, ինչ որ 1840 տարի

1) „Allgemene Zeitung“ 1870. 21 յունուարի·

առաջ Փրկիչն ասաց. «Եթէ ես վկայեմ վասն անձին իմոյ. վկայութիւն իմ չէ ճշմարիտ»։ (Յովհան Ե. 31.)։

Խնդրագիրը գլխաւորապէս հետևեալ տարակոյսներն է առաջացնում։

Նախ՝ այդ խնդրագիրը սահմանափակում է անսխալականութիւնը պապի միայն այն ասացուածներով և հրովարտակներով, որոնք նա ուղղում է բոլոր հաւատացեալներին ի միասին, հետևապէս այս խնդրագիրը կաթոլիկական եկեղեցու ուսումն է հրատարակում։

Սորանից կը հետևէր այն՝ որ, երբ պապը դիմում էր միայն առանձին անձանց, կորպորացիաներին, մասնաւոր եկեղեցիներին՝ այն ժամանակ նա միշտ մոլորութեան ենթակայ է եղել։ Բայց այս պայմանը, որի հետ պէտք է կապուած լինի պապի որոշման կամ ուսման անսխալականութիւնը, նոքա 12 կամ 13 դարու ընթացքում ամենևին չեն իրագործել, պապի բոլոր յայտարարութիւնները վարդապետութեան վերաբերեալ ուղղուած են միայն մի որ և է երկրի եպիսկոպոսներին, մասնաւոր անձերին և այլն։ Արևելեան ամբողջ եկեղեցուն, նորա արևմտեանի հետ միացած հազարամեակի ընթացքում պապերը երբէք չեն ուղղել մի որ և է ընդհանուր հրովարտակ. դաւանաբանական գրուածքները երկար ժամանակամիջոցներից յետոյ ուղղւում էին առանձին կայսրներին կամ պատրիարքներին։

Հետևապէս պարզ է, որ նոքա իրենք գոնէ հազար տարուայ ընթացքում չէին էլ երևակայել այս պայմանը, որից պէտք է կախումն ունենար պապի վճիռների անսխալականութիւնն ու աներկբայութիւնը. հէնց այդ ամբողջ ուսմունքն էլ շատ ուշ է հնարուած և մինչև 1652 թ. եկեղեցու մէջ ամենևին յայտնի էլ չէր։ Հէնց այս տարումն էր, որ Լեյպցիգի աստուածաբան Յովհան Հեսսելը (Iohann Hessels, Löwener Theologe) արտայայտեց այդ ուսմունքը. նորանից օգտուեց Բելլարմինը և հաստատեց կեղծ-Իսիդորի թղթերով և ս. Կիւրղի հնարած վկայութիւններով։ Այս տեսութեան զօրութեամբ պապերը իրենց դաւանաբանական յայտարարութիւնների սկզբում գրած մի փոքրիկ բառով կը կարողանային նոցա տալ անսխալականութեան բարձրագոյն արտօնութիւն. բայց նոքա այդ չարին. նոքա մոլորուելու վտանգին ենթարկեցին այն անձերին և այն համայնքներին, որոնք կընդունէին այն վճիռները, որոնք չունին աստուածային աներկբայութեան գրաւական։

Երկրորդ՝ սխալ է այն թէ «եկեղեցու ընդհանրական և մշտական աւանդութեան համաձայն պապերի դաւանաբանական որոշումները անփոփոխելի են» (irreformable)։ Բոլորի համար պարզ է սորա հակառակը։ Եկեղեցին պապերի դաւանաբանական թղթերը միշտ նախ քննութեան էր ենթարկում և այսպիսի քննութիւնից յետոյ կամ ընդունում էր, ինչպէս որ վարուեցաւ Լևոնի թղթի վերաբերմամբ Քաղկեդոնի ժողովը, կամ մերժում էր իբրև մոլորութեամբ լեցուած. այսպէս վարուեցաւ հինգերորդ ժողովը (553 թ) Վիրգիլիոսի կարգադրութեան, իսկ վեցերորդը (681 թ.) Հոնորիոսի թղթի վերաբերմամբ։

Երրորդ՝ սխալ է այն բանը, իբր թէ Լիոնի Բ. ժողովում (1274) յոյներն և լատիններն այնպիսի մի դաւանութիւն ընդունեցին, որի մէջ յայտնուած է, թէ «հաւատի վերաբերեալ վէճերը պիտի վճռուին պապի հրամանով»։ Ոչ յոյները և ոչ էլ լատինները (այսինքն Լիոնում հաւաքուած արևմտեան եպիսկոպոսները) ամենևին չեն ընդունել այդպիսի դաւանութիւն։ Հանգուցեալ Կլիմենդ Դ. պապն էր, որ Միքայէլ Պալէոլոգ կայսրին ուղարկեց այս դաւանութիւնը իբրև պայման նորա արևմտեան եկեղեցու հետ յարաբերութիւն սկսելուն։ Միքայէլը, որ դեռ և ս թշնամուց խլած մայրաքաղաքին կատարելապէս տէր չէր, և որին սպառնում էին լատինների Բալդուին և Սիկիլիայի Կարլոս կայսրները, կարիք ունէր պապի օգնութեան, որ միայն կարող էր նորա գլխաւոր թշնամուն ընկճել և հէնց այդ պատճառով համաձայնեցաւ ընդունել պապերի նորան առաջարկած պայմանները եկեղեցուն հնազանդելու, թէև ժողովուրդը և յոյն եպիսկոպոսները յամառութեամբ հակառակում էին այդ բանին։ Այսպիսով նորա վզին կապած ֆորմուլան նա մոցրեց իւր նամակի մէջ, որը կարդացուեցաւ ժողովում և որը հաստատեց նորա դեսպան Լոգոթետը։ Իսկ Կոստանդնուպօլսում՝ իւր

տանը նա ինքը հրաժարուեցաւ այն երեք զիշումներից, որ ա-
րել էր պապին։ Հաւաքուած եպիսկոպոսներն էլ այդ ֆորմուլա-
յի մասին իրենց կարծիքը յայտնելու ամենևին առիթ չունեցան։

Զորրորդ՝ Ֆլորենտինի ժողովի որոշումը այստեղ աղաւաղուած
կերպով է դուրս բերուած։ Հենց այն գլխաւոր գրութիւնը, որի
ձևակերպուելուց առաջ յոյների և իտալացիների մէջ երկար
վիճաբանութիւններ եղան և որի մէջ պարունակւում է ամբողջ
ոյժը—որովհետև նորա մէջ արած սահմանափակման համաձայն
պէտք է նախընթացը հասկացուի՝—հենց այդ գլխաւոր գրու-
թիւնը մէջ է տուած այն է՝ juxta eum modum, quo et in gestis et in
sacris canonibus occumenicorum conciliorum continetur (=տիեզերական ժո-
ղովների սրբազան կանոնների և նոցա գործունէութիւնների
մէջ պարունակուածի համաձայն)։ Պապը և կարդինալները եռանդով
աշխատում էին գլխաւորապէս նորա համար, որ պա-
պի առաջնութիւնը հասկանալու բացատրութեանը աւելացուի՝
juxta dicta sanctorum(=սրբերի վկայութիւնների հետ մեկտեղ)։ Յոյնե-
րըն էլ նոյնպիսի եռանդով մերժում էին այդ բանը։ Նոքա լաւ
գիտէին, որ այդ «սրբերի վկայութիւնների» մէջ կան շատ շինծու տեղեր։ Արդէն Լ. Դիոտին առենաբաններից մէկը—Լատի-
նացի Անդրէաս եպիսկոպոսը հիմնուեց Կիւրեղի հռչակաւոր
վկայութիւնների վերայ, որոնք, այն ժամանակից, երբ նոցանից
խաբուեցաւ Թովմայ Ակուինատացին և Ուրբանոս Դ. պապը՝ արևմտքում զօրեղ և երկարատև ազդեցութիւն ունեցան, իսկ այժմ յոյները մերժեցին այդ վկայութիւնները։ Կայսրը մի բան էլ աւելացրեց, այն է՝ եթէ հայրերից մէկնիմէկը պապին ուղղուած մի նամակում քաղաքավարութիւն է գործ դրել՝ դորանից դեռ չէ կարելի եզրակացնել, թէ պապը այդ արտօնութեան իրաւունքն ունի։ Վերջապէս լատինները զիջան. «dicta sanctorum»-ը ծրագրից հանուեցաւ և նոցա տեղը բռնեցին իբրև պապի առաջնութեան չափ և սահման՝ տիեզերական ժողովների գործերը և սրբազան կանոնները։ Սորանով արտաքսուեցաւ պապի անսրխալականութեան մասին ամեն տեսակ մտածմունք, որովհետև հին ժողովներում և մինչև Խիզոր եղած կանոնների մէջ, որ

երկու եկեղեցիների համար էլ ընդհանուր էին՝ ոչ միայն ոչինչ
չկայ, որ հաստատի այդ տեսակ առաւելութիւն, այլ ամբողջ
հին եկեղեցական օրէնսդրութիւնը ինչպէս և եօթն տիեզերա-
կան ժողովների գործերն ու պատմութիւնը ակնյայտնի կերպով
ենթադրում են այնպիսի մի կազմակերպութիւն, որով բարձրա-
գոյն հեղինակութիւնը ուսուցման գործի մէջ պատկանում է
բացառապէս ամբողջ եկեղեցուն և ոչ երբէք հինգ պատրիարքնե-
րից մէկին. այդպիսի մի պատրիարք էր յունաց աչքում և պա-
պը. բացի դորանից Վիսսարիոն արքեպիսկոպոսը դորանից մի քիչ
առաջ բոլոր յոյների կողմից յայտնեց, որ պապը ժողովից փոքր
է, հետևապէս և անսխալական չէ։

Հետևապէս աղաւաղումն է, որ մի և նոյն է թէ կեղծիք է,
երբ Ֆլորենցիայի ժողովի որոշումից դուրս են ձգում հենց այդ
գլխաւոր կէտը, որը ամենամեծ նշանակութիւն ունի նոցա
համար, որոնց համար որ եղած է։ Այդ կէտը յոյների աչքում
այնքան անհրաժեշտ էր, որ նոքա յայտնեցին թէ պատրաստ են
յետ վերադառնալ, ինչպէս որ եկել են, եթէ նա հրովարտակի
մէջ չներմուծուի. նոքա նոյնպէս պնդեցին ու իրագործեցին այն՝ որ
միւս պատրիարքների իրաւունքները և արտօնութիւնները այսու-
հետև դարձեալ պահպանուին։ Իսկ այն, որ պատրիարքները
իրաւունք ունին անկախ կերպով մասնակցել եկեղեցու որ և է
ուսման հաստատութեանը և ստիպուած չլինին անսխալական ու-
սուցչի ոտնձգութիւններին հնազանդելու—այս դեռ շատ առաջ
իրենք պապերն են յայտնել։

Ճիշտ է, խնդրագիրը խմբագրողը մի ուրիշ հիմք էլ ունէր
Ֆլորենցիայի հրովարտակը աղաւաղելու համար։ Ի՞նչ պիտի անէր
նա։ Արդեօք տա՞ր այն լատինական բնագիրը իւր սկզբնական դրու-
թեան մէջ, որ նման էր յունականին և որ կար Եւգենիոս Դ
պապի քարտուղար Ֆլավիոս Բլոնդի և աւելի հին աստուածա-
բանների շարադրութիւնների մէջ— quemadmodum et in actis conciliorum et in Sacris canonibus continetur. թէ՞ իւրացնէր այն կեղծիքը [1]),

1) Վստահանալով պապի քարտուղար Ֆլավիոս Բլոնդի հեղինակու-
թեան վերայ, որ ուղիղ էր թարգմանել յոյն բնագիրը՝ ես ենթադրեցի,

որ առաջին անգամ գործ է դրել Աբրահամ Բարդուղիմէոսը), որի մէջ et-ի փոխարէն գրուած է etiam։ Այս etiam-ը բոլորովին փոխում է հրովարտակի միտքը և ոչնչացնում է ամբողջ յաւելուածի նշանակութիւնը, մինչդեռ այս (թէև ակնյայտնի) կեղծիքը մնել է արդէն ժողովների հաւաքածուի և դաւանաբանական դասագրքերի մէջ. և այժմ ժամանակ է վերացնելու այս գայթակղութեան քարը արևելցիների համար և վերականգնելու հէնց այն իսկական բնագիրը, որը բառացի համապատասխան է յունականին։ Ի հարկէ այն ժամանակ այդ հրովարտակը չէ կարող ծառայել անսխալականների նպատակներին, ինչպէս որ սորանից 200 տարի առաջ Փարիզի Դէ-Մարկա արքեպիսկոպոսն ապացուցեց. (Concord. Sacerd, et Imperii 3, 8). Նա իրաւացի կերպով նկատում է՝ verba graeca in sincero sensu accepta modum axercitio potestatis pontificae imponunt ei similem quem ecclesia Gallicanat uetur. Ad e contextus latini depravata lectione eruitur, plenam esse papae potestatem idque probari actis conciliorum et canonibus 1).

Խնդրագրի մէջ նկատւում է մի առանձին զայրոյթ (acerbissimi catholicae doctrinae impugnatores—blatterare non erubescunt= կաթոլիկական վարդապետութեան չար թշնամիները առանց կարմիր-

որ այս etiam quemadmodum անկանոն և յունական բնագրի մտքի անկասկած յեղաշրջութիւնը յետին ժամանակների գործ է։ Բայց յետոյ, երբ Ֆրոմանը „Allg. Zeitung"-ի մէջ պարզեց գործը և „Archivio storico Ytaliano"-ի մէջ երևեցաւ սկզբնական բնագիրը՝ ես համոզուեցայ, որ այդ խոչքերը եղել են արդէն լատինական բնագրի մէջ, այնպէս որ յոյն և լատին բնագիրները արդէն սկզբից իրար հետ չէին համաձայնում։ Նախընթաց բոլոր վիճաբանութիւնները (29 ապրիլի) երաշխաւորումեն, որ, եթէ յոյները հասկանային, թէ ինչ կայ այդ լատինական բնագրում՝ նոքա ամենևին չէին ընդունի նորան։

1) Եթէ ծուռ կերպով չհասկանանք յունաց արտայայտութիւնները, նոքա նոյնպէս պապին յատկացնում են քահանայապետական իրաւունք գործածելը, ինչպէս որ Գալլիական եկեղեցում։ Իսկ եթէ լատին բնագիրը աղաւաղելով կարդանք՝ այն ժամանակ դուրս կը գայ, որ պապը լիակատար իշխանութիւն ունի. և այդ բանը հաստատումեն ժողովների կանոնները և գործերը։ Ռ. Թարգմ.

քելու վայրահաչում են) նոցա դէմ, որոնք Ֆլորենցիայի ժողովը տիզերական չեն ընդունում։ Թող իրողութիւնները խօսին։ Յայտնի է, որ այս ժողովը գումարուեցաւ Բազէլի ժողովը հերքելու համար, որ սկսել էր այնպիսի վերանորոգումների մասին կարգադրութիւններ անել, — որոնք պապի կառավարութեան (curia romana) ամենևին ցանկալի չէին։ Այս ժողովը բացուեցաւ 1438 թ. Ապրիլի 9-ին Ֆերրարում, բայց հաւաքուած եպիսկոպոսների թիւը այնքան քիչ էր, որ ստիպուեցան սպասել մի վեց ամիս էլ։ Ամբողջ հիւսիսային կաթոլիկ 1) Եւրոպայից, Գերմանիայից, Սկանդինաւիայից, Լեհաստանից, Չեխիայից, այն ժամանակուայ Ֆրանսիայից, Կաստիլիայից, Պորտուգալիայից և այլն, ոչ ոք չեկաւ. կարելի է ասել, որ այն ժամանակուայ կաթոլիկական աշխարհի 9/10-ը համոզմունքով չմասնակցեց այդ ժողովին, որովհետև, աչքի առաջ ունենալով Բազէլի ժողովը՝ նոքա այդ ժողովը ապօրինի էին համարում և իրաքանչիւր ոք գիտէր արդէն, որ եկեղեցու վերանորոգման— այս ստիպողական կարիքին բաւականութիւն տալու համար ոչինչ չեն անի այդ ժողովում։ Վերջապէս Եւգինիոս մի կերպով կարողացաւ հաւաքել յիսունի չափ իտալական եպիսկոպոսներ, սոցա հետ միացան Բուրգունդեան դքսի ուղարկած մի քանի եպիսկոպոսներ, մի քանի պրովանսացիներ և մի երկու սպանիացի. բոլոր ստորագրողները 62 եպիսկոպոս էին։ Կորստեան անդունդի ծայրին գտնուող յոյն պրելատներին և կայսրին պապը խոստացաւ տալ փող, նաւեր և զինուորներ, բացի դորանից նա նոցա խոստացաւ, որ իւր հաշուով կը պահէ նոցա Ֆերրարում և Ֆլորենցիայում ապրած ժամանակը և սորանով համոզեց նոցա ժողովի գալու։ Բայց երբ նոքա յամառութիւն ցոյց տուին ժողովում՝ պապը հրաժարուեց նոցա օգնութիւն հասցնելուց, այնպէս որ նոքա մեծ զրկանք կրեցին. քաղցի և կայսեր ստիպմունքից ստորագրեցին այնպիսի բաներ, որոնցից յետոյ հա-

1) Դեոլլինգերի այս նախադասութիւնից դուրս է գալիս, որ Ռուսաստանը այն ժամանակ դեռ եւրոպական պետութիւն չէր համարւում։ Ռ. Թ.

մարեա թէ բոլորն էլ հրաժարուեցան։ Յոյների մէջ տիրապետող էր դարձել հետևեալ դատողութիւնը՝ որ պատկանում է Ամբրիցիոս անունով մի ժամանակակից յոյնին և որ առաջ է բերում Հռոմայեցի գիտնական Ալլացիոսը. «Միթէ՝ ասում է նա՝ կարող է մէկը տիեզերական ընդունել այն ժողովը՝ որը փոդով էր գնում հաւատի անդամներ՝ որի որոշումները կայացել են սիմոնականութեան շնորհիւ» (խօսքն այստեղ պապի վերոյիշեալ խոստման մասին է)։ Ֆրանսիայում մինչև յեղափոխութիւնը Ֆլորենցիայի ժողովը մերժուած էր իբրև անվաւեր։ Այդ բանը Տրիդենտի ժողովում յայտնեց Guise կարդինալը և ոչ մի հակաճառութեան չհանդիպեցաւ։ Պայ՛ա դէ Անդրադա պորտուգալացի աստուածաբանը այդ բանի մասին հետևեալն է ասում։ Florentinam (synodum) sola Gallia—pro oecumentia nunquam habuit, quippe quam neque adire, dum agitaretur, neque admittere jam perfectam atque absolutam voluerit 1) (Defens. fid. Trident. pag. 431. ed. Colon. 1580).

Խնդրագրի մնացած մասը պարզում է այն հանգամանքը թէ հաւատի նոր դաւանութիւնը հաստատելը հէնց այժմ հարկաւոր և մինչև անգամ շատ անհրաժեշտ է՝ որովհետև նորերումը իրենց կաթոլիկ ձևացնող մի քանի անձեր պապի անսխալականութեան կործիքի դէմ վիճում են։ Այն բոլորի էութիւնը՝ ինչ որ խնդրագրի մէջ ասուած և ենթադրուած է իբրև (Հռոմում) յայտնի բան՝ կարելի է հետևեալ կերպով ամփոփել. իսկապէս հաւատի վարդապետութիւնների թիւը այս նոր դաւանութեամբ աւելացնելու անհրաժեշտութիւն չկայ՝ բայց իրերի դրութիւնն այնպէս է՝ որ այդ բանն այժմ անխուսափելի է։ Արդէն մի քանի տարի է՝ որ եղուիտների կարգը իւր համախոհների օգնութեամբ Իտալիայում՝ Ֆրանսիայում՝ Գերմանիայում և Անգլիայում—այս բոլոր երկրներում միաժամանակ՝—նոր դաւանութիւնը հաստատելու համար մի շարժում առաջացրեց. եղուիտները հաստատեցին և հրատարակեցին մի առան-

1) «Միայն Գալլիան էր՝ որ ոչ մի ժամանակ Ֆլորենցիայի ժողովը տիեզերական չընդունեց՝ որովհետև նա չկամեցաւ մասնակցել նորան և այդ ժողովը վերջանալուց յետոյ՝ չկամեցաւ ընդունել։ Ռ. Թարգ։

ձին կրօնական ընկերութիւն՝ որի նպատակն է մասնաւորապէս նոր դաւանութեան իրագործման համար աղօթելն ու գործելը։ Այդ ընկերութեան գլխաւոր օրգանը „Civilta“՝ որ Հռոմումն է հրատարակւում՝ հէնց սկզբից ժողովի նպատակը դրեց—սպասող աշխարհին պարգևել հաւատի մի նոր անդամ՝ որ պակասում է նորան։ Laacher Stimmen-ից առած՝ Վիեննայի հրապարակախօսները շատ անգամ անխոնջ կերպով և ընդարձակօրէն մշակում են նոյն թեման։ Այդ տեսակ շարժման ժամանակ բոլոր այլապէս մոռածողները պէտք է խորին յարգանքով լուռ մնային՝ պէտք է հանգիստ կերպով թողնէին՝ որ եզուիտները և նոցա համախոհները շարունակէին իրենց գործը՝ պէտք է նոցա շարադրութիւնների մէջ առաջ բերած ապացոյցները ոչ մի քննադատութեան չենթարկէին։ Դժբաղդաբար այդպէս չեղաւ. մի քանի մարդիկ մեծ յանդգնութեամբ խանգարեցին սրբազան լռութիւնը և տարբեր կարծիք յայտնեցին։ Այդպիսի գայթակղութիւնը կը փոխարինուի միայն նորանով՝ որ հաւատի հանգանակը կընդարձակուի և կրօնի մասին եղած բոլոր դասագրքերը կը փոխուին։

Ժողովի գործավարութեան նոր կարգը և դորա աստուածաբանական նշանակութիւնը։

1870. 9 մարտի 1)։

Գործավարութեան նոր կարգը՝ որ առաջարկուեցաւ ժողովին հինգ կարդինալ—լեգատների ձեռքով իրագործուելու համար՝ ամենևին նման չէ այն բոլորին՝ ինչ որ մինչև այժմ սովորական էր ժողովներում։ և մի և նոյն ժամանակ այդ կարգը ժողովի ապագայ գործունէութեան և նորանում կատարուելիք բազմաթիւ որոշումների համար պարտաւորեցուցիչ և վճռողա-

1) „Allgemeine Zeitung“. 1870, 11. März.

կան նշանակութիւն ունի։ Այդ պատճառով նա արժանի է ուշադրութեան։ Այս գործին պատմական կողմից ծանօթանալու համար բաւական է, եթէ կարճ կերպով յիշատակենք այն, որ հին եկեղեցու առաջին հազարամեակի տիեզերական ժողովների համար գործավարութեան ոչ մի որոշեալ կարգ չէ եղել։ Միայն հռոմէական և իսպանական տեղական ժողովների համար եղել է ժամապաշտական արարողութիւն [1])։ Ամեն ինչ առաջարկւում էր ամբողջ ժողովին. իւրաքանչիւր եպիսկոպոս ինչ առաջարկութիւն որ կամենար՝ կարող էր անել. իսկ նախագահները—կայսեր կողմից ուղարկուած աշխարհականներ լինէին դոքա, թէ հոգևորականներ՝ այդ մի և նոյն է—ամենապարզ կերպով էին ղեկավարում վիճաբանութիւնները։ Կոնստանցի և Բազելի մեծ ժողովները իրենք իրենց համար սահմանեցին մի կարգ, որոշեցին ժողովի անդամների դասակարգութիւնը և աղգութիւններով ձայն տալը։ Տրիդենտում այս կարգը նորից մերժուեցաւ։ Բայց ժողովին նախագահող լեգատները, միաբանելով միւս եպիսկոպոսների հետ՝ առաջարկեցին գործավարութեան մի ձև. այդ առաջարկութեան համար del Monte կարդինալը ձայն հաւաքեց և բոլորն էլ ընդունեցին այդ առաջարկութիւնը [2])։ Ոչ մի կողմից հակառակութիւն չեղաւ։ Այսպիսով Հռոմի այս ժողովը եկեղեցական պատմութեան մէջ առաջինն է, որի մէջ հաւաքուած հայրերը առանց իրենց մասնակցութեան ստանում են ժողովի գործավարութեան կարգը (процедура)։ Բայց այս Regolamento-ն (կանոնադրութիւն) այնքան ճնշող էր և այնքան անգործնական, որ եպիսկոպոսների զանազան կուսակցութիւններից (фракція) պապին մի քանի խնդիր տրուեցաւ այդ կանոնադրութիւնը փոխելու և աղատութիւն տալու համար։ Բայց իզուր։ Վերջապէս երեք ու կէս ամսից յետոյ իրենք՝ հինգ լեգատներն էլ խոստովանեցան, որ շատ անհրաժեշտ է փոփոխութեան ենթարկել գործավարութեան կարգը և յաւելումներ անել, ապա թէ ոչ՝ ժողովը ամենևին չի գործի։ Բայց այնուամենայնիւ նոր հաստատած կարգի մէջ եպիսկոպոսների խընդիրքների վերայ ոչ մի ուշադրութիւն չէ դարձուած։

Այս կարգի մէջ նախ երկու բան է աչքի ընկնում։ Առաջին՝ որ ժողովի ընթացքի վերայ բոլոր իշխանութիւնն ու ազդեցութիւնը լեգատ—նախագահների և պատգամաւորութիւնների ձեռքն են տուած, այնպէս որ նոցա առաջ ժողովը ոչ մի իրաւունք և ոչ մի կամք չունի։ Երկրորդ՝ հաւատի և վարդապետութեան նշանաւոր հարցերը պէտք է վճռուէին ձայնի բազմութեան պարզ եղանակով—նստելով և վերկենալով։

Ժողովի նախընթաց երկու տարուայ ընթացքում, ինչպէս յայտնի է, մշակուեցան շատ գրուածքներ նոցա վերաբերեալ շատ կանոնների և հրովարտակների հետ ի միասին։ Այս հրովարտակներն ու կանոնները նախ պէտք է ժողովն ընդունի և սորանից յետոյ էլ պապը approbante concilio (ժողովի համաձայնութեամբ) պէտք է նոցա հրատարակէ իբրև ամբողջ կաթոլիկական քրիստոնէութեան համար հաւատոյ և վարդապետութեան նորմաները (норма)։ Այդպիսի ծրագրները թուով 51 հատ են. սոցանից մինչև այժմ քննութեան են ենթարկուել միայն հինգը։

Այն կարգը, որ պէտք է խորհրդածութիւնների և ձայնաբերութեան ժամանակ տիրէ՝ հետևեալն է։

ա. Ուրուագիծը նիստից մի քանի (10) օր առաջ բաժանւում է ժողովի հայրերին, որոնք կարող են իրենց գրաւոր նկատողութիւններն անել և բարեփոխութիւններ առաջարկել։

բ. Այս դէպքում նոքա պարտաւոր են անմիջապէս ներկայացնել իրենց բաւականութիւն չտուող յօդուածի տեղը նորա արտայայտութեան կամ ձևի նոր ծրագիր։

գ. Այդ տեսակ առաջարկութիւնները ուղղւում են պատշաճ պատգամաւորութեան քարտուղարին։ Այդ պատգամաւորութիւնների թիւը չորս է. պատգամաւորութիւնը օգտւում է նոցանից իւր տեսակէտի համեմատ. ուղղում է ուրուագիծը, եթէ

2) Այդ արարողութիւնը ընդունել է կեղծ-Իսիդորը. Mansi-ն տպել է Concil. Coll.-ի մէջ I, 10.

1) Le Plat, Monumenta, III, 418: Dicant Patres, utrum hic modus procedendi eis placeat (Թող ասեն հայրերը, արդեօք դո՞ւր է գալիս նոցա գործավարութեան այդ ձևը),—որ և քուէարկութեան ենթարկուեցաւ։

այդ նպատակայարմար համարի և ապա բոլոր առաջարկութիւնների մասին հաշիւ տալու ժամանակ համառօտ կերպով յայտնում է բոլորը ժողովին։

Դ. Նախագահները կարող են ուրուագիծը քննութեան առաջարկել կամ ամբողջը մի անգամից կամ մաս մաս։

Է. Քննութեան ժամանակ նախագահը կարող է դադարեցնել ամեն մի ատենաբանին, եթէ տեսնի, որ սա շեղւում է խնդրից։

Ը. Պատգամաւորութիւնների անդամ-եպիսկոպոսները ամեն րոպէ կարող են խօսել ուրուագծի որ և է կէտը չընդունող եպիսկոպոսներին պատասխանելու համար։

Է. Վիճաբանութիւնների եզրակացութիւնը առաջարկելու համար բաւական է տասը եպիսկոպոս, որոնք այս դէպքում ընտրւում են հասարակ մեծամասնութեամբ՝ նստելով և կանգնելով։

Ը. Ուրուագծի առանձին մասերի համար քուէարկութեան ժամանակ առաջ ձայն է հաւաքւում առաջարկուած փոփոխութիւնների և ապա պատգամաւորութեան առաջարկած բնագրի համար՝ դարձեալ հասարակ մեծամասնութեամբ — նստելով և կանգնելով։

Ը. Դորանից յետոյ ձայն են հաւաքում ամբողջ ուրուագծի համար և այս դէպքում հայրերից իւրաքանչիւրը կամ placet է պատասխանում և կամ non placet։ Արդեօք այստեղ էլ հասարակ մեծամասնութիւն է որոշողը՝ այդ նշանակուած չէ։ Անալոգիայով եթէ դատենք՝ դուրս է գալիս, որ այդպէս պէտք է լինի։ Որովհետև ինքը ուրուագիծն էլ մի ուրիշ աւելի մեծ ամբողջութեան մի մաս է միայն և ոչ մի հիմք չկայ չվարուելու մեծ մասի հետ ինչպէս փոքրի հետ։ Եթէ այս դէպքում գործ չդնէին հասարակ մեծամասնութեան սկզբունքը՝ նոքա չէին կարող այդպիսի նշանաւոր ուրուագծեր իրագործել։

Ինչպէս երևում է գործավարութեան այս կարգի մէջ ընդունուած են և մի քանի պարլամենտական ձևեր, բայց եթէ քաղաքական ժողովներում գոյութիւն ունին այս կարգադրութիւնների նման կարգադրութիւններ՝ նոքա ծառայում են փոքրամասնութեան պաշտպանութեան համար մեծամասնութեան դէմ։ Մինչդեռ այստեղ հակառակն է, ինչպէս երևում է այդ կարգադրութիւնները դրուած են այն նպատակով, որ մեծամասնութիւնը աւելի զօրեղ և անյաղթելի դարձնեն և այս բանը երևում է այն հանգամանքից, որ նորան (մեծամասնութեան) տուած է վէճերը իւր ուզած ժամանակ դադարեցնելու, հետևապէս և փոքրամասնութիւնից խօսք խլելու իրաւունքը։ Այս բանը աւելի ճնշող ներգործութիւն պիտի ունենայ, մանաւանդ որ ինչպէս առանձին եպիսկոպոսները, այնպէս էլ նոցա ամբողջ խմբերը չեն կարող հաղորդել իրարու իրենց կարծիքները կամ բացատրութիւնները տպագրութեան միջոցով։

Քաղաքական ժողովներում կարելի է հասարակ մեծամասնութեամբ որոշումներ անել կամ օրէնքներ հրատարակել, որովհետև ոչ մի պարլամենտ և ոչ մի պալատ իրենց նախընթացների օրէնքների և որոշումների հետ ամենևին կապուած չէ։ Սոցանից իւրաքանչիւրը և ամեն մի ժամանակ կարող է ոչընչացնել կամ փոփոխել իւր նախորդի արածը։ Բայց տիեզերական ժողովի դաւանաբանական որոշումները համարւում են անձեռնմխելի և անփոփոխ ամեն ժամանակ։

Կարելի է նախատեսել, որ այս ժողովի մեծամասնութիւն կատարուելիք քուէարկութիւնների ժամանակ ոչ կը մեծանայ և ոչ էլ կը փոքրանայ վճռուելի հարցերի փոփոխուելով, այլ կը մնայ միևնոյնը. շատ շատ թուի մէջ փոքր տատանումներ կը լինին։ Որովհետև յայտնի է, որ հէնց սկզբից դեռ պատգամաւորութիւնների ընտրութեան ժամանակ նախ քան քուէարկութիւնը արդէն ակնյայտնի կերպով որոշուեցաւ մեծամասնութիւնը և փոքրամասնութիւնը։ Այդպէս էլ պէտք է լինէր, որովհետև պապի անսխալականութեան հարցում իսկոյն երևաց արմատական հիմնաւոր հակառակութիւն և իսկոյն հասկացան, որ ժողովի գլխաւոր նիւթը այս հարցն է լինելու և որ միւս բոլոր հարցերը սորանից կախումն ունին։ Պէտք է ասասել որ անսխալականութեան թէօրիայի կուսակիցները իսկոյն և եթ կը տան իրենց ձայնը պատգամաւորութիւնների առաջարկութիւններին, ինչ ձևով էլ լինին այս վերջիններս։ Զէ՞ որ, եթէ նոքա հետևողական են, պէտք է ընդունեն ամեն բան, ինչ որ Հռոմի գահիցն է բղխում։

բայց նոքա արդէն ձեռք են առել բոլոր միջոցները այն բանի համար, որ պատգամաւորութիւնները—որոնք ուրուագծերի բարեփոխման վերաբերեալ առաջարկութիւնների վերայ այդքան ընդարձակ և անբողոքելի (безапелляціонный) իշխանութիւն ունին—այդ պատգամաւորութիւններն ունենան միայն Ֆ հայեցակէտ: Բաւական է միայն մի հայեացք ձգել պատգամաւորութիւնների գլխաւոր անձնաւորութիւնների վերայ. նախ այդտեղ է Կարդինալ Հռոմայեցին, որը արդէն նախապատրաստող մասնաժողովում իւր զեկուցումով առաջարկեց պապի անսխալականութեան վարդապետութիւնը և իւր մասնաժողովի մէջ ընդունեց նրան. յետոյ Շոէյնս եպիսկոպոսը, այնուհետև Դեշան (Dechamps) Մեխելնացի, Շպալդինգ Բալտիմորացի, Պիոս Պուատիացի, Լեդոխովսկի, Հասսուն Հայը, դը Պրէն (von Sitten) Մարտին, Սենեհ, տրէյ, Հասսէր (von Brixen) Գերմանացիները, երկու սպանիացիներ, երեք ամերիկացիներ, երեք իտալացի, մի իրլանդացի, վերջապէս Սիմար, Ռենիէ և Շէոման:

Հազար ութհարիւր տարի շարունակ եկեղեցում գոյութիւն ունէր մի հիմնական կանոն, այն է՝ թէ հաւատի և վարդապետութեան վերաբերեալ որոշումները միաձայն պէտք է ընդունուին, գոնէ ընդհանուր բարոյական համաձայնութեամբ: Այս կանոնը կաթուղիկէ եկեղեցու ամբողջ սիստեմի հետ սերտ կապ ունի: Ոչ մի օրինակ չկայ, որ մի որ և է վարդապետութիւն վճռուած լինի ձայների հասարակ մեծամասնութեամբ և ապա գործ դրուի, մանաւանդ երբ որ փոքրամասնութեան կողմից էլ ընդդիմութիւն կայ:

Այս բանը պարզելու համար ես տեղ [1]) պէտք է խնդրեմ մի կարճ աստուածաբանական, բայց բոլորովին հասկանալի հեռաղօտութեան համար:

Եկեղեցու նպատակն է նորան սկզբից յանձնուած յայտնութեան վարդապետութեան գրականը պահպանել և նորա-

1) Դեոլլինգերը այս յօդուածը տպագրել է «Allgemein Zeitung» լրագրի մէջ: Ռ. Թ.:

նից օգտուել [1]): Նա նոր յայտնութիւններ չէ ստանում և հաւատի ոչ մի նոր անդամ չէ ստեղծում: Իսկ ինչ որ ասում է եկեղեցու մասին, նոյնը պէտք է ասուի և տիեզերական ժողովի մասին [2]): Ժողովը ամբողջ եկեղեցու ներկայացուցիչն է, նորա միաւորութիւնն է. ժողովի եպիսկոպոսները—կաթոլիկական աշխարհի բոլոր եկեղեցիների պատգամաւորներ և լիազօր իշխանութիւն ստացած գործակալներ են: Նոքա պարտաւոր են հաւատացեալների կողմից յայտնել թէ այս կամ այն կրօնական հարցի մասին ի՞նչ են մտածում նոքա, ի՞նչ են դաւանում և ի՞նչ են ընդունել իբրև աւանդութիւն: Հետևապէս նոքա մի տեսակ պրոկուրատորներ են, որոնք իրենց տուած իրաւունքի սահմանից դուրս գալու իրաւունք չունին [3]): Եթէ նոքա սահմա-

1) Այս հարցերը վճռելիս աստուածաբանութիւնը դիմեց Վիկենտիոս Լիրինացու 434 թուին լոյս տեսած Commonitorium շարադրութեանը, որը առհասարակ կանոնաւոր և կլասիկական է ճանաչուած: Այդ պատճառով էլ ես այսուհետև աչքի առաջ կունենամ այս շարադրութիւնը:

2) Այսպէս է ասում Ռոչեստրի Ficher եպիսկոպոսը — որ իւր կեանքը զոհեց պապի առաջնութեան համար—իւր Լիւտերի դէմ գրած վիճաբանական շարադրութեան (Opera, ed. Wirceburg. 1597, թ. 592) մէջ, որտեղ նա մատնացոյց է անում Դունս Սկոտի նմանօրինակ նախադասութեան վերայ—In eorum (ժողովին պապի հետ) arbitrio non est situm, ut quicquam tale vel non tale faciant, sed spiritu potius veritatis edocti id, quod revera pridem de substantia fidei fuerat, jam declarant esse de substantia fidei. Մինչդեռ էլ Davenport, systema fidei, p. 140: secundum receptam, tam veterum, quam modernorum doctorum sententiam ecclesia non potest agere ultra revelationes antiquas; nihil potest hodie declarari de fide, quod non habet talem identitatem cum prius revelatis... Unde semper docet Scotus: quod illae conclusiones socum possunt infallibiter declarari et determinari per ecclesiam, quae sunt nelessario inclusae in articulis creditis. Si igitur per accidens conjunguntur, vel si solum probabiliter sequuntur ex articulis, fidem non attingent per quascumque determinationes, quia concilia non possunt identificar, quae sunt ex objecto diversa, nec sario inferre ea quaesolum apparenter sev probabiliter sunt inclusia in articulis creditis.

3) Conclium non est ipsamet ecclesia, sed ipsam tantum representat:————id est episcopi illi, qui concilio adsunt, legati mittuntur ab omnibus omnium gentium

նից դուրս գային, այն ժամանակ այն եկեղեցին, որի ներկայացուցիչներն են նոքա՝ նոցա կազմած վարդապետութիւնը և որոշումը չէր հաստատի, ընդհակառակն կը մերժէր, որպէս իւր հաւատի հակառակ բան։

Եպիսկոպոսները ժողովում ամենից առաջ վկաներ են, նոքա արտայայտում և հաստատումեն այն՝ ինչ որ նոքա և նոցա համայնքները ընդունել են և մինչև այժմէլ դաւանել են իբրև հաւատի վարդապետութիւն։ Բայց նոքա միևնոյն ժամանակ և դատաւորներ են. միայն նոցա դատաւորական իշխանութիւնը հաւատի վերաբերմամբ չէ կարող վկայութեան սահմաններից այն կողմն անցնել, ընդհակառակը միշտ պայմանաւորուած և սահմանափակուած է նորանով։ Իբրև դատաւորներ նոքա կոչուած են ոչ թէ օրէնքներ (հաւատի վարդապետութիւն) ստեղծելու համար, այլ միայն նոցա մեկնելու և գործադրելու համար։ Նոքա ենթարկուած են եկեղեցու հրապարակական իրաւունքեան (публичное право), որի ոչ մի կէտը չեն կարող փոխել։ Նոքա կատարումեն իրենց դատաւորական պաշտօնը երբ, նախ՝ իրենց ստացած վկայութիւնները իրար հետ համեմատում և նոցա նշանակութիւնը կշռադատումեն և երկրորդ՝ երբ բարեխիղճ ստուգութիւնից յետոյ յայտնումեն՝ թէ արդեօք այս վարդապետութեանը յարմարումեն՝ երեք անհրաժեշտ պայմանները՝ ընդհանրականութիւն, ամենուրեքութիւն և մշտականութիւն (непрерывность)—ubique, semper, ab omnibus—և հետևապէս կարելի՞ է արդեօք այս ուսումը բոլորին առաջարկել իբրև ամբողջ ե-

---

catholicarum ecclesis, qui ex nomine totius universitatis declarant, quid ipsa universitas sentiat et quid traditum acceperit. Itaque ejusmodi legati omnium ecclesiarum sunt veluti procuratores, quibus nefas esset procurationem sibi creditam tantillum exceder. Unde constat, quod si quingenti episcopi, ut videre est in exemplis Ariminensis et Constantinopolitanae contra imagines coactae synodi, suam de fide communi declaranda procurationem tantillum excederent, universa ecclesia, cujus sunt tantummodo procuratores et simplex representatio, definitionem factam ab illis ratam non haberet, imo repudiaret. Oeuvres de Fenelon, Versailles, 1820, II, 361.

կեղեցու ընդհանուր վարդապետութիւն, իբրև աստուածային աւանդի էական մի մաս և կարելի՞ է արդեօք պարտաւորեցնել իւրաքանչիւր քրիստոնէին, որ դաւանի այդ վարդապետութիւնը [1]։ Այդ պատճառով վարդապետութիւնը պիտի ստուգում հաւատի թէ անցեալի և թէ ներկայի վերաբերմամբ։ Այսպիսի եպիսկոպոսների ամե՛ն մի կամայականութիւնը, ամեն մի անձնական կարծիքը և նոցա ժողովում ունեցած պաշտօնը իրար չեն բռնում։ Սա թեթևամտութիւն կլինէր և կորուստ. եկեղեցին ոչ մի նոր յայտնութիւն չէ ընդունում հաւատի ոչ մի նոր անդամ չէ աւելացնում. այդ պատճառով ժողովն էլ չէ կարող և իրաւունք էլ չունի հաւատի էութիւնը փոխել, իրաւունք չունի որ և է բան աւելացնել և ոչ էլ պակասեցնել։ Հետևապէս ժողովը իւր վարդապետական որոշումներն անում է միայն այնպիսի առարկաների մասին, որոնց բոլորը հաւատացել են [2] իբրև ս. Գրքի

---

1) Այսպէս է ասում Bagot եղբայրը իւր „Institutio theologica de vera religione“ շարադրութեան մէջ (Paris, 1645, եր. 395). Universitas sine duabus aliis, nimirum antiquitate et cunsensione, stare non potest. Quod autem triplici iliaprobatione confirmatur, est haud dubie ecelesiasticum et catholicum. Quod si universitatis nota deficit et nova aliqua quaestio exonitur, novaque contagio ecelesiam commaculare incipit, tunc hac universitate praesentium ecclesiarum deficiente recurrendum est ad antiquitatem. Notat enim Vincentius. posse aliquam haereseos contagionem occupare multas ecclesias sicut con—tat de Ariana adeo ut aliquando plures ecclesiae et episcopi diversarum nationum. Arianiquam catholici reperirentur. Et quantumvis doctrina aliqua latissime pateat, si tamen nova esse constat, haud dubie erronea est, nec enim est apostolica, nec per successionem et traditionem ad nos usque pervenit. Deinde, ut notat idem Vincentius, antiquitas non potest jam seduci. Verumenimvero quia et ipse error antiquus esse potest, idcirco, cum consulitur vetustas, in ea quaerenda est consensio.

1) Այսպէս Վիկենտիոսն ասում է՝ Hoc semper n e c q u i d q u a m a l i u d conciliorum decretis catholica perfecit ecclesia, nisi ut quod a majoribus sola traditione susceparat, hoc deinde posteris per scripturae chirographum consignaret. Commonit. cap. 32. Տրիգենտի Bega աստուածաբանն էլ ասում է (Davenport, p. 9) Concilia generalia hoc tantum habent, ut veritates jam alias,

և աւանդութեան կողմից վկայուած, և կամ որոնք այս հիմնական դրութիւնների մէջ—որոնց արդէն վարդապետել և հաստատել են՝—պարունակւում են իբրև նոցա ակնյայտնի հետևանքներ: Իսկ եթէ մի որ և է կարծիք մի քանի դար շարունակ ընդդիմութիւն է գտել, որի դէմ վիճել են աստուածաբանութեան ամեն միջոցներով և հետևապէս եթէ նա մի քիչ խախուտ է և հաստատ չէ՝ ապա ուրեմն նորան ոչ մի ժամանակ ոչ ոք և ոչ նոյն իսկ ժողովը չէ կարող աներկբայ դարձնել՝ այսինքն աստուածայայտնեալ վարդապետութեան արժանաւորութիւն տալ նորան: Այս հանգամանքից է ծագել այն՝ որ հայրերը ժողովներում մի որ և է գաւանաբանական որոշում ընդունելիս կամ հրատարակելիս ասում էին. Այս հաւատը հայրերի հաւատն է:

Հետևապէս եթէ, օրինակ, ամբողջ եկեղեցու անսխալականութեան (որին հաւատում և որը վարդապետում էին հնուց) տեղ դնենք եղակի մարդու անսխալականութիւն, ապա ոչ զարգացում և ոչ էլ բացատրութիւն կը լինի այն բանին, ինչին սկզբում հաւատում էին implicite, ապա չի լինի նախկին վարդապետութիւնից տրամաբանօրէն բղխած հետևանք, այլ հակասութիւն, նորա աղճատումն, նոյն բանը երևում է և քաղաքականութեան մէջ. եթէ մինչև այժմ ազատ հասարակական կազմակերպութեանը փոխարինէ բացարձակ միապետութիւն՝ ապա կեանքի յառաջադիմութիւն չէր լինի, ոչ էլ զարգացում, այլ կը լինէր յետադիմութիւն, տիրապետող կարգերի տապալումն:

Հետևապէս այն ժամանակամիջոցը, երբ տիեզերական ժողովը խորհրդածում է քրիստոնեաների հաւատի մասին՝ կրօնական գիտակցութեան ամենազօրեղ գրգռման ժամանակն է, երբ եկեղեցու հաւատարիմ զաւակները հրաւիրւում են իրենց հաւատի առարկայի մասին բացարձակ վկայութիւն տալու: Եկեղեցական պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ վկայութիւններով աշխատել են ոչ թէ եպիսկոպոսներին ճնշել և արգելքներ յարուցանել, այլ թեթևացնել ժողովի գործը այդ մեծ խնդրի նկատմամբ: Վկայել, ցանկութիւններ յայտնել, եկեղեցու կարիքները ցոյց տալ—այդ կարող է իւրաքանչիւրն անել, թէկուզ դա լինի աշխարհական:

Երբ որ գործը մի նոր դաւանութիւն ընդունելուն է վերաբերում, որը թէև մի կողմից խրախուսւում է, սակայն հաւատացեալների գիտակցութեանը օտար է և նորութիւն է երևում նոցա՝ այն ժամանակ աշխարհականների բողոքը իրաւացի և անհրաժեշտ է, և անկասկած վկայում է, թէ որքան նոքա կապուած են նոցա աւանդած հաւատքի հետ. բողոքելը նոցա պարտքն է:

Իսկ երբ որ ժողովում որոշ թուով եպիսկոպոսներ հակառակւում են մի կարծիքի, որ հրատարակուելու է իբրև դաւանութիւն, այդ ապացուցանում է թէ այն եկեղեցիներում, որոնց ներկայացուցիչներն են այդ եպիսկոպոսները՝ այդ կարծիքը ոչ առաջ էր ընդունուած և ոչ էլ այժմ համարւում է ճշմարիտ աստուածայայտնեալ վարդապետութիւն: Այս էլ ապացուցանում է, թէ այդ կարծիքը կամ վարդապետութիւնը զուրկ է երեք ամենաէական յատկութիւններից—ամենուրեքութիւն, մշտականութիւն և ընդհանրականութիւն, հետևապէս նա չէ կարող պարտաւորեցուցիչ լինել ամբողջ եկեղեցու համար իբրև աստուածային յայտնութիւն:

Այդ պատճառով եկեղեցին միշտ անհրաժեշտ է համարել մի կողմ դնել հրովարտակը և ոչ մի որոշումն չանել, եթէ այդ հրովարտակին հակառակւում են որոշ թուով եպիսկոպոսներ: Որ և է վարդապետութեան իսկական տիեզերականութիւնը ակընյայտնի կերպով անվիճելի պիտի լինի, իսկ այդ բանը չի լինի,

---

vel in seipsis, vel in suis principiis a Deo ecclesiae vel ss. Patribus revelates, vel per scripturas vel traditionem prophetarum et apostolorum, tum declarent, tum confirment et sua auctoritate claras et apertas et absque ulla ambiquitate ab omnibus catholicis tenendas tradant. Addit: et ad hoc dico: praesentia Spiri, tus Sancti illustrantur, primo ut infallibiles declarent veritates ecclesiae revelates, et secuado, ut ad terminanda dubia in ecclesia suborta extir nandosque errores et abusus infallibiliter etiam ex revelatis collicand populo christiano credenda et usuranpda in fide et moribus.

եթէ գոնէ փոքրամասնութիւնը ապացուցանում է, որ ամբողջ տեղական մասնաւոր եկեղեցիներ չեն դաւանում այդ վարդապետութիւնը:

Այս պատճառով ամեն մի ժողովի գլխաւոր հարցն այս էր. արդեօք ժողովի բոլոր անդամներն են ընդունում հաւատի այս ինչ որոշումները: Այսպէս էր Նիկիայի առաջին տիեզերական ժողովում, որտեղ 318 եպիսկոպոսներից միայն երկուսը հրաժարուեցան ստորագրելուց: Քաղկեդոնում շատ ուշացրին վերջնական որոշումը, մի քանի անգամ կրկնեցին հետազօտութիւնները, մինչև որ վերջապէս վերացան այն տարակուսանքները, որ գլխաւորապէս Պաղեստինի և Իլլիրիայի եպիսկոպոսները ունէին Լևոնի թղթի մասին: Ժողովը վերջացնելուց առաջ Մարկիանոս կայսրը պահանջեց, որ յայտարարուի հետևեալը. արդեօք բոլոր (600-ից աւելի) եպիսկոպոսները համաձայնութիւն տուին հաւատի որոշմանը. բոլորը յօժարութեամբ հաստատեցին այս բանը և դորա համար ինքը Լևոն պապը գոհութիւն յայտնեց Աստուծուն, որ նորա թուղթը «շատ կասկածներից և տարակոյսներից յետոյ հաստատուեցաւ եպիսկոպոսների միահամուռ համաձայնութեամբ»: Վեցերորդ տիեզերական ժողովումն էլ իբրև պատասխան կայսրի հարցին՝ եպիսկոպոսները վաւերացրին, որ «դաւանաբանական որոշումը ընդհանուր համաձայնութեամբ կայացաւ»: Միևնոյնն եղաւ եօթներորդ ժողովում 767 թուին: Կարլոս Մեծն էլ այսպէս յայտնեց իսպանական եպիսկոպոսներին Ֆրանկֆուրտի 794 թ. մի ժողովի մասին. ամեն բան կատարուեցաւ quatenus sancta omnium ananimitas decerneretetc. (որպէս որոշեց բոլորի սուրբ միաբանութիւնը և ն.):

Տրիդենտի ժողովում Պիոս Դ. պապը պատուիրեց լեգատներին, որ չվճռեն ոչ մի բան, ինչ որ բոլոր հայրերին հաճելի չլինի: Այսուհետև գանուած եպիսկոպոսներից մինը — Payva de Andrada-ն գրում է. Քանիցս անգամ ամբողջ շաբաթներով, ամիսներով անվճիռ էին թողնում հրովարտակը միայն այն պատճառով, որ մի քանի եպիսկոպոսներ կամ հակառակում էին և կամ կասկածներ էին յայտնում: Հրովարտակը միայն այն ժամանակ

էին հրատարակում, երբ երկար և փութաջան խորհրդածութիւններից յետոյ ձեռք էին բերում բոլոր հայրերի համաձայնութիւնը: Payva-ն շատ օրինակներ է բերում դորա համար [1]): Բասիլեան էլ Պիոս Դ.-ի այս պատուէրի մասին նկատում է. «սա ճշմարիտը կասկածաւորից զանազանելու ամենալաւ կանոնն է»:

Բոլոր աստուածաբանները որ և է ժողովի տիեզերականութեան այս պայմանն էլ են դնում: այդ ժողովում կատարեալ ազատութիւն պէտք է տիրի, խօսքի ազատութիւն և ձայնատրութեան ազատութիւն: Տուրնելին ասում է. Ոչ մէկին պէտք չէ մերժել եթէ կամենում է խօսել: Միայն ֆիզիկական բռնութիւնը չէ, որ կարող է ժողովի որոշումները բոլոր նշանակութիւնից և արժանաւորութիւնից զրկել: Ազատութիւնը, ճշմարիտ ժողովի այս կենսական շունչը, կարող է ճնշուել, իսկ սորանով ոչնչանում է ժողովի օրինականութիւնը. ազատութիւնը ճնշում է և այն բազմատեսակ ձևերով, որոնցով երևում է բարոյական ճնշումը և կամ որոնցով մարդ ինքն է կապում իւր ձեռքն ու ոտքը (օր. սիմոնականութեան զանազան ձևերը): Տուրնելին երկիւղը, պաշտօն ստանալու ծարաւը, արծաթասիրութիւնը այն կրքերի շարքն է դասում, որոնք ժողովներում իրենց ազդեցութիւնը գործելով՝ ոչնչացնում են նոցա ազատութիւնը:

Երբ Սելևկիայում և Միևնոյն ժամանակ Բիմինիում սեղի ուրուեցաւ մեծ բաժանում, երբ 600-ի չափ եպիսկոպոսներ հրաժարուեցան ընդհանուր դաւանութիւնից. այդ բոլորի պատճառն էր «թուլասրտութիւնը և երկարտաև ճանապարհորդութեան երկիւղը», որոնք յաղթեցին եպիսկոպոսներին: (Partium imbecillի երկիւղը»

---

1) Defensio fidei Tridentinae, f. 17: Cum quindecim fere aut viginti dubitare se ajebant, ne vero quicquam praeter conciliorum vetustum morem concluderetur, horum paucorum dubitatio plurimorum impetur retardavit atque effecit, ut res in aliam sessionem dilata, omnium fere calculis tandem definiretur. Համեմատիր և հետևեալը. Ինչպէս երևում է, Տրիդենտում տիրապետող համատիր և հետևեալը. Ինչպէս երևում է, Տրիդենտում տիրապետող համոզմունքն այն է եղել, որ ամեն բան պիտի որոշուի և խօսուի հին ժողովների օրինակով. գոնէ պէտք է պահպանուի այդ ժողովների ամենաէական ձևը:

tate ingenii, partim tædio peregrinationis evicti, Sulp. Sever. 2, 43).

Եպիսկոպոսների ամենամեծ բազմութեամբ հաւաքուելը—այս հասարակ իրողութիւնը դեռ ևս չէ ապացուցանում, որ ժողովը տիեզերական է և կամ ինչպէս ասում են աստուածաբանները, օր. Տուրնելին. ժողովը կարող է տիեզերական համարուել գումարման նայելով. բայց թէ տիեզերական կը մնա՞յ իւր ընթացքին և վախճանին նայելով՝ այդ բանը ժողովը չէ կարող իւր մասին վկայել: Դորա համար անհրաժեշտ է մի ուրիշ վկայութիւն էլ, որ ամեն տեսակ ժողովից բարձր է, այն է ամբողջ եկեղեցու վճռող և հաստատող վկայութիւնը: Քրիստոսի խօսքերն էլ «իւր անունով երկու կամ երեք հաւաքուածի մասին»— որ առհասարակ առաջ են բերում— ժողովին է վերագրւում, իսկ այս բանը, ինչպէս և ընդունում են բոլոր աստուածաբանները՝ շատ պայմաններից է կախուած, որոնք առաջ է բերում, օրինակ Տուրնելին 1): Բայց եկեղեցին էլ խոստումներ ունի և նա պէտք է համոզուած լինի, որ ժողովում ֆիզիկական և բարոյական ստիպմունքներ չեն եղել. չէ եղել ոչ վախ, ոչ կրքեր, ոչ գայթակղութիւններ—ինչպէս շատ յաճախ պատահում էր Բիմինիում:—նա պէտք է համոզուած լինի, որ այդտեղ

1) Quaeres: quibus conditionibus promisit Christus se conciliis adfuturum? Resp. Ista generali: si in nomine suo congregata fuerint; hoc est servata suff agiorum libertate, invocato coelesti auxilio, adhibita humana industria et diligentia in conquirenda veritate. Deus scilicet, qui omnia suaviter disponit ac moderatur, via supernatarali aperta et manifesta non adest conciliis, sed occulta Spiritus subministratione. (Deus) permittit, episcopis omnibus humanae infirmitatis periculis subjacere et aliquando succumliere, neque enim unquam promisit, se a conciliis ejusmodi pericula certo semper propulsaturum, sed hoc unum, se iis semper adfuturum, qui in suo nomine congregarentur. Congregari avtem in suo nomine sensentur, quoties eas observant leges et conditiones, quas voluit observari. Tournely, Praelentiones theologicae de Deo et divinis attributis, I, 165. Նոյն միտքն աւելի արծարծում է Տուրնելին իւր „Praelectiones theologicae de ecclesia Christi"-ի մէջ I, 384.—Deus episcopos permittit omnibus humanae infirmitatis periculis obnoxios esse, metus scilicet, ambitionis, avaritiae, cupiditais et c.

ուրեմն ապատութիւն է տիրել: Այս տեսակէտից Բոսսիւէտը այսպէս է խօսում տիեզերական ժողովի մասին. ժողովում պէտք է հաւաքուած լինին այնքան եպիսկոպոսներ և այնքան երկրներից, և միւսների համաձայնութիւնը սորա հետ այնքան ակնյայտնի պիտի լինի, որ բոլորի համար պարզ լինի թէ այդտեղ մուծուել է ամբողջ աշխարհի հայեացքը 1):

Հետևաբար եթէ երևաց որ ժողովի մէջ ամենևին «չէ մուծուել ամբողջ աշխարհի հայեացքը», որ այդ ժողովում ընդհակառակը, կազմուել են մեծամասնութեան որոշումները, որոնք հակասում են եկեղեցու նշանաւոր մասի հաւատքին՝ այն ժամանակ անկասկած կաթուղիկէ աշխարհում կը զարթնեն հեռևեալ հարցերը: Արդեօք մեր եպիսկոպոսները ա՞ռել են իրենց վիճակների ուղիղ վկայութիւնը նորա հաւատի մասին. և եթէ չեն առել, արդեօք իսկապէս ազա՞տ են եղել թէ ոչ, կամ՝ արդեօք չէ՞ յարգուել նոցա վկայութիւնը կամ՝ մեծամասնութիւնը արդեօք չէ՞ զօրել նոցա, ինչպէս որ վերջիններս պատահած են: Այս հարցերի պատասխանները կը պայմանաւորեն եկեղեցու ապագայ իրողութիւնները: Հէնց այդ պատճառով էր, որ ամբողջ եկեղեցու մէջ պահպանւում էր կատարեալ հրապարակականութիւն իբրև ժողովի սեպհականութիւն: Չէ՞ որ ամբողջ քրիստոնէական եկեղեցու համար մեծ

1) Histoire de variations l, 15, n. 1000. Այդ պատճառով Հելասիոս պապը կանոնաւոր անցած ժողովից պահանջում է ոչ միայն այն, որ նա իւր որոշումները կազմէ Ս. Գրքի, Աւանդութեան և եկեղեցական կանոնների համեմատ, այլև այն, որ նա ընդունուի ամբողջ եկեղեցու կողմից—quam cuncta recepit ecclesia (Epist. 13 y Zabb. Concil. IV, 1200 և 1203). Նիկոլն (Nicol) էլ նկատում է ընդդէմ կալվինականների՝—տիեզերական անուն կրող ժողովը այդպէս էլ պէտք է ճանաչուի եկեղեցու կողմից (Prétendus Réformés conviancus de schisme, 2, 7. p. 289). Եկեղեցին միայն վկայում է ժողովների մասին, բայց երբէք նոցա հեղինակութիւն չէ տալիս, ինչպէս և իւր բիբլիական կանոնով վկայում է Աստուածաշնչի առանձին գրքերի մասին, մինչդեռ նոցա ներքին հեղինակութիւնը բնականաբար եկեղեցուց չէ կախուած: Այստեղ էլ նա միայն testis է բայց ոչ auctor fidei.

նշանակութիւն ունի իմանալ ոչ միայն այն, որ մի որ և է որոշում եղել է, այլ և այն թէ ինչպէս է կայացել այդ որոշումը։ Այդ Ֆելդէ խօսքից կախուած է ամեն ինչ և որոշ վկայ են 359, 449, 751 և այլն թուականները։ Չէ կարելի հիմնուել Տրիդենտի ժողովի վերայ, որ դատապարտուած էր լռութեան, որովհետև նախ՝ միայն նախազգուշութիւն էր արուած և երկրորդ՝ այդ նախազգուշութիւնը վերաբերում էր միայն ծրագիրների հրատարակութեան, որոնք Տրիդենտից հեռու գտնուած երկրներում շփոթում էին իսկական որոշումների հետ, այսպիսի դէպք այժմ տեղի չէ կարող ունենալ տպագրութեան այժմեան դրութեան պատճառով։

Դ.

Միւնխենի և Ֆրէյզինգենի արքեպիսկոպոս Գրիգորիոս ֆոն Շերը գրում է Միւնխենի աստուածաբանական ֆակուլտետին։

20 Հոկտեմբ. 1870 թ. 1)։

Բարձրապատիւ աստուածաբանական ֆակուլտետ !.

Դիմում եմ ներկայ նամակով Լուդովիկոս Մակսիմիլիանի համալսարանի աստուածաբանական ֆակուլտետին հեռացնելու համար, որքան ինձանից կախուած է, հեռաւոր շրջաններում այն գրութեան վերաբերմամբ յուզիչ կարծիքները և դժուարին խռովութիւնները, որ վերոյիշեալ աստուածաբանական ֆակուլտետը մտադիր է ընդունել Վատիկանի տիեզերական ժողովի և նորա

1) Արտատպուած են «Actenstücke des Ordinariates des Erzbisthums München und Freising betreffend das allgemeine Vaticanische Concil, Regensburg 1871»-ից։

մինչև այժմ գոյութիւն ունեցող որոշումների վերաբերմամբ։ որանով ես միայն կատարում եմ իմ եպիսկոպոսական պարտքը։

Մէկ կողմից անհրաժեշտ չէ քննել՝ թէ որտեղից են առաջ եկել այդ կարծիքներն ու շփոթութիւնները, որոնցից յառաջ եկած դէպքերը բոլորին յայտնի են, որն անշուշտ յայտնի կը լինի և աստուածաբանական ֆակուլտետին, միւս կողմից այդ ցաւ է ինձ համար, որովհետև եպիսկոպոսական բարձր պաշտօնը առանձնելու օրից մինչև այժմ առանձին յարգանքով, երախտագիտութեամբ և սիրով նուիրուած եմ եղել յարգելի Կորպորացիային։

Կամաւ անցեալը մոռացութեան տալով այժմ չեմ կարող ընդունել թէ ձեր անդամներից գէթ մէկը ունի հիմնաւոր կասկած գաւանաբանական համոզումների վերաբերմամբ։ Որովհետև դուք իսկապէս կարիք չունիք իմ գաւանաբանական խրատներին, ուստի այստեղ բերում եմ միայն հետևեալները։ Վատիկանի տիեզերական ժողովի մինչև այժմ գոյութիւն ունեցող որոշումները կազմուած են նոցա պարտաւորեցուցիչ դարձնել բոլոր ձևականութիւններով։ Այդ մասին վկայում են այսպէս կոչուած փոքրամասնութիւն կազմող եպիսկոպոսները, ինչպէս և մնացածները։ Վերոյիշեալ որոշումների կանոնականութեան դէմ չէ բողոքել հրապարակաւ մինչև այժմ ոչ մի կաթոլիկ եպիսկոպոս։ ընդհակառակը նոցա մեծ մասը այս կամ այն եղանակով յայտնել է իւր հպատակութիւնը։

Ես ինքս, խորհրդածութեան ժամանակ, ամենայն վճռականութեամբ յայտնեցի իմ հաստատ դատողութեամբ կազմած համոզմունքս, բայց միևնոյն ժամանակ երբէք չէի մոռացել պինդ պահպանել այդ համոզմունքը և այն դէպքում, երբ այլ որոշումն կըլինէր։ Այսպէս կատարելով իմ առաջին պարտականութիւնը՝ ես ոչ մի վայրկեան չեմ դանդաղել անպայման հնազանդելու կանոնական որոշումներին։ Չեզանից, բարձրապատիւ պարոններ, չեմ վախենում ընդունել ի հարկէ, անմիտ յանդիմանութիւն համոզմունքներս փոխելու համար, երբ գործը վերաբերում է կաթոլիկական հաւատի սկզբունքներին։

Սորանից յետոյ, երբ իրերի դրութիւնը այսպէս պարզուեցաւ, ես չեմ կարող անտարբեր լինել դէպի բարձրապատիւ աստուածաբանական ֆակուլտետի և նորա առանձին անդամների բռնած դիրքը։

Եթէ ես ժամանակ եմ տալիս մի այլ անձնաւորութեան շարունակելու իւր ներքին ծանր կռիւը մինչև այժմ ունեցած հայեացքների և ուսուցանող եկեղեցու հանդիսաւոր որոշումների մէջ և ընդունելու նոցանից մէկը, այդ այլ և այլ անհնարին է աստուածաբանութեան հրապարակական ուսուցիչների վերաբերմամբ, որոնք այս օրերս բարձրանալու են իրանց ամբիոնների վերայ։ Ես ոչ մի կերպ չեմ կարող լռելեայն թոյլ տալ, որ իմ արքեպիսկոպոսական թեմի մէջ ուսուցանէ սրբազան գիտութիւն այնպիսի մէկը, որին ես չեմ հաւատում թէ նա առանց աղաւաղման վարդապետում է այն, ինչ որ պարզ կերպով առաջարկում է հաւատալ կաթոլիկական եկեղեցին։ Ես չեմ կարող թոյլ տալ, որ իմ քահանայութեան կանդիտատները չուսանին այնպէս, ինչպէս որ կամենում է կաթոլիկական եկեղեցին։ Որպէս զի ասած լինեմ բոլոր ճշմարտութիւնը, վերջապէս չեմ կարող տանել, որ բարձրապատիւ աստուածաբանական ֆակուլտետը՝ իմ վիճակի մարգարիտը, իւր փառաւոր պատմութիւնը և նորա ներկայ անդամներից շատերի մեծամեծ ծառայութիւնները արատաւորէ իւր եկեղեցու մէջ բռնած բացառիկ դիրքով, որ ոչ մի կերպով չի արդարանում։

Այս պատճառով՝ լի հայրական սիրով, խնդրում եմ ձեզ, բարձրապատիւ պարոններ, հրաւիրելով աստուածային օգնութիւնը, կշռադատել ընդհանուր ժողովով ձեր պարտականութիւնները Վատիկանի տիեզերական ժողովի վճիռների վերաբերմամբ և միահամուռ, պարզ և ճիշտ կերպով յայտնել ինձ, թէ ինչպէս էք մտածում կատարել ձեր պարտքը։

Կնքում եմ նամակս առաջարկելով ձեր խորհրդածութեան հետևեալները։

Ձեզ շատ լաւ յայտնի է, որ մինչև այժմ անձնատուր եմ եղած ձեզ և իմ արքեպիսկոպոսական վանքի ազդեցութեան տակ պահպանել եմ իմ աստուածաբան ուսուցչապետներին զանազան յարձակումներից և ձեր վերաբերմամբ հետևած չեն միւս եպիսկոպոսների օրինակին։ Գուցէ ձեզ շատ քիչ յայտնի է, որ անցեալ տարի ս. Հոր հետ խօսակցելիս՝ եռանդով պաշտպանել եմ ձեզ։ Իսկ այժմ մեր յարաբերութիւնները բոլորովին փոխուելով գուցէ թէ չեմ կարող այնպէս վարուել, ինչպէս վարուեցայ այն անգամ։ Ուստի ազատեցէք ինձ տանջանքներից, որ անշուշտ իմ պաշտօնավարութեան ընթացքում եղածներից ամենից դժուարին է—այն է՝ թոյլ մի տաք վարուելու այնպէս խստութեամբ ձեզ հետ, ինչպէս որ պահանջում է իմ ծառայութեան պարտքը։

Մնամ հայրական սիրով, անկեղծ յարգանքով և մտերիմ անձնուիրութեամբ Ձեր՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Միւնխենի և Ֆրէյզինգենի.

Միւնխեն 20 Հոկտ. 1870 թ.

Ե.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖՈՆ ՇԵՐՐ ԴԵՈԼԼԻՆԳԵՐԻՆ.

4 Յունվ. 1871 թ.

ԳերապատիւՏէր Stiftsprobst!

Այստեղի աստուածաբանական ֆակուլտետի անդամների մէջ, որոնք իմ անցեալ տարուայ Հոկտ. 20 գրած նամակիս, որ Ձերդ գերապատութեան շատ լաւ յայտնի է, տուին բաւարար պատասխան՝ ես չգտայ նորա մէջ ի ցաւ մեծ սրտի այդ ֆակուլտետի պատուելի աւագ անդամի անունը։

Անցել է բաւականին ժամանակ, որի ընթացքում ի զուր էի սպասում, որպէս թւում է, արժանի պատասխան և բացատրութիւն ձեզանից և ձեր բռնելու դիրքի մասին Վատիկանի տիե-

ղերական ժողովի և նորա մինչև այժմ եղած որոշումների վերաբերմամբ։

Այսպէս երկար դանդաղելուց յետոյ՝ որի նշանակութիւնը Ձերդ գերապատուութիւնը կարող է գնահատել՝ ես այժմ հարկադրուած եմ զգում ինձ ստիպել ձեզ հրապարակաւ բացատրութիւն տալու այդ խնդրի վերաբերմամբ։ Ի հարկէ կարող եմ գուշակել թէ ինչու էք դժուարանում յայտնելու ձեր կարծիքը այն յարաբերութեան մասին՝ որ դուք ունիք դէպի մեզ զբաղեցնող գործը։

Ձեր փառաւոր անցեալը՝ որ մեծամեծ ծառայութիւններ է մատուցել կաթոլիկական գիտութեան՝ հոգևորական պատանիներին՝ կաթոլիկ եկեղեցու պաշտպանութեան հասարակական կեանքի մէջ թոյլ չի տալիս ձեզ բաժանուել այն եկեղեցուց՝ որին պատկանել էք մինչև օրս։

Միւս կողմից դուք՝ ինչպէս երևում է՝ այն ուղղութեան՝ որ յառաջ բերեց Գերմանիայում ժողովի հակառակ (նորա նիստից առաջ և նիստի ժամանակ) յայտնի ագիտացիական տեսարաններ՝ որ հիմնւում էր ձեր անուան վերայ՝ թէ որքան այդ ճըշմարիտ է՝ այնպիսի զիջումներ՝ որոնցից հրաժարուելու համար շատ մեծ ճիգ պիտի թափէք։

Եւ չնայելով այս բանին՝ ինչու չմոռանել՝ որ Ձեզ համար աւելի հեշտ է բաժանուել Ձեր վերջին ժամանակի դաշնակիցներից՝ քան Ձեր անուան փառք բերող կեանքիդ երկար պերիոդից և և միևնոյն ժամանակ խզել կաթոլիկական եկեղեցու հետ ունեցած կապը։

Նայեցէք՝ խնդրում եմ՝ այն ուղղութեան ամենօրեայ գրականական զիջումներին՝ որ խորամանկութեամբ օգտւում է եկեղեցու բարձր ներկայացուցչի անսխալականութեան դաւանութիւնից՝ որպէս զի հասարակութեան առաջ ստորացնէ կաթոլիկական եկեղեցին և անդադար՝ ի հարկէ առանց իրաւունքի՝ ցոյց է տալիս Ձեր հեղինակութիւնը և ապա հարցրէք Դուք Ձեզ՝ ի՞նչ հասարակութեան մէջ ընկայ ես։

Յետոյ մի հայեացք ձգեցէք ամբողջ եկեղեցական պատմութեան վերայ—կըգտնէք արդեօք մէկին՝ որ հեռանալով Հռոմայ

ս. գահից՝ Cathedra Peti-ից միևնոյն ժամանակ հեռացած չլինի կաթոլիկ եկեղեցու միութիւնից։

Լրջօրէն դատեցէք նոցա վերջնական ելքի մասին՝ որոնք մինչև վերջը հակառակ են եղել ս. եկեղեցուն։

Ձեր սրտին մօտ ընդունեցէք՝ վերջապէս՝ այն հանգամանքը՝ որ Դուք պատասխանատու էք Աստծու գահի առաջ նոցա համար՝ որոնք խրախուսուելով Ձեր օրինակից աւելի երկար հեռու կըպահեն իրանց եկեղեցուց։

Եթէ ես խնդրում եմ Ձեզ բառնալ Ձեր հովուապետի հայրական սրտից այն բոլոր վշտերը՝ որոնք այժմ իսկ Ձեր պատճառով տանջում են և պէտք է կամ վերջանան և կամ հանին անտանելիութեան աստիճանին՝ Դուք չէք կարող չվերագրել այս հրաւէրը այն սիրուն՝ որ տածում եմ դէպի Ձեզ։

Դէպի Ձեզ ցոյց տուած յարգանքս իմ հովուապետական պաշտօն ստանձնելու օրից դարձաւ մոերմական։ Այս պաշտօնավարութեան ժամանակ Դուք որպէս մի թանկագին գանձ էիք ինձ համար՝ ապացոյցներ շատ կան։ Դուք և ես կարող էք վկայել՝ որ ես ձեզ համարում էի ոչ որդի՝ այլ բարեկամ և եղբայր։

Ուստի խնդրում և երդուեցնում եմ Ձեզ դադարեցէք նպաստելուց այն հանգամանքին՝ որով եկեղեցու անդամների միութիւնը վնասւում է և հերոսական վճռականութեամբ՝ յայտնի եկեղեցական խոստովանութեամբ արձակեցէք այն նղովքը՝ որով մինչև այժմ էլ կապուած են շատ ազնիւ կաթոլիկներ։

Ես չեմ կարող հաւատալ՝ որ Դուք փոխանակ ուրախութիւն պատճառելու իմ սրտին հրաւիրէք Ձեր վերայ հովուական իշխանութիւնս՝ որը պէտք է գործ դնէ ի հարկէ իւր իրաւունքները՝ եթէ իւր յաւսով լի համբերութիւնը խաբուած տեսնի։

Ձեզ յարգող և գերապատուութեանդ անձնուէր՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Միւնխենի և Ֆրէյզինգենի։

Միւնխեն

4 Յունվ. 1871 թ.

2.

ԴԵՕԼԼԻՆԴԵՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖՈՆ ՇԵՐՐԻՆ

29 Յունվ. 1871 թ.

Ձերդ Գերազանցութիւն! [1])

Ձեր անակնկալ պահանջը հնազանդելու Յուլիսի 18-ին Հռոմում յայտարարած հաւատի հրովարտակին չկարողացաւ զարմացնել ինձ: Ես այդ պահանջը սպասում էի այն որոշումից յետոյ, որ Ձերդ գերազանցութիւնը Ֆուլդայում միւս եպիսկոպոսների հետ միասին ընդունեցիք:

Իսկ այժմ չեմ կարող յայտնել առանց ապացոյցների իմ համաձայնութիւն կամ հնազանդութիւնն այն պատճառով, որ Վատիկանի ժողովի սկզբից ես բազմիցս հրապարակաւ հաստատել և շատ հիմունքներով ապացուցել եմ հակառակ վարդապետութիւնը: Այսպիսով ստիպուած էի մի և նոյն ժամանակ — և դա է միակ ճանապարհը — հերքել ինքս ինձ և հրապարակաւ ցոյց տալ՝ թէ այն վարդապետութիւնը, որ ես առաջ և մանաւորապէս վերջին ժամանակներում քարոզում էի, սխալ և թիւր է: Եթէ ես այս չեմ անում, ապա ուրեմն ոչ մի մարդ, գոնէ ոչ ոք նոցանից, որոնք ծանօթ են իմ շարադրութիւններին և հրապարակական զեկուցումներին չի հաւատայ իմ հպատակութեան անկեղծութեան: Բոլոր մերձաւորներն ու հեռաւորները, բացի մի քանի միանձնուհիներից, կըդատապարտեն ինձ, որպէս չար, անխիղճ և կեղծաւոր մարդու, որ երկիւղից և հասարակական շահերից դրդուած հրաժարւում է իւր սկզբունքներից:

Գիտակցելով դառը վիճակը, որի մէջ գտնւում եմ և ծանր ու ճնշող պատասխանատուութիւնը մի քանի շաբաթ առաջ պապի հեղինակութեան էութեան և ծաւալի, նորա դէպի եկեղեցին ունեցած յարաբերութեան հարցը դարձրի ուսումնասիրութեան և ըստ կարելոյն մտադիր և մանրամասն քննութեան առարկայ: Ես կարդում և հետազօտում եմ այն ամենը, ինչ որ վերջին ժամանակներս դուրս են գալիս Հռոմի կողմից հրատարակած հրովարտակների և նոցա մէջ ամփոփուած վարդապետութիւնների պաշտպանութեան համար՝ Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում որքան այդ ինձ մատչելի է: Եթէ յաջողուի ինձ գալ այն համոզման, որ այդ վարդապետութիւնը ճշմարիտ է, սուրբ գրքով և աւանդութիւններով վաւերացուած և հաստատուած է, և որ ես մինչև այժմ գերմանական աստուածաբանների մեծամասնութեան հետ ի միասին գտնըւում էի մոլորութեան մէջ, այն ժամանակ կրիտոտվանեմ այդ աշխարհի առաջ և չեմ էլ փորձի արդարացնել ինձ: Եթէ Աստուած տայ ինձ կեանք և հոգու ոյժ աւելի հեռուն կերթամ: կաշխատեմ այն չարիքը, որ պատճառել եմ եկեղեցուն քառասուն և եօթը տարուայ ընթացքում նորա ոգու հակառակ գրքերով և առաջարկած ընթերցանութիւններով, մի որոշ աստիճանի ջնջել հէնց նորանով, կըհերքեմ ինքս ինձ և բաց կանեմ իմ սխալներն ու անկանոն հայեացքները: Ես լաւ գիտեմ, որ քահանան պատրաստ պէտք է լինի այդ մեծ և դժուարին զոհաբերութեան եկեղեցու համար, պատրաստ պէտք է լինի զոհելու իւր բարի անունն ու իւր բարեկամների յարգանքը եկեղեցուն. բայց միայն մէկ պայմանով, այն է՝ որ նա համոզուած լինի թէ այն ինչ որ պէտք է դաւանէ ճշմարիտ է և ճանաչէ սխալը այն վարդապետութեան, որ նա մինչև այժմ ուսուցանում էր: Որովհետև առանց այդպիսի համոզման հպատակութիւնը ամենածանր յանցանք է և կոպիտ սխալ: Թէ Ձերդ գերազանցութիւնը իւր պահանջներով չի ցանկանում հասցնել մինչև այդտեղ, այդ մասին ես վստահ եմ: Ձեր պահանջները կարող են ունենալ այս միտքը. «աշխատիր և կատարիր բոլորը, ինչ որ կարող ես, որպէս զի ունենաս այն համոզմունքը, ինչ որ ես ունեմ: Այդ ես այժմ կատարում եմ խորը ըմբռնելով: Աղօթում եմ Աստծուն, որ լուսաւորէ միտքս: Քննում և հետազօտում եմ որքան կարող եմ: Բայց առարկայի և քննութեան ենթակայ նիւթի մեծութիւնը պահանջում է աւելի երկար ժամանակ, ուստի խնդրում եմ ժամանակամիջոցը երկարացնէք և համբերութիւն ունենաք ծեր մարդու հետ գործում:

[1]) Բնագրում: Eure Excellenz.

Մնում է ինձ յայտնել շնորհակալիքս Ձեր մարդասիրական և բարեկամական ոճի համար, որով գրուած էր նամակի մեծ մասը։ Վերջաբանը յիրաւի խիստ և սպառնալի էր, բայց—ճանաչելով անձնաւորութիւնները և նոցա ազդեցութիւնը այդ գործի մէջ ուրիշ բան չէի սպասում։

Մնամ խորին յարգանքով Ձերդ գերազանցութեան անձնուէր՝

Ց. ՓՈՆ ԴԵՈԼԻՆԳԵՐ.

Միւնխեն.

29 Յունվ. 1871 թ.

Է.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՆ ՇԵՐՐ ԴԵՈԼԻՆԳԵՐԻՆ.

14 Փետրվ. 1871 թ.

Գերապատիւ Տէր Stiftsprobst!

Ձեր անցեալ ամսու 23-ին գրած նամակը չկարողացաւ ի մեծ ցաւ սրտի, գոհացուցիչ բացատրութիւն տալ Վատիկանի տիեզերական ժողովի և նորա մի-չև այժմ եղած որոշումների վերաբերմամբ Ձեր բռնելիք դիրքի մասին, որին սպասում էի վստահութեամբ և պարտաւոր էի պահանջել հովուապետական իրաւունքներիս համաձայն։ Ուստի պարտաւորուած եմ զգում յայտնել Ձեզ, որ մինչև Մարտի 15-ը տարբոյս կընդասեմ Ձեր վերջնական բացատրութեան, իսկ այդ թուից յետոյ վերջնականապէս վճռել եմ գործ դնել հովուական իշխանութեանս պահանջած հեռևեալ քայլերը։

Դարձեալ յոյս ունիմ որ ազատ կըլինիմ անհաճոյ ընդհարումից։

Մնամ լիուլի յարգանքով Ձերդ գերապատուութեան անձնուէր՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Միւնխենի և Գրէյցինգենի.

Միւնխեն

14 Փետրվ. 1871 թ.

Ը.

ԴԵՈԼԻՆԳԵՐ—ՓՈՆ ՇԵՐՐ-Ի Ն.

14 Մարտի 1871 թ.

Ձերդ գերազանցութիւն.

Վաղը լրանում է ժամանակը, որ Ձերդ գերազանցութիւնը նըշանակել էր իմ զեկուցման համար Վատիկանի հրովարտակների մասին։ Մինչդեռ հարկադրուած եմ զգում ինդրելու, Ձերդ գերազանցութիւն, արդեօք չէք կարող յետաձգել ժամանակը մօտաւորապէս տասներկու կամ տասն և չորս օր։

Վերջին շաբաթներում այնքան նամակներ, խորհուրդներ և նախազգուշութիւններ ստացայ թէ մերձաւորներից և թէ հեռաւորներից—բարձրաստիճան և հասարակ մարդիկ ասում էին ինձ միմեանց հակասող մտքեր—որ ես կարիք եմ զգում հանգըստութեան, որպէս զի ամփոփուելով իմ մէջ կարողանամ կատարեալ պարզութեամբ և հեռևանքների կշռադատութեամբ անել այն, ինչ որ Ձերդ գերազանցութիւնը պահանջում է ինձանից։

Վերջին ժամանակներս այսպէս ասած կաթոլիկական թերթիկների յայտնած լուրը, որպէս թէ von Mering քահանայի գործի մէջ յայտնել եմ իմ կարծիքը, որ ինձանից խնդրած են եղել, հնարովի բան է։ Ոչ ոք չէ ցանկացել իմանալ իմ կարծիքը և ես ոչ մի առիթ չունէի յայտնելու նորան այդ գործի նկատմամբ։ Ձերդ գերազանցութիւնը հեշտութեամբ կարող է լսել այդ բանի հաստատութիւնը նորանից, որ մինստրութեան զեկուցել է նոյն քահանայի գործը։

Մնամ բարձր յարգանքով Ձերդ գերազանցութեան անձնուէր՝

Ց. ՓՈՆ ԴԵՈԼԻՆԳԵՐ.

Միւնխեն

14 Մարտի 1871 թ.

Թ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՆ ՇԵՐՐ—ԴԵՈԼԻՆԳԵՐԻՆ։

17 Մարտի 1871 թ.

Գերապատիւ Տէր Stiftsprobst!

Ձեր ամսոյս 14-ին գրած յարգելի նամակի հիման վերայ յետաձգում եմ արդէն վերջացած ժամանակամիջոցը ամսու 15-ից

մինչև 31-ն Մարտի և պարտք եմ համարում աւելացնել, որ ժամանակը լրանալուց յետոյ այլևս անկարող կըլինիմ յետաձգել։

Միևնոյն ժամանակ չեմ դադարում աղօթելուց Աստուծուն, որ առաջնորդէ Ձեզ ձեր վճիռների մէջ։

Մնամ լիուլի յարգանօք Ձերդ գերապատուութեան ամենաուէր.

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ. Միւնխենի և Ֆրէյզինգենի.

Միւնխեն

17 Մարտի 1871 թ.

Ժ.

ԴԵՈՒԼԻՆԳԵՐ—ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖՈՆ ՇԵՐՐ-ԻՆ։

28 Մարտի 1871 թ.։)

Ձերդ գերազանցութիւն.

Դուք երկու նամակով պահանջել էք ինձանից բացատրութիւն իմ յարաբերութեան մասին գէպի 18 Յուլ. 1870-ի յայտարարած հռոմէական որոշումներին։

Ձայն է տարածուած թէ ժողովը մտածել է գործ դնել ինձ վերայ բռնութեան և պատժի այն միջոցները, որ սովորաբար գործ են դնում այն քահանաների վերայ, որոնք մեղադրւում են բարոյական կոպիտ յանցանքների մէջ, թէպէտ շատ հազուագիւտ դէպքերում։ Այդ պէսք է կատարուի, եթէ ես նշանակեալ ժամանակին չեմ յայտնի իմ հպատակութիւնը հաւատի երկու նոր անդամներին՝ պապերի գերիշխանութեան և անսխալականութեան։

1) «Մենք պարտական ենք փոխադարձաբար զօրացնել և թարմացնել մեզ, որպէսզի յաղթութիւնը տանենք այն կռուի մէջ, որի նախապատճառը մենք չէինք, բայց կապուած էինք նորա հետ և ապագայ սերնդեան համար պահպանել ճշմարտութիւնը։ Եթէ մենք հնազանդէինք, այն ժամանակ բոլորը կըկարծէին, որ ճշմարտութեան զգացումը բոլորովին մեռած է կաթոլիկ կղերի մէջ, որ քահանայութիւն միմիայն մի արհեստ է...։ Հասարակութեան կղերի բարոյական սնանկութեան մասին կազմած կարծիքը առանց այն էլ է fait accompli (կատարուած իրողութիւն)։ Մաքառումը լոյս աշխարհ կըհանէ ուրիշ շատ նորեր, այսինքն մինչև այժմ իւրեանց վերայ ուշադրութիւն չդրաւած և անյայտ իրողութիւններ և ես ձգումեմ այստեղ իմ լուման։ Այնից առաջ կըտպուի մի հովուական թուղթ ուղղուած տեղիս արքեպիսկոպոսին»։

Միևնոյն ժամանակ հաւատացնում են թէ շուտով լինելու է գերմանական եպիսկոպոսների ժողով և խորհրդ-ոնի-ն Ֆուլդայում։

1848 թ. Վիւրցբուրգի գերմանական բոլոր եպիսկոպոսների ժողովի ժամանակ պատիւ ունեցայ այնտեղ հրաւիրուելու և և մասնակցելու նոցա խորհրդին։ Գուցէ թէ, Ձերդ գերազանցութիւն, կարող էք այժմ գործերը այնպիսի ընթացքի մէջ դնել, որ ինձ յառաջիկայ ժողովի մէջ՝ եթէ ոչ խորհրդակցութեան մասնակցելու, գոնէ մի քանի ժամ աչալրջութեամբ լսելու իրաւունք կըտաք։

Ես պատրաստ եմ բարձր ժողովի առաջ ապացուցանելու հեռաւեալ կանոնները, որոնք ունին վճռողական նշանակութիւն այժմեան գերմանական եկեղեցու և իմ դրութեան համար։ Նախ՝ հաւատի նոր որոշումները հիմնուած են համարում ս. Գրքից դուրս բերած հատուածների վերայ։ Աւետարան Մատթ. ԺԶ. գլ. 18 համար «Եւ ես քեզ ասեմ՝ զի դու ես վէմ». Յովհաննու ԻԱ գլ. 17 հր. «Արածեա՛ զոչխարս իմ։...», և ինչ վերաբերում է անսխալականութեան՝ Աւետարան Ղուկ. ԻԲ. գլ. 32 հր. «Այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո»—այն տեղը, որի հետ անսխալականութիւնը Աստուածաշնչի տեսակէտով ընկնում և բարձրանում է։ Հանդիսաւոր երդումը, որ ես երկու անգամ տուի, ստիպում է մեզ «ընդունել և բացատրել ս. Գիրքը միաձայն հաւանութեամբ եկեղեցական հայրերի» և ոչ այլ կերպ։ Բայց համարեա առանց բացառութեան բոլոր ս. հայրերը բացատրում են վերոյիշեալ տեղերը Աւետարանի բոլորովին հակառակ նոր հրովարտակների յայտնած մտքին, և բնագրի՝ Ղուկասու Աւետարանի ԻԲ. գլ. 32 հր. մէջ չեն գտել, որ բոլոր Պապերին տուած է անսխալականութիւն։ Ուստի երդմնազանց կըգտնուէի, եթէ կամենայի հրովարտակների հետ ի միասին ընդունել այն մեկնութիւնը, բացի որից նոքա չունին մի այլ հիմք ս. Գրքում։ Ինչպէս ասացի պատրաստ եմ ապացուցանել այդ եպիսկոպոսների ժողովի առաջ։

Երկրորդ՝ վերջին ժամանակներս երևցած եպիսկոպոսների հովուական թղթերի և յայտարարութիւնների մէջ աչքի է ընկնում այն, որ նոքա ճգնում են ապացուցանել թէ նոր Հռոմում հրատարակած վարդապետութիւնը պապի գերիշխանութեան (իւրաքանչիւր քրիստոնեայ անհատի վերայ) և անսխալականութեան (հաւատի բոլոր որոշումների մէջ) մասին կազմում են հաւատի և վարդապետութեան առարկայ միշտ և համարեա ամբողջ եկեղեցու համար—նորա սկզբից մինչև այժմ:

Ես պատրաստ եմ ապացուցանելու, որ այդ վարդապետութիւնը հիմնուած է եկեղեցու առաջին հազարամեակի աւանդութիւնների ոգիտութեան և նորա (եկեղեցու) աղաւաղուած պատմութեան վերայ. այդ վարդապետութիւնը հակասում է պարզ փաստերին և վկայութիւններին:

Երրորդ՝ պատրաստ եմ նոյնպէս ապացուցանելու որ բոմանական երկրների՝ Իսպանիա, Իտալիա, Հարաւային Ամերիկա, Ֆրանսիա—եպիսկոպոսները, որ Հռոմում կազմում են բաւականին ստուար բանակ, ընկած են իրանց կղերի հետ սիալանքների մէջ պապական իշխանութեան վերաբերմամբ այն դատագրքերով, որոնցից նոքա քաղել են իրանց գիտութիւնը սեմինարիայում ուսանելիս, որովհետև այդ գրքերի մէջ բերած վկայութիւնները մեծ մասով սխալ, մոգացած և աղաւաղուած են:

Այդ ցանկանում եմ ապացուցանել նախ՝ ժամանակակից երկու գլխաւոր, աստուածաբանական դպրոցներում սիրելի և գործածութեան մէջ մտած գրքերի վերաբերմամբ՝ որոնք են—ձեռնարկ բարոյական աստուածաբանութեան Ս. Ալֆոնս Լեգուորի, մասնաւորապէս նորա մէջ գտնուած դրակատը (շարադրութիւնը) պապի մասին, և Պերոննէ եզուիտի աստուածաբանութիւնը, ապա Կարդոնի արքեպիսկոպոսի և Խելեարդ եպիսկոպոսի շարադրութիւնները, որոնք Հռոմում ժողովի ժամանակ բաժանում էին ժողովականներին և վերջապէս Վենայի աստուածաբան Շվեցի աստուածաբանութիւնը:

Չորրորդ՝ մատնացոյց անելով իրողութիւնը պատրաստ եմ ապացուցանելու հրապարակաւ, որ պապերի իշխանութեան սահմանների և նորա անսխալականութեան հարցը արդէն վճռուած է ԺԹ դարում երկու ընդհանրական ժողովներով և շատ պապերի ու ժողովների հանդիսաւոր կերպով քանիցս անգամ հաստատած և յայտարարած հրովարտակներով և որ 18 Յուլիսի 1870 թ. հրովարտակները հակասում են այդ որոշումներին, հետևաբար պարտադիր լինել չեն կարող:

Եւ վերջապէս հինգերորդ՝ կարող եմ ապացուցանել, որ նոր հրովարտակները համաձայն չեն Եւրոպական պետութիւնների կազմակերպութիւններին՝ նա մանաւանդ Բաւարիայի, և այն երկամեայ դումը, որ մօտ ժամանակներումս կայսերական խորհրդի պալատի մէջ մուտք գործելով կրկնեցի, հարկադրում է ինձ չընդունել նոր հրովարտակները և նոցա հետևանք բուլլաները (կոնդակ պապի)՝ Unam Sanetam և Cum ex apostolatus offiaio, Սիլաբուս Պիոս Թ-ի և ուրիշ շատ պապական օրէնքներ և առացուածքներ, որոնք այժմ պէտք է ունենան անսխալ վճիռների նշանակութիւն և բացարձակ կերպով հակասում են պետութեան օրէնքներին:

Այդ մասին մատնացոյց եմ անում Միւնխենի իրաւաբանական ֆակուլտետի կարծիքը և պատրաստ եմ միևնոյն ժամանակ ենթարկել նորան գերմանական որևէ իրաւաբանական ֆակուլտետի վճռին, որին որ Ձերդ գերազանցութիւնը կըբարեհաճի մատնացոյց անել:

Իմ առաջարկած կոնֆերենցիայի համար գնում եմ միմիայն երկու պայման. առաջին՝ որ իմ ցուցումները և նոցա գէմ եղած առարկութիւնները արձանագրուին և յետոյ թոյլ տրուի հրատարակելու. երկրորդ՝ թոյլ տրուի իմ ընտրած գիտութեամբ ճոխացած անձին ներկայ գտնուելու այդ կոնֆերենցիային:

Եթէ այդ անիրագործելի թուի ֆուլդում գերմանական եպիսկոպոսների ներկայութեան, ապա թոյլ եմ տալիս ինձ առաջարկելու մի այլ խնդիր:

Թոյլ տուէք, Ձերդ գերազանցութիւն, կազմել մի մասնաժողով (коммиссія) Ձեր կապիտուլի (եկեղեցական ժողով) անդամներից, որի առաջ ես վերոյիշեալ եղանակով կարողանամ առաջ տանել

գործս։ Շատերն այդ բարձրաստիճան անձերից ունին դոկտորութեան աստիճան և աստուածաբանութեան ուսուցչապետ էին, իսկ առաջ իմ աշակերտներն էին։

Յուսով եմ որ աւելի հաճելի կըլլինի նոցա համար հանդարտ խօսակցել և, եթէ կարելի է, հերքել ինձ ապացոյցներով ու փաստերով, քան դատաւորական գահի բարձրութիւնից ծրագրել իմ դէմ հոգևոր քրէական վճիռներ և յետոյ, ինչպէս լսում եմ, ներկայացնել Ձերդ գերազանցութեան ինձ տապալելու համար (Fulminirung)։ Եթէ որ Ձերդ գերազանցութիւնը հաճի ինքնին նախագահել այդ կոնֆերենցիային և խոնարհի այն աստիճան, որ խրատներ կարդայ իմ սխալանքների համար վկայութիւնների և ֆակտերի բացատրութեան գործում, ես այդ կըհամարէի մեծ պատիւ ինձ համար և գուցէ թէ միայն այդ ժամանակ յաղթանակը ճշմարտութեան կողմը կըլլինէր։ Եւ եթէ Դուք գործ դնէք Ձեր հովուական իշխանութիւնը ինձ վերայ, կարող եմ յուսալ, ի հարկէ, որ Դուք կըգերադասէք ամենից առաջ գործ դնել այդ իշխանութեան ամենագեղեցիկ, ամենազնիւ և ամենաբարերար յատկանիշը, որով աւելի նման կըլլինիք Քրիստոսին—այն է—վարդապետութիւն։ Եթէ կարողանան ապացուցանել իմ սխալը վկայութիւններով և ֆակտերով այն ժամանակ, այժմէն իսկ յայտնում եմ Ձեզ, պարտաւորւում եմ հրապարակաւ յետ առնել բոլորը, ինչ որ գրել եմ այդ մասին, և հերքել ինքս ինձ։ Եկեղեցին և մոքերը հանգստացնելու համար անշուշտ միայն այդպիսի վախճանը կարող է դանկալի լինել, որովհետև գործը միմիայն ինձ չի վերաբերում։ Հազարաւոր կղերականներ, բիւրաւոր աշխարհականներ ինձ պէս են մտածում և հնարաւոր չեն համարում ընդունել հաւատի նոր անդամներ։ Մինչև իսկ ոչ մէկը նոցանից, որոնք հրապարակաւ յայտնեցին իրանց հպատակութիւնը, մինչև օրս ինձ չէ ասել թէ համոզուած է, որ իրօք այդ դրութիւնները ճշմարիտ են։ Բոլոր բարեկամներս ու ծանօթներս նոյնն են հաստատում։ «Ոչ ոք դորան չէ հաւատում» լսում եմ ամենայն օր բոլորի բերանից։ Ըստի կոնֆերենցիան այն ձևով ինչպէս որ ես առաջարկում եմ և արձանագրութեան հրապարակութիւնը ամենայն դէպքում կարող էին պարզել գործը, որին անհամբեր սպասում է անթիւ բազմութիւնը։

Կարելի է թէ, Ձերդ գերազանցութիւն, կառաջարկէք Ձեր մոտիկ ժամանակում գրած հովուական թուղթը որպէս աղբիւր, որից կարող կըլլինիմ քաղել խրատ և ուղղել կարծիքս։

Բայց պէտք է խոստովանիմ, որ նա թողեց ինձ վերայ բոլորովին հակառակ տպաւորութիւն։ Ես պարտք եմ համարում ապացուցանել, որ նա լի է մի շարք սխալ հասկացած, աղճատուած, խեղաթիւրուած և մոտացածին վկայութիւններով—մի շարք, որ՝ երբ կարևոր և հակառակ փաստերը լսում են, գաղտիար է տալիս իրականութեան միանգամայն աննման մի աւանդութեան մասին։ Նա, որին Ձերդ գերազանցութիւնը յանձնել է այդ խնդիրը, անկասկած ինքը չէ հնարել այդ կեղծիքը, այլ հաւատալով փոխ է առել ուրիշներից (Կարգօնի և ուրիշները)։ Եթէ նա վճռել է պաշտպանել իւր աշխատութիւնը առաջարկած կոնֆերենցիայի մէջ, այն ժամանակ ես պատրաստ եմ մի քանի ժամուայ ընթացքում հաստատել իմ ասածը և կամ եթէ այդ ինձ չըյաջողուի հրապարակաւ բաւականութիւն տալ նորա վիրաւորուած պատուին։ Գործի կարևորութիւնը աչքի առաջ ունենալով հարկ եմ համարում առաջարկել մի պայման՝ խնդրել կառավարութիւնից, որ նշանակէ մի՝ պատմութեան և եկեղեցական իրաւաբանութեան մէջ փորձուած աստիճանաւոր որպէս վկայ ներկայ գտնուելու կոնֆերենցիային։ Որովհետև այդ գործը ունի մեծ նշանակութիւն կառավարութեան համար, ուստի կարելի է ենթադրել, որ կառավարութիւն չի մերժի այս առաջարկութիւնը։

Անցեալի մէջ կարող ենք գտնել շատ փաստեր, որոնք ցոյց են տալիս թէ իմ առաջարկութիւնները համաձայն են եկեղեցու սկզբունքներին և նորա գործնականութեան։ Այսպէս 411 թ. կաղմուեցաւ կոնֆերենցիա 285 կաթոլիկ և 279 դոնատեան եպիսկոպոսներից. սոյն կոնֆերենցիայի երեք նիստերումն էլ նախագահում էր պետական պաշտօնեայ Մարցելին. փիճելի վարդապետութիւնը քննուեցաւ և վճռուեցաւ յոգուտ կաթոլիկ եպիսկոպոսների։ Բազելի ժողովում 1433 թ. ներկայացան չեխ կա-

լիկսաինցի-ները [1]։ 18 տարի սորանից առաջ—Կոնստանցի ժողովում ենթարկուեցաւ նոր քննութեան Հաղորդութեան ս. խորհուրդը անարատ գինով կատարելու մասին արդէն յայտարարած հրովարտակը։ Սորա հետևանքն եղաւ որ պապական գահի վաղուց ճանաչած սահմանափակումները, որոնցով չեխերին մեծ, բազմաբովանդակ և նախկին հրովարտակի միտքը փոխող զիջումներ եղան։

Աւելի մեծ նմանութիւն ունի իմ առաջարկած քննութեան ձևին Ֆրանսիական պատմութեան մէջ յայտնի կոնֆերենցիան Du Perron (Evreox) եպիսկոպոսի և պետութեան պաշտօնեայ բողոքական գիտնական Du Plessis—Mornay ձեռքով, որ Հենրիկոս Դ-ի անօրինութեամբ կայացաւ Ֆոնտենբլոում։ Հարկաւոր էր ապացուցանել, որ Մորնէյի իւր հաղորդութեան ս. խորհրդի մասին գրած գրքում բերած կտորների մեծ մասը սխալ և անկանոն են։

Մորնէյի բերած օրինակները քննելուց մի քանի օր յետոյ կոնֆերենցիան, վերջինիս տկարութեան պատճառով ընդհատուեցաւ, սակայն յուզուած մտքերի վերայ խիստ բարերար ազդեցութիւն թողեց յօգուտ կաթոլիկական գործի։

Գերապատիւ արքեպիսկոպոս! ես Ձեզ եմ թողնում ընտրելու թէ ի՞նչ ձև էք կամենում տալ իմ և բազմաթիւ կաթոլիկ գերմանացիների ցանկացած կոնֆերենցիային, նոյնպէս Ձեզ եմ թողնում ընտրել այն անձը, որ պէտք է ընդդիմախօսէ։ Ձեր վիճակի մէջ կան բազմաթիւ աստուածաբաններ, որոնք ի հարկէ մեծ հաճութեամբ կը հետևին Ձեր հրաւէրին։ Փորձերը ցոյց են տալիս թէ հաւասարապէս ճանաչուած են պապերից և աստուածաբաններից, որ հաւատի վերաբերեալ հարցերը մնում են եղել ինչպէս հոգևորականների, նոյնպէս և աշխարհականների սրտերին և որ

[1] Ծէ. դարում հուսիտների մի մասը ընդունեց կարևորութիւնը հաղորդութեան ս. խորհրդի բոլոր հաւատացեալների համար։

Ծանօթ. Թարգ.

վերջիններս կարող են մասնակցել աւանդութիւնների գիտական հետազօտութիւններին և հաստատութիւններին։

Իմ առաքելական դարու եկեղեցու մասին գրած շարադրութիւնս Ձերդ գերապատուութիւնը խրախուսեց և Գերմանիայի բոլոր կաթոլիկները գտան նորա մէջ եկեղեցու սկզբնական ժամանակների ճիշտ պատկերը. և նոյն իսկ անգրալեան եղուիտները արհամարհութիւն ցոյց չըտուին դէպի նա։ Եթէ նոր հրովարտակները պարունակում են իրանց մէջ ճշմարտութիւններ, ուրեմն ենթարկուում եմ յանդիմանութեան նորա համար, որ եղծել եմ առաքելական դարու պատմութիւնը։ Հին եկեղեցու կազմակերպութիւնը, Պօղոսի և միւս առաքեալների դէպի Պետրոս ունեցած յարաբերութիւնների մասին գրած գրքիս մի մասը այդ դէպքում հիմնուին սխալ է, և ես հարկադրուած կըլինէի դատապարտելու նորան և ճանաչելու, որ ես չեմ ըմբռնել ոչ Ղուկասի առաքելական գործերը և ոչ էլ առաքելական թղթերը։

Վատիկանի նոր վարդապետութիւնը վերագրում է պապին ԸՆԴՈՒՆԵԼՈՒ (totam plenitudinem potestatis) ամբողջ եկեղեցու վերայ, ինչպէս և իւրաքանչիւր աշխարհականի, քահանայի և եպիսկոպոսի վերայ—այնպիսի իշխանութիւն, որ ամփոփում է իւր մէջ բոլորը՝ ինչ որ քիչ թէ շատ վերաբերում է հաւատին, բարքին, աշխարհային պարտականութիւններին, դիսցիպլինային. իշխանութիւն՝ որ կարող է բոլորին՝ թագաւորին, ինչպէս և մըշակին, անմիջապէս ձերբակալել, պատժել, հրամայել և արգելել։ Այդ վարդապետութեան խօսքերը այնպիսի մտադիրութեամբ ընտրուած են, որ եպիսկոպոսներին, բացի պապի գործակալ և ներկայացուցիչ անուններից, ոչ մի ուրիշ անուն կամ հեղինակութիւն չի կարելի տալ։ Իւրաքանչիւր մարդ, որ փոքր ի շատէ ծանօթ է պատմութեան և եկեղեցական հայրերի գրուածներին, կը համաձայնի, որ սորանով ոչնչանում է հին եղեցական եպիսկոպոսութիւնը իւր ներքին էութեամբ. և առաքելական հաստատութիւնը, որին պատկանում է, եկեղեցու հայրերի համաձայն, բարձր նշանակութիւն և հեղինակութիւն դարձել է մի ստուեր զրկուած էութիւնից։ Որովհետև ոչ ոք չի մտածի, թէ միևնոյն

վիճակի մէջ կարող են լինել երկու եպիսկոպոս, որոնցից մէկն է պապ, իսկ միւսը սոսկ եպիսկոպոս. պապի տեղապահը կամ վիճակաւոր գործակալը երբէք եպիսկոպոս և առաքեալի յաջորդ չէ: Պապի հաւատարմատարը եթէ հաճի կարող է դառնալ ազդեցիկներից մէկը, ինչպէս պապի արտօնութիւններով օժտուած եզուիտը կամ աղքատ վարդապետը և ես լաւ գիտեմ թէ Հռոմում եպիսկոպոսները ի՞նչ միջոցներով աշխատում են իշխանութիւն ձեռք բերել. նոցա յաճախ ասում են—որքան պապը զօրեղ լինի, նոյնքան դուք կըզօրեղանաք, որովհետև նորա այժի կատարելութիւնից ձեր վերայ էլ կըթափուին առատ ճառագայթներ: Փոքրամասնութեան եպիսկոպոսները լաւ կարողացան գուշակել այդ խոստումների անզօրութիւնը ինչպէս ցոյց է տալիս «Analytische Synopsis»-ը. նոքա հասկացան, որ պապի տիեզերական եպիսկոպոսի իշխանութեամբ ի հարկէ ինքեանք կըդառնան եկեղեցու բարձր պաշտօնեաներ, բայց ոչ երբէք ճշմարիտ եպիսկոպոսներ: Դուք, գերապատիւ Տէր, մասնակցեցիք Յուլիսի 15-ի[1]) պատգամաւորների ժողովին, որ հաստատապէս դիմադրեց նորա դիտաւորութիւններին, միևնոյն ժամանակ պ. Ֆոն Կետտելերը, որպէս զի զօրացնէ այդ առաջարկութիւնների նշանակութիւնը, ծունկ չոքեց պապի առաջ: Այդ առաջարկները, ինչպէս յայտնի է մնացին անհետևանք: Բարձրաստիճան եպիսկոպոսները, որոնք կորցրել են այժմ հին - եկեղեցական նշանակութիւնը, մխիթարւում էին նորանով, որ պապի հրովարտակի մէջ ասուած էր. «եպիսկոպոսական իշխանութիւնն է potestas ardinaria subdelegata (ինչպէս սովորաբար ձևակերպում են կանոնականները) և պապի պարտականութիւնն է զօրացնել նորան. այդ հաստատուած է Գրիգոր Մեծի ամիսի խօսքերով – որ եթէ առաջ բերենք լրիւ միւսների հետ միասին ցոյց կըտար աշխարհին, որ այդ եօթներորդ դարու պապը սաստիկ զզուանքով, որպէս աստուածահայհոյութիւն, մերժել է իրանից համաշխարհային եպիսկոպոսի տիտ-

1) Այստեղ խօսքը այն յանձնաժողովի մասին է, որ յիշել է թարգմանիչը իւր յառաջաբանում:

ղոսը, որ այժմ վերականգնեց Հռոմում իրան անուանելով «ծառայ ծառայից Աստուծոյ»:

Ընդհանրապէս ժողովից առաջ և ժողովի ժամանակ պակաս չէին խնդիրներ, առաջարկներ և նախազգուշութիւններ: Դուք և ես, գերապատիւ Տէր, մասնակցում էիք նոցա ձեր ստորագրութիւններով: Յունուարի 12-ին պապի հասցէին ուղղած խնդրի մէջ, որին դուք և ես ստորագրել էիք, փոքրամասնութեան պատկանող եպիսկոպոսները յայտարարել էին, որ «եկեղեցական հայրերի ասացուածքները և գործերը, պատմական ֆակտերաթղթերը և նոյն իսկ կաթոլիկական վարդապետութիւնը յառաջացնում են մեծ դժուարութիւններ, որոնք արգելում են հրապարակ հանելու անսխալականութեան վարդապետութիւնը»: Այդ դժուարութիւնները քննելուց առաջ, ինչպէս իրանք են ասում նոքա վախեցան և խնդրեցին պապին, որ նա այդ ժողովի խորհրդածութեան նիւթ չդարձնէ, որով ստիպուած կըլինին հրաժարուել անսխալականութեան դաւանութիւնից: Երբ պապը պընդեց որ ժողովը զբաղուի այդ խնդրով գերմանական եպիսկոպոսները Մարտի 11-ին պահանջեցին հանգամանօրէն խորհրդածութիւններ անսխալականութեան հարցի վերաբերմամբ, որոնց պէտք է ղեկավարէին երկու կողմից ընտրուած պատգամաւորութիւնները: Թոյլ չտուին խորհուրդ կազմելու, ճառերը մնացին այնպիսի դասաւորութեամբ (aula), որի մէջ անկարելի էր գտնել կանոնաւոր դատողութիւն: Թէ որքան անհրաժեշտ և օգտակար կըլինէին այդպիսի հետազօտութիւնները խորհրդածութիւնների ժամանակ, այդ երևում է հետևեալ օրինակից: Մի ապած տոմսակի մէջ Իտալական եպիսկոպոսների մեծ մասը յայտնել էր ցանկութիւն, որ պապի անսխալականութիւն ճանաչուի որպէս հաւատի վարդապետութիւն, որովհետև այդպէս էին ուսուցանում երկու իտալացի աղգի պարծանքները Թոմմաս Ակվինատացին և Ալֆոնս Լիգուորին—եկեղեցու այդ երկու վայլուն աստղերը [1]):

1) Նայել տիեզերական ժողովի պաշտօնական գործերի հաւաքածուի II 153.

Սակայն յայտնի եղաւ, ինչպէս ես նոյնպէս և Դրասարին յիշեցրինք, որ վերոյիշեալ Թուլմասը խաբուած էր մոգացածին վկայութիւններով, որովհետև նա իւր ուսմունքը հաստատելու համար միշտ և առանց բացառութեան օրինակներ էր բերում կեղծիքներից և երբէք չէ դիմած եկեղեցական հայրերի և ժողովների կանոնների բնագիրներին: Իսկ ինչ վերաբերում է Լիգուորիին, այս պէտք է ասել, որ եթէ մի թեթև հայեացք ձգէ փորձուած աստուածաբանը նորա շարադրութեան վերայ, կըգայ այն եզրակացութեան, որ նա Թուլմասից աւելի ի չարն է գործ դրել սուտ վկայութիւնները: Իմ այդ սխալների ցուցումները գրաւեց իւր վերայ Հռոմի ուշադրութիւնը. իմ դէմ ուղղած և Հռոմում ծրագրած շարադրութեան հեղինակն ասում է 1). «այդ մասին աղմուկ բարձրացաւ» հետևաբար հարկաւոր էր ենթարկել անպայման քննութեան այդ գործը: Այդ քննութիւնը, եթէ որ նա կատարուէր բաւականին ընդարձակ և հիմնաւոր, ի հարկէ, շատ հեռու կըտանէր. նա կըգար այն եզրակացութեան, որ պապի անսխալականութեան թէօրեան մտել է եկեղեցու մէջ դիտաւորեալ հնարածոյքների և կեղծիքների շնորհիւ և ապա տարածուել է և հաստատուել բռնութեամբ, հին ուսմունքների ճնշմամբ, զանազան իշխանական միջոցներով ու խորամանկութեամբ:

Այսպիսով անօգուտ կըլինէին բոլոր ջանքերը, ընդդիմութիւնները, զեկուցումներն ու խնդիրները. ոչ մի բանի չէին համաձայնում—մինչդեռ յաճախ և ամենայն դէպքում աչքի առաջ ունէին վերոյիշեալ Գլորենտեան ժողովի օրինակը, ուր յոյների նկատողութիւնը՝ թէ նոցա առաջարկում են եկեղեցական հայրերի աղաւաղուած օրինակները, ստիպեց ժողովականներին քննելու և դատելու, որ կատարուեց մեծ հոգատարութեամբ և շարունակուեց մի քանի ամիս: Անկասկած Ձերդ գերապատուութեան յայտնի է, որ ճշմարիտ տիեզերական ժողովից, եթէ նա

1) De Romani Pontificis suprema potestate docendi disputatio theologica, Neapoli 1870, p. 50: En tota clomorum, quas cireumcirca aundimus, causa.

պէտք է հրատարակէր դաւանաբանական որոշումներ, ի սկզբանէ անտի պահանջում է որպէս պայման նորա նշանակութեան ամենաճիշտ և հասուն քննութեան աւանդութիւնների: Ի՞նչպէս եղաւ որ այդ բանի վերաբերմամբ տիեզերական ժողովի վարմունքը անհամաձայն դուրս եկաւ 1870 թ. Հռոմի ժողովին: Ի հարկէ Կարգոնի արքեպիսկոպոսի շարադրութիւնը, որ արդէն ընդունուած է նախապատրաստական յանձնաժողովներում և այժմ ծառայում է իբրև ապացոյց ժողովուած եպիսկոպոսներին մի ժամ անգամ չէր դիմանայ քննութեան:

Եկեղեցու ամբողջ պատմութեան մէջ բոլոր տիեզերական կոչուած ժողովներից ինձ յայտնի է միայն մէկը, որի մէջ ինչպէս և Վատիկանի ժողովի մէջ իշխանաւորները թոյլ չտուին աւանդութիւնները ենթարկել հիմնական քննութեան. դա Եփեսոսի 449 թ. ժողովն էր, որտեղ այսպէս ասած աւազակների ժողովում մեծ դեր էր խաղում բռնութիւնը: Վատիկանի ժողովում նոյնպէս արգելեցին կանոնաւոր և մանրամասն կերպով քննել գործը, ժողովի գործավարութեան կարգը, պապական կոմիսիան և մեծամասնութեան կամքը: Այսպիսի քննութիւնը ի հարկէ լոյս աշխարհ կըհանէր դժուարին և անախորժ գործեր, բայց կազատէր եկեղեցին շփոթութիւններից, որը արժանի է և Ձեր ցաւակցութեան: Եթէ Դուք, չնայելով դորան, դարձեալ կըպնդէք որ Վատիկանի ժողովը բոլորովին ազատ է եղել, ապա ուրեմն ազատ բառը Դուք ընդունում էք ի հարկէ ոչ այն մտքով, ինչ մտքով որ ըմբռնում են աստուածաբանները:

Ժողովը ազատ է ըստ ուսուցման աստուածաբանութեան միայն այն ժամանակ, երբ տեղի է ունենում ազատ քննութիւն և վերլուծութիւն բոլոր տարակուսանքների և դժուարութիւնների, երբ թոյլ է տրւում առարկութիւններ և քննւում են կանոնաւոր կերպով, որպիսին պահանջում է աւանդութիւնների հետազօտութիւնը: Որ այդ բանը գոնէ համեստ կերպով չսկսուեցաւ, որ հռոմէական աշխարհի եպիսկոպոսների մեծագոյն մասը ցանկութիւն չունէր կամ չէր կարող իսկապէս որոշել սխալը՝ ուղղեց և ճշմարիտը կեղծեց, այդ ապացուցանում են Իտալիայում

երևցած և հռոմում տարածուած շարադրութիւնները. օրին. համար դոմինիկեան միաբան և Մոնդովի եպիսկոպոս Խիլեարդինը՝ այդ ապացուցանում է նոյնպէս և այն իրողութիւնը, որ հարիւրաւոր եպիսկոպոսներ կարողացան առանց կարմրելու հիմնուել Ալֆոնս Լիգուորի իբր թէ անձեռնմխելի հեղինակութեան վերայ:

Երբ եզուիտները ծրագրեցին հաւատի դաւանութիւնը դարձնել պապի բացարձակ իշխանութիւնը եկեղեցու և պետութեան վերայ՝ ուսուցման և կառավարութեան մէջ նոքա մոռացեցին ինչպէս յայտնի է, այսպէս կոչուած sacrificio dell intellecto (զոհումն բանականութեան) և հաւատացնում էին իրանց կողմնակիցներին ու աշակերտներին—շատերը նոցանից նոյն իսկ եպիսկոպոսները յիրաւի համոզուեցին—որ ամենալաւ զոհաբերութիւն Աստուծուն և ամենաբարձր քրիստոնէական հերոսութիւնը նորանումն է, որ մարդ հրաժարուելով սեպհական բանականութեան լոյսից, ստացական ծանօթութիւններից և խոհեմութիւնից կոյր հաւատով անձնատուր լինի պապի անսխալական վարդապետութեան, որպէս միակ յուսալի աղբիւր կրօնական ծանօթութիւնների: Այդ միաբանութիւնը յաջողութեամբ կարողացաւ մեծամասնութեան աչքում մոռաւոր ծուլութեան տալ աստուածահաճոյ զոհի նշանակութիւն և համոզել եբրեմն նոյն իսկ այնպիսի մարդկանց, որոնք շնորհիւ իրանց կրթութեան կարող էին ձեռնարկել պատմական քննութեան, հրաժարուելու նոցանից (քննութիւն):

Բայց գերմանական եպիսկոպոսները, որքան թոյլ են տալիս դատելու նոցա հովուական թղթերը, այդ աստիճանի կուրութեան չհասան: Մարդկային գիտութեան, հարցասիրութեան և քննութեան նոքա դեռ ևս տալիս էին իրաւունք և գործունէութեան ասպարէզ:

Նոքա նոյնպէս դիմում էին պատմութեան, ինչպէս այդ արաւ հովուական թուղթը, որին Դուք ևս ստորագրել էիք: Իմ ձեռքս հասած Ֆրէյբուրգեան եպիսկոպոս Լոտար ֆոն Կիւբելի հովուական թղթի 9-րդ երեսում ասուած է. «ստանում է արդեօք պապը նոր յայտնութիւն. կարո՞ղ է տալ հաւատքի նոր անդամներ: Ի հարկէ՝

ոչ. նա միայն կարող է յայտարարել, որ այս ինչ յայտնի վարդապետութիւնը գտնուում է ս. Գրքի և եկեղ. աւանդութիւնների մէջ, հետևաբար նա աստուածայայտնեալ է, դորա համար բոլորը պէտք է հաւատան նորան»: Ցեմ կասկածում որ Ձերդ գերապատուութիւնը և միւս գերմանական եպիսկոպոսները համաձայն են այս խօսքերին: Այդ դէպքում բոլոր գործը, եկեղեցու այս շփոթ դրութեան ժամանակ, դառնում է զուտ պատմական մի հարց, որը պէտք է վճռել միայն այն միջոցներով, որոնք յայտնի են և այն կանոններով, որոնք մեծ ոյժ ունին ամենայն պատմական քննութեան և անցեալի ծանօթութեան համար, հետևաբար նոքա, որոնք պատկանում են պատմութեան իրողութիւններին: Պապը և եպիսկոպոսները ներկայ դէպքում անպատճառ պէտք է ենթարկուին, այսպէս կոչուած, ընդհանուր կանոնին. այն է՝ եթէ կամենում են որ իրանց որոշումները լինին ձեռնհաս, ապա ուրեմն նոքա պէտք է գործ դնեն գործավարութեան այն ձևը, պէտք է լսեն պարտուպատշաճն քննութեամբ այն վկաների ցուցումներին, որ բոլոր ժամանակների և ազգերի պատմութեան հմուտ դատաւորների ընդհանուր համաձայնութեամբ կարող է պարզել ճշմարտութիւնը: Հետևաբար հարկաւոր էր և այժմ էլ հարկաւոր է պատասխան տալ հետևեալ երկու հարցերին համաձայն այդպիսի գործավարութեան: Նախ՝ ճշմարիտ է որ Քրիստոսի երեք անգամ դիմելը Պետրոսին բոլոր եկեղեցիները, նորա սկզբից մինչև յետին ժամանակներն, ըմբռնում էին այն մտքով, ինչ մտքով որ բացատրում են այժմ՝ որպէս թէ շնորհած է պապերին անսխալականութիւն և անսահման սիեզերական իշխանութիւն: Երկրորդ՝ ճշմարիտ է որ բոլոր ժամանակների եկեղեցական աւանդութիւնները՝ թէ եկեղեցական հայրերի գրուածներում և թէ պատմութեան իրողութիւնների մէջ, վկայում են որ ճանաչել են պապերի այդ կրկնակի իրաւունքը:

Եթէ այս հարցերին անհրաժեշտ է պատասխանել՝ ոչ. ապա ուրեմն հազիւ թէ իրաւունք ունենային դիմելու ինչպէս այդ անում են պ. ֆոն Կիւբէլ և ուրիշները, Ս. Հոգու օգնութեան,

որ նոցա կարծիքով իբր թէ ապահոված է պապի համար, և ուստի հարկաւոր է հնազանդել հաւատի նորա որոշումներին։ Հէնց այդ ամենից առաջ կարևոր է ապացուցանել, թէ ճշմարիտ որ աստուածային օգնութիւնն ապահոված է նորա համար, մինչև այժմ այդ բանը ո՞րտեղ է ապացուցուած։ Ժողովում չէր, որ չերկնչելով նոյն իսկ կեղծիքներից, ինչպէս այդ ցոյց է տալիս Կօրդոնի գլխաւոր շարադրութիւնը, տուին բոլորովին սխալ գաղափար աւանդութեան մասին միանգամայն չխօսելով ամենահամոզեցուցիչ իրողութիւնների և հակասական վկայութիւնների մասին. ահա այս է որ կամենում եմ ապացուցանել։

Այժմ հրաւիրում եմ Ձերդ գերապատուութեան ուշադրութիւնը այն վարդապետութեան վերայ, որ մենք պէտք է դաւանենք, որը գործի էութեամբ, պապի յայտարարութեամբ և անսխալականութեան կողմնակիցների խոստովանութեամբ չէ հասարակ անդամ հա-ապէ, այլ հիմնական անդամ հա-ապէ, որ այստեղ խօսքը հաւատի կանոնի (o regula fidei) և նորմայի մասին է, որով որոշւում է թէ ի՞նչ է հարկաւոր հաւատալու և ի՞նչ ոչ։ Այն հարցին, թէ ի՞նչու կաթոլիկը հաւատում է սրան կամ միւսին—ապագայում նա կարող է և պէտք է պատասխանէ միայն այս—ես այդ հաւատում կամ մերժում եմ նորա համար, որովհետև անսխալական պապը հրամայում է հաւատալ և մերժել։ Հաւատի այդպիսի բարձրագոյն սկզբունքը երբէք չպիտի նսեմանայ եկեղեցու մէջ, նա պէտք է փայլէ ս. Գրքի մէջ արևից աւելի պայծառ։ Նա որպէս լուսատու աստղ պէտք է լուսաւորէ եկեղեցին բոլոր ժամանակներում և ամենայն տեղ և պէտք է համարուի գլուխ ամենայն ուսուցման։ Մենք բոլորս սպասում ենք բացատրութեան, թէ ինչպէս եղաւ որ եկեղեցին միայն 1830 տարուց յետոյ մտածեց դարձնել հա-ապէ անդամ այն վարդապետութիւն, որ պապը Հոկտեմբերի 28-ին Ձերդ գերապատուութեան գրած նամակի մէջ անուանում է ipsum fundamentale principium catholicae fidei ac doctrinae (ամենահիմնական սկզբունք կաթոլիկական հաւատի և վարդապետութեան)։ Այդ ինչպէս էր եղել, որ պապերը և աստուածաբանական դպրոցները դարերի

ընթացքում ներողամտութեամբ նայում էին թէ ինչպէս ամբողջ երկրներ հիմնական վարդապետութիւնը հերքում էին։ Եւ ինչպէ՞ս կարող էր եկեղեցին պահպանել իւր միութիւնն այն դէպքում, երբ հաւատի հիմունքների մէջ բաժանումն կայ։ Եւ ի՞նչն էր պատճառը, թոյլ տուէք համարձակութեամբ, որ Դուք, Ձերդ գերապատուութիւն, այնքան երկար ժամանակ և յամառութեամբ դիմադրեցիք այն նորահնար դաւանութեան։ Նորա համար որ բարեպատեհ չէր (inopportun)—կասէք դուք։ Բայց միթէ կարող է լինել երբ և իցէ անբարեպատեհ ժամանակ տալու հաւատացեալներին հաւատի բանալին, յայտարարելու հաւատի հիմնական անդամը, որից կախումն ունին բոլոր մնացածները։ Այժմ կանգնած ենք անդունդի առաջ, որ բաց արեց Յուլիսի 18-ը...։

Նոր որոշումների բարձր կարևորութիւնը կշռել ցանկացողներին առաջարկում եմ ուշի ուշով համեմատել ժողովի հրովարտակի երրորդ գլուխը չորրորդի հետ և պարզել թէ ինչ սիստեմով է յայտնւում այստեղ տիեզերական անսահման բարձր իշխանութիւնը և հոգևորական դիկտատուրը։ Դա է այն կատարեալ իշխանութիւնը բոլոր եկեղեցիների և իւրաքանչիւր անհատի վերայ, որին ձգեցին պապերը Գրիգոր Է-ից սկսած. այդ արտայայտուած է բազմաթիւ կոնդակների մէջ սկսած Unam sanctam-ից։ որից պէտք է հաւատան և խոստովանեն այժմ բոլոր կաթոլիկները։ Այդ իշխանութիւնը անսահման և անչափ է, ամենուրէք է, և ուր որ, ինչպէս ասում է Ինոկենտիոս Գ-ը, կայ մեղք կարող է պատժել բոլորին, չի ընդունում ոչ մի բողոք և է բարձր ինքնակամութիւն, որովհետև պապը Բոնիֆացիոս Ը-ի ասելով, կրում է իւր մէջ բոլոր օրէնքները։ Եւ որովհետև նա այժմ անսխալական դարձաւ, ուրեմն կարող է մի ակնթարթում մի խօսքով orbi (աշխարհ) այսինքն դիմելով բոլոր եկեղեցիներին, ամենայն վիճակ, ամենայն վարդապետութիւն, ամենայն պահանջ դարձնել անպայման և անփոփոխ հաւատի վարդապետութիւն։ Նորա առաջ չի դիմանում ոչ մի իրաւունք, ոչ մի անձնական և հասարակական ազատութիւն, կամ ինչպէս ասում են կանոնիկոսները—Աստուծու և պապի դատաստանը

միևնոյնն է։ Այդ սիստեմի ծագումը բռնանական է և կրում է իւր վերայ նորա կնիքը. նա երբէք չի կարող մնալ գործել գերմանական երկրներում։

Որպէս քրիստոնեայ, աստուածաբան, պատմաբան և քաղաքացի չեմ կարող ընդունել այն վարդապետութիւնը։

Որպէս քրիստոնեայ—նորա համար, որ չի հանդուրժում աւետարանի սգալն և Քրիստոսի ու առաքեալների պարզ խօսքերին. նա ուզղակի կամենում է հաստատել այս աշխարհի թագաւորութիւնը, որ Քրիստոս մերժեց—ցանկանում է թագաւորել հօտի վերայ, որ արգելեց Պետրոս ուրիշներին և իրան։ Որպէս աստուածաբան նորա համար, որ բոլոր աւանդութիւնները անհաշտելի կերպով հակառում են նորան։ Չեմ կարող ընդունել որպէս պատմաբան նորա համար, որ որպէս պատմագէտ ես գիտեմ, որ տիեզերական իշխանութեան թէորիայի իրագործումը Եւրոպայում պատճառ է եղել արիւնհեղութեան, խռովութեան և ամբողջ երկրների կործանման. խախտել է հին եկեղեցու օրգանական գեղեցիկ կազմութիւնը. ստեղծել, մնուցել և հաստատել է գարշելի չարութիւններ եկեղեցու մէջ։ Վերջապէս պէտք է մերժեմ որպէս քաղաքացի նորա համար, որովհետև տէրութիւնների, թագաւորների և բոլոր քաղաքական կարգերի պատի իշխանութեան ենթարկելու ձգտումները և այն բացառիկ դիրքը, որ այդ վարդապետութիւնը ձգտում է յատկացնել կղերին, հիմք է դառնալու անվերջ և կորստաբեր գժտութիւնների թագաւորութիւնների և եկեղեցու, հոգևորականների և աշխարհականների մէջ։ Չեմ կարող թագցնել, որ այդ վարդապետութիւնը, որի հետևանքն եղաւ հին գերմանական կայսերութեան կործանումը, այն դէպքում եթէ տիրապետող դառնայ Գերմանիայի կաթոլիկ ժողովուրդի մէջ, իսկոյն կըտեղափոխէ անբուժելի հիւանդութեան սաղմը նոր կազմուած կայսերութեանմէջ 1)։

Մնամ յարգանօք Ձերդ գերապատուութեան խոնարհ

Ց. ՖՈՆ ԴԵՈԼԼԻՆԳԵՐ.

1) Հռոմէական կուրիայի և եզուիտների պաշտօնական օրգանում՝ «Civilta» մարտի 18-ից 1871 թ., երես 664, հէնց այժմ կարդացի հետևեալը,

ԺԱ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖՈՆ ՇԵՐԲ-Ի ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ։

2-ն ապրիլի 1871 թ.

Ողորմութեամբ Աստուծոյ և շնորհիւ առաքելական սուրբ գահի, ես Գրիգորիոս արքեպիսկոպոս Միւնխենի և Ֆրէյզինգենի, պաշտօնական պրելատ և տրօն-ասիստենտ Նորին Սրբութեան և այլն և այլն։

Վիճակի բոլոր բարձրապատիւ կղերին և հաւատացեալներին ողջոյն և աստուածային օրհնութիւն։

Stiftsprobst և աստուածաբանութեան ուսուցչապետ դոկտոր Ֆոն Դեոլլինգերը այս տարու Մարտի 29-ին ուղարկեց մեզ զեկուցումը իւր յարաբերութեան մասին գէպի Վատիկանի տիեզերական ժողովը և նորա մինչև այժմ եղած որոշումները, որը յանձնեց միևնոյն ժամանակ աուգսբուրգեան լրագրի տրամադրութեան (Augsburger Allgemeine Zeitung)։ Նա արդէն հրատարակուած է այսաեղ (տարոյս Մարտի 31-ից № 90 ի արտակարգ жетроординарный) յաւելուածի մէջ։

Այդ հրատարակութիւնը հարկադրում է մեզ դարձնել տալ արժանապատիւ կղերի և իմ վիճակի հաւատացեալների ուշադրութիւնը նորա գլխաւոր սխալմունքների վերայ, որ արժանի է ցաւակցութեան, և հեռացնել կաթոլիկական եկեղեցուց նորան և նորա գրուածքը, եթէ կըպաշտպանէ յամառութեամբ։

ա. Հեղինակը ցանկանում է, որ թոյլ տան իրան եպիսկոպոսների կամ աստուածաբանների ժողովում ներկայացնել իւր ապացոյցները այն բանի, թէ Վատիկանի ժողովի չորրորդ նիստի

«պապն է ամենաբարձր դատաւորը քաղաքական օրէնքների։ Նորա մէջ, որպէս իւր բարձրութեան, միանում են երկու իշխանութիւնները՝ հոգևոր և մարմնաւոր, որովհետև նա է փոխանորդ Քրիստոսի, որ է ոչ միայն յաւիտենական սուրբ, այլ և թագաւոր թագաւորաց և Տէր տէրանց»... Եւ յետոյ. «Պապը, իւր բարձր արժանաւորութեան, շնորհիւ, գլուխ է այդ երկու իշխանութեան»։

հաւատի որոշումները չկան ոչ ս. Գրքի մէջ, ինչպէս հասկացել են նորան ս. հայրերը, ոչ եկեղեցական աւանդութեան վաւերական պատմութեան մէջ. միևնոյն ժամանակ աւելացնում է, որ վերջինը եղծուած է մոռացածին կամ աղաւաղուած դոկումենտներով և թէ այդ հրովարտակները հակասում են հին եկեղեցական որոշումներին:

Այստեղ մեզանից չի պահանջւում գործի քննութիւն ու վճիռը, նա ասդէն վճռուած է: Տիեզերական, կանոնաւոր, աղատ և եկեղեցու գլխի ղեկավարութեամբ կազմած ժողովը ուշադրութեամբ քննելուց յետոյ պարզաբանեց, ձևակերպեց և որոշեց կաթոլիկ եկեղեցու վարդապետութիւնը հռոմէական պապերի առաջնութեան մասին:

Ամեն կաթոլիկ քրիստոնեայ այժմ գիտէ, թէ ինչ է առաջարկում հաւատալու եկեղեցին: Այն եկեղեցին, որին Յիսուս Քրիստոս խոստացաւ իւր օգնութիւնը յաւիտեան, չի կարող պահանջել մեզանից ուրիշ հաւատ, բացի Աստուծու յայտնածից: Ուրեմն ով կը հակառակէ եկեղեցու որոշումներին, նա կը հակառակէ Աստուծուն: «Ապա եթէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եկիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւորն»: Մատթ. ԺԸ. գլ. 17 հր.:

բ) Հեղինակը հաստատում է որ «այստեղ խօսքը զուտ պատմական խնդրի մասին է, որ հարկաւոր է վճռել այն միջոցների օգնութեամբ, որոնք յայտնի են և այն օրէնքներով, որոնք ունին զօրութիւն ամենայն պատմական քննութեան համար, անցեալը ճանաչելու համար, հետևաբար այն օրէնքների, որոնք պատկանում են պատմական իրողութիւններին»:

Որանով պատմական քննութիւնը բարձր է դասւում եկեղեցուց, եկեղեցական որոշումները զոհ են դառնում պատմագէտների վերջնական վճիռներին, Աստուածահաստատ վարդապետութիւնը եկեղեցու վերցւում է նորանից և կաթոլիկական ճշմարտութիւնը ենթարկւում է կասկածանքի: Թող մերձենայ գիտութիւնը որքան ուզէ և երբ կամենայ կաթոլիկական վարդապետութիւններին և քննէ նորան իւր բոլոր մարդկային միջոցներով, նա կը դիմանայ ամեն տեսակ փորձերի: Բայց անհաւատ

գիտութիւնը որքան էլ հակառակի Աստուծուն և նորա յայտնութեան, եկեղեցուն և նորա հաւատի որոշումներին—երբէք և ոչ մի դէպքում չի կարող շարժել «ոչ վէմը», որի վերայ հիմնեց Յիսուս իւր եկեղեցին (Մատթ. ԺԶ. 18 հ.):

գ). Հեղինակը ղեկուցանում է, որ անցեալ տարուայ Յուլիսի 18-ի հրովարտակները «ամենևին համաձայն չեն եւրոպական պետութիւնների նամանաւանդ Բաւարիայի կազմակերպութեան,—որ այդ վարդապետութիւնը, որի պատճառով կործանուեց վերջին գերմանական կայսերութիւնը,—եթէ նա տիրապետող դառնայ Գերմանիայի կաթոլիկ ժողովուրդի մէջ, իսկոյն կը տեղափոխէ անբուժելի հիւանդութեան սաղմը դեռ նոր կազմակերպուած կայսերութեան մէջ»:

Մենք բարձրաձայն բողոքում ենք այդ բոլորովին սիալ ենթադրութեան և չար մեղադրութեան դէմ և յայտնում ենք, որ դա է ամենայն հիմունքներից զուրկ կասկած կաթոլիկական եկեղեցու, նորա գլխի, եպիսկոպոսների և բոլոր անդամների վերայ, որոնք երբէք չեն դադարի «տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»: Մատթ. ԻԲ. 21 հր.):

Սիրելի հաւատացեալներ [1]). Հայեացքները, հիմնական դրութիւնները և դատողութիւնները, որոնք արտայայտուած են այդ ակտի մէջ և որոնցից բերենք միայն գլխաւորները, տարածուած էին շատ գրքերի, պարբերական մամուլի և լրագիրների մէջ հակաքրիստոնէական կրքով և մաղձով Վատիկանի ժողովի մասին յայտարարութիւնների ժամանակից: Այդ մասին վաղուց արդէն նախագուշակել էին, որը այժմ այդ ակտի շնորհիւ շատ հաւանական է երևում, թէ այդ ղեկուցման հեղինակը Վատիկանի ժողովի դէմ եղած շարժման մտաւոր պարագլուխն էր, որ այնքան մեծ ազմուկ և շփոթութիւն ձգեց մտքերի և խղճերի մէջ:

Ուրիշ շատ բազմաթիւ հակառակորդների գրաւոր առարկութիւններ և հերքումներ, դժբաղդաբար, անուշադիր էին թողնուած նոյն իսկ եկեղեցու հակառակ շրջաններում:

---

1) Գերմաներէն Diöcesanen նշանակում է հաւատացեալներ, որոնք պատկանում են Դիոցիզ-վի ճակի: Թարգմ.

Իսկ այժմ այդ մարդու, որ մինչև այժմ յարգուած և բարձրը պատիւ էր վայելում եկեղեցու և պետութեան կողմից, հրապարակ դուրս գալով գործը ապստամբութեան կերպարանք է ընդունում կաթոլիկ եկեղեցու դէմ։

Սիրելի հաւատացեալներ! Ճանաչելով մեր հովուական պարտքը առանց յապաղելու դիմեցինք ձեզ այս լուրջ և նախազգուշացնող հովուական խօսքերով՝ միևնոյն ժամանակ գործին վերաբերեալ կարևոր կարգադրութիւններ անելով։

Ապագայում միջոցներ գործ դնելիս այլի առաջ կունենանք Գերմանիայի կաթոլիկ եկեղեցու ապառնացող վտանգը, նոյնպէս և այն սերը, որ պէտք է տածենք դէպի մեր մոլորուած եղբայրները։

Մենք «Ջախջախուած եղէգը չենք փշրի և առկայծեալ պատրոյգը չենք հանգցնի»։ Մատթ. ԺԲ. 20. բայց մենք կարող ենք պահպանել մեր թանկագին հօտը մոլորութիւններից և գայթակղութիւններից։

Դառնալով ձեզ, բարձրապատիւ քահանաներ, աղաղակում ենք Պօղոսի հետ. «Ո՞վ Տիմոթէէ՝ պահեա զաւանդն՝ խոտորեալ ի պղծոց և ի նորաձայն բանից, և ի հակառակութենէ և ի մոլար անուն գիտութենէ։ Զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոյ անտի»։ (Տիմոթ. Ա. թուղթ Զ. 20, 21)։

Իսկ դուք բոլորդ, սիրելի հաւատացեալներ, ապօթեցէք հաւատի հակառակ ղեկուցման հեղինակի հոգու փրկութեան, ս. եկեղեցու՝ նամանաւանդ թանկագին Գերմանիայի և Բաւարիայի մէջ գտնուածների համար. ապօթեցէք ձեր իսկ վշտացած հովուապետի համար, որ օրհնում է ձեզ Հօր, Որդու և ս. Հոգու անունով. ամէն։

Այս հովուական թուղթը հարկը պահանջած ժամանակ կարդալ եկեղեցու ամբիոնից։

Գրեցաւ Մինխենում Վարկավարդի կիւրակի օրը 1871 թ.։

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Մինխենի և Ֆրէյզինգենի։

ԺԲ.

ՄԻՆԽԵՆԻ ԵՒ ՖՐԷՅԶԻՆԳԵՆԻ ՕՐԻՆԱՐԻԱՏԸ—ԴԵՈՎԼԻՆԳԵՐԻՆ։

3 Ապրելի 1871 թ.

Օրդինարիատ Մինխենի և Ֆրէյզինգենի։

Նորին գերազանցութիւն (Excellenz) գերապատիւ Տէր արքեպիսկոպոսը յանձնարարեց մեզ ուղարկելու Ձերդ գերապատուութեան հէնց այսօր հրատարակած մեր հովուական թերթի (Pastoralblattes) 14 №-ին կցած հովուական թուղթը։

Սորա հետ պէտք է հաղորդեմ, որ գերապատիւ արքեպիսկոպոսը հէնց այսօր հրամայել է իւր վիճակի մէջ գտնուած առուծաբանութեան բոլոր կանոնիատներին յայտնել Ձեր դասախօսութիւններին։

Պարտք եմ համարում նկատել, որ թէև Նորին գերապատուութիւնը չի կարող արգելել Ձերդ բարձրապատուութեան շարունակելու Ձեր դասախօսութիւնները, բայց Դուք այսուհետև կարող էք այդ անել միայն ընդդէմ Ձեր հովուապետի, որ օրինական պահպան է իւր վիճակի կաթոլիկական կրօնի ամեն տեսակ ուսուցման։

Վերջապէս Ձեր անցեալ ամսի 29-ին հրատարակած ղեկուցման պատճառով, գերապատիւ հովուապետը հրամայեց առաջարկել Ձերդ բարձրապատուութեան մտածելու այն բանի մասին, որ Վատիկանի ժողովի չորրորդ նիստում հրատարակած Constituio prima de ecclesia Christi ունի դաւանաբանական բնաւորութիւն, որ նորա մէջ որոշած կանոնների հակառակութիւնը ճանաչուում է որպէս հերձուած, որ ձևական հերձուածը ipso facto ենթարկուում է պապի բանադրանքին. ուստի բարձրապատիւ Տէր, քննեցէք Ձեր խիղճը, արդեօք չէք ենթարկուած արդէն եկեղեցական դատապարտութեան։

Եթէ, Ձերդ բարձրապատուութիւն, դարձեալ կը պահպանէք Աստուած ազատ, հրատարակած ղեկուցման հայեցակէտը, այն

ժամանակ հարկաւ պէտք է յայտարարենք հրապարակաւ և հանդիսաւոր վճռով, որ Դուք արժանի էք եկեղեցու բանագրութեան, որին (եկեղեցի) Դուք մեծ ծառայութիւն էք մատուցել։

ԴՕԿՏՈՐ ՅՈՎՍԷՓ ՖՈՆ ՊՐԱՆԴ

Մայր եկեղեցու աւագ քահանայ և գլխաւոր փոխանորդ։

Քարտուղար՝ Կ. Օստերաուէ։

Միւնխեն

3 Ապրիլի 1871 թ.

ԺԳ.

ՄԻՒՆԽԵՆԻ ԵՒ ՖՐԷՅԶԻՆԳԵՆԻ ՕՐԴԻՆԱՐԻԱՏԸ—ԴԵՕԼԻՆԳԵՐԻՆ։

17 Ապրելի 1871 թ.

Օրդինարիատ Միւնխենի և Ֆրէյզինգենի արքեպիսկոպոսութեան։

Նորին գերապատուութիւն, մեր գերազնիւ Տէր Գրիգորիս արքեպիսկոպոսը Միւնխենի և Ֆրէյզինգենի յանձնարարեց մեզ այսօր յայտնելու իւր կողմից Ձերդ. Բարձրապատուութեան, որոնով կատարում ենք նորա հրամանը, որ Դուք ենթարկուած էք մեծ բանագրանքի նորա բոլոր կանոնական հետևանքներով։

Անցեալ տարուայ Յուլիսի 18-ի Վատիկանի սիեզերական ժողովի ընդունած և Պիոս Թ. պապի հաստատած ու հանդիսաւոր կերպով յայտարարած որոշումները Ձերդ Բարձրապատուութեան շատ լաւ յայտնի են։

Այն դիրքը որ, Ձերդ Բարձրապատուութիւն, բռնեցիք վերոյիշեալ ժողովի նկատմամբ, ստիպեցին Հոլուապետին պահանջելու Ձեզանից այդ գործի վերաբերմամբ ճիշտ բացատրութիւն և յորդորելու Ձեզ դէպի հարկաւոր հպատակութիւն։ Այդ յորդորական նամակները՝ լի հայրական սիրով գրել է Ձեզ անցեալ տարուայ Հոկտեմ. 20-ին և տարոյս Յունուարի 4-ին։

Դուք, Ձերդ Բարձրապատուութիւն, երկար ժամանակ դանդաղեցիք որոշեալ պատասխան տալու։ Ձեր այս տարուայ Յունուարի 29-ի և Մարտի 14-ի գրած նամակները, որոնցով Դուք նոր ժամանակ նշանակեցիք որոշ պատասխանի համար, Հոլուապետը պատասխանեց ներողամտութեամբ։

Վերջապէս անցեալ ամսի 29-ին դուրս եկաւ Ձեր հռչակաւոր զեկուցումը, որով Դուք ոչ միայն հրաժարւում էիք ճանաչել վերոյիշեալ ժողովի որոշումները, այլ և յառաջ բերում և պաշտպանում էիք հաւատի բոլորովին հերիսիկոսական սկզբունքը և միևնոյն ժամանակ թափում էիք եկեղեցու վերայ ամենատելի մեղադրանքներ։

Սորանից յետոյ Ձերդ Բարձրապատուութեան յայտնած սոյն ամսի 3-ի վճիռը պարզ և համոզեցուցիչ կերպով դարձրել էր Ձեր ուշադրութիւնը այդ քայլի անխուսափելի հետևանքների վերայ։

Սակայն մինչև այժմ չկայ ոչ մի յիշատակութիւն այն մասին, որ Ձերդ Բարձրապատուութիւնը չէ ցանկանում մնալ հակառակ եկեղեցական որոշումներին։

Դորանից յետոյ երբ, Ձերդ Բարձրապատուութիւն, այդպէս ընդդիմացաք և դարձեալ շարունակում էք յանդուգն և գիտակցաբար ընդդիմանալ. կամ ոչ կ եկեղեցու պարզ և հաստատ հաւատի որոշումներին. դորանից յետոյ երբ Դուք ուշադրութիւն չդարձրիք Ձեր հովուապետի քանիցս անգամ կրկնած հայրական յորդորներին և նախազգուշութիւններին. դորանից յետոյ երբ սոցանից առաջացած մեծ փասնգը հաւատացեալների նկատմամբ վերջապէս յաղթեց այն յարգանքին, որ երկար ժամանակ տածում էինք դէպի Ձեզ Ձեր եկեղեցու և պետութեան մէջ բռնած բարձր դիրքի համար, ինչպէս և գիտութեան, ուսուցչութեան և հասարակական կեանքի մէջ ցոյց տուած անմոռանալի մեծ ծառայութեան համար.—դորանից յետոյ անհրաժեշտ եղաւ Ձեր հոգին փրկելու և ուրիշներին հաստատելու համար առանձին գաստաւճռով յայտարարել, որ Դուք մերժուած էք եկեղեցուց. այդ մերժումը crimen haereseos externae et formalis ի համար, որ եկեղեցին կարգել և Վատիկանի սիեզերական ժողովը նորից հաստատել է անցեալ տարուայ Յուլիսի 18 ի հրովարտակների վերաբերմամբ։ Այդ մերժման Դուք արժանացել էք վերոյիշեալ ipso facto եկեղեցա-

կան յանցանքի պատճառով և անհրաժեշտ է նշանակութիւն տալ այդ եկեղեցական դատավճռին, որ այժմ աչքի առաջ ունինք։

ԴՈԿՏՈՐ ՅՈՎՍԷՓ ՖՈՆ ՊՐԱՆԴ

Մայր եկեղեցու աւագ քահանայ և գլխաւոր փոխանորդ։

Միւնխեն

17 Ապրիլի 1871 թ.

ԺԴ.

Միւնխենի և Ֆրէյզինգենի օրդինարիատը Միւնխենի ս. Լուդովիկոսի քաղաքային և ծխական կառավարութեան։ (Stadtpfarramt)։

—

Միւնխենի և Ֆրէյզինգենի արքեպիսկոպոսութեան օրդինարիատը սորանով յանձնում է ս. Լուդովիկոսի քաղաքային ծխական կառավարութեան հրամայելու եկող կիրակի ամսոյս 23-ին ժամասացութեան ժամանակ եկեղեցու ամբիոնից ծանուցանել, որ գերապատիւ Տէր արքեպիսկոպոսը հրամայել է յայտարարել Stifstprobst-ին և պրոֆեսսոր դոկտոր Ֆոն Դեոլլինգերին նոյնպէս և դրանիկ գերատան (бенефиціантъ) ուսուցչապետ դոկտոր Յովհաննէս Ֆրիդրիկոսին, որ նոքա իրանց գիտակցական, յանդուգն և հրապարակական եկեղեցու հաւատի պարզ և հաստատուն որոշումների համար ենթարկուած են մեծ բանադրանքի սորա բոլոր կանոնական հետևանքներով։

Անյապաղ տեղեկութիւն կատարման մասին։

ԴՈԿՏՈՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՖՈՆ ՊՐԱՆԴ.

Մայր եկեղեցու աւագ քահանայ և գլխաւոր փոխանորդ։

Քարտուղար՝ Կ. Օստերաուէր։

Միւնխեն

18 ապրիլի 1871 թ.

ԺԵ.

ԴԵՈԼԼԻՆԳԵՐ ՏՈԴՏԱՆԻ Վ. ԻԴՄԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ։

18 Հոկտեմբ. 1874 թ. [1]։

Արժանապատիւ Տէր! Մեծ հաճութեամբ պատասխանում եմ ինձ առաջարկած հարցերիդ ի հարկէ համառօտ, որպէս ծեր և բազմաղբաղ մարդ։

1). Ինչ վերաբերում է ինձ, ես ինձ համարում եմ համոզմունքով հին-կաթոլիկ հասարակութեան մի անդամ։ Ես կարծում եմ որ հասարակութիւնը կըկատարէ իւր բարձր առաքելութիւնը այն էլ երեք եղանակով։

ա). Վկայել հին եկեղեցական ճշմարտութեան մասին և դէմ դնել նորահնար վարդապետութեան՝ պապի ընդհանրական իշխանութեան և անսխալականութեան. և գլխաւորապէս միշտ և անդադար բողոքել կործանիչ կամայականութեան դէմ հաւատի գործերի մէջ, որ առաջին անգամ մոռածեց պապը։

բ). Հին կաթոլիկ հասարակութեան երկրորդ կոչումը իմ կարծիքով այն է՝ որ նա որպէս մի եկեղեցի իւր աստիճանաբար զարգացման մէջ զատելով և մաքրուելով սխալանքներից և սնոտիապաշտութիւններից կազմէ մի անբաժան եկեղեցի համապատասխան հնի։

գ). Սորա հետ սերտ կերպով կապուած է նորա երրորդ կոչումը—այն է՝ ծառայել որպէս զէնք և միջոց ապագայ մեծ միաւորութեան բաժանուած քրիստոնեաների և եկեղեցիների։

Դորա սկիզբը, թէև դեռ շատ փոքր, դրուեցաւ մի քանի շաբաթ առաջ Բոննայում։ Հաւատում եմ որ այդ հաշտութեան գործը կըշարունակուի աւելի մեծ ծաւալով։

2). Յոյս չունիմ որ յաջորդ պապի կամ գոնէ ամենամօտիկներից մէկի ժամանակ կատարուի մի որ և է բարի գործ և որ-

---

[1] Տպուած էր արդէն 1875 թ. զանազան ժուրնալներում սկզբում առանց ստացողի անուան, ի միջի այլոց «Deutscher Merkur»-ի 29 համարում։

քան նկատում եմ, բոլորը, որոնք ծանօթ են Հռոմի դրան և կըղերի դրութեան հետ, չունին այդ կողմից ոչ մի յոյս, ինչպէս ես։

Բոլոր այդ հասարակութիւնների մէջ Իտալիայում և Իտալիայից դուրս կայ միայն մի շարժող և ղեկավարող ոյժ, որի մէջ մնացածները՝ եպիսկոպոսները, կարդինալները, հոգևոր միաբանութիւնները, դպրոցները և այլն. կատարում են կրաւորական դեր.—այդ ոյժն է յիսուսեան միաբանութիւնը։ Նա է ամբողջ Հռոմէական եկեղեցու հոգին և ոգը։ Այդպէս կըլինի ի հարկէ նոր պապի օրով, որովհետև այդ միաբանութեան հարկաւոր է և միևնոյն ժամանակ չի կարող գոյութիւն ունենալ առանց իշխելու կամ առանց իշխանութեան ձգտելու։

1773 թուից առաջ եկեղեցու մէջ գոյութիւն ունէին զանազան մէկը միւսին գերակշռող ոյժեր. միւս միաբանութիւնները դեռ ևս զօրեղ էին և կեանքը եռում էր նոցա մէջ. իսկ այժմ այդ միաբանութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ անզօր սուուերներ, մասամբ ազատ, մասամբ սոորագրեալ արքանեակներ ղեկավարող յիսուսեան աստղի. և Հռոմի դուռը որպէս զի նոր ոյժ առնէ և վերապահէ իրան եկեղեցու մենաւորութիւն, զրաւական միջոցներ և այլն անպատճառ պէտք է յենուի յիսուսեան կարգի վերայ՝ այսինքն ծառայէ նոքան և նոցա ձգտումներին։ Բայց յիսուսեան միաբանութիւն է մարմնացեալ մոնարխապաշտութիւն բռնակալութեան հետ միացած։ Իշխել մարդկանց վերայ պապերի միջնորդութեամբ, որ նոցա ծառան է դարձել, այդ է նոցա խնդիրը, նպատակը, հմտութեամբ իւրացրած ազուեսը։ Այստեղից է առաջ գալիս ձգտումն դարձնելու կրօնը մի մեքենայ sacrificio dellinteletto—զոհել միտքը, բանականութիւնը, որ նոքա այնպէս վառաբանում են. մարդել հոգին անպայման և կոյր հնազանդութեան մէջ և այլն։

Իսկ ինչ վիճակի մէջ է գտնուում այժմ՝ 1870 թ. Յուլիսի 18-ից յետոյ, Հռոմէական հասարակութեան մէջ գործը և ինչ կարելի է սպասել մօտիկ ապագայում, այդ Դուք կարող էք տեսնել նորանից, որ ամենահրեշաւոր բանը կատարուեցաւ, այնպիսի բան, որ հաղիւ թէ երբ և իցէ ծագած լինի աստուածաբանական վարդապետութեան մէջ չբարձրացնելով իւր դէմ ոչ մի ձայն—խօսքս Ալֆոնս Լիգուորի մասին է, որին հանդիսաւոր կերպով հրատարակեցին եկեղեցու ուսուցիչ (Doctor ecelesiae), հետևաբար դասեցին նորան Օգոստինոսի, Ամբրոսիոսի և ուրիշների շարքը,—այն մարդուն, որի շարադրութիւնները նորա սխալ բարոյականութեան, Մարիամի այլայլեալ պաշտամանն, և անդադար գործ դրած ամենակոպիտ կեղծիքների և առասպելների շնորհիւ կազմում են շտեմարան սխալանքների և մոլորութիւնների։

Ամբողջ եկեղեցական պատմութեան մէջ չեմ գտնում մի օրինակ նոյնքան զարհուրելի և շփոթ, որքան այս պատմութիւնը։

Եւ այդ մասին լռում են բոլորը։ Եւ կղերի յետագայ սերունդը բոլոր դպրոցներում պիտի թիւնաւորուի Լիգուորի այդ գրքերով։

Այդպիսի վիճակը, ի հարկէ, չի կարող երկարատև լինել. վաղ կամ ուշ, այսպէս թէ այնպէս յառաջ կըգայ ռէակցիա, բայց էրէ և ինչպէս, այդ ծածկուած է մեր տեսութիւնից։

Ձեր երրորդ հարցին՝ թէ «ի՞նչ խորհուրդ էք տալիս անելու»—պատասխանում եմ։ Հեռևեցէք Ձեր համոզմունքներին և մի խաբուիք միութիւն և անպայման հնազանդութիւն պահպանելու պատրուակից, որոնցով պաճուճուած են ամեն տեսակ սխալ և նոյն իսկ կրօնի ամենակոպիտ աղաւաղութիւն։

Այս թշուառ վիճակի մէջ մենք կարող ենք և պէտք է լինինք վկաներ Աստուծու և մարդիկների առաջ—մեր ճանաչած ճշմարտութեան կարող ենք և պէտք է տանք արժանի պատիւ։ Ընդհանուր անտարբերութիւնը, կղերի բթամիտ վարմունքը, որ միայն մտածում է իւր անձնական յարմարութեան վերայ—ահա թէ ինչ է որ թափում է մեր վերայ Վատիկանի թշուառութիւնը։ Որքան շատ լինին խոստովանողների և սխալ վարդապետութիւնից ու կոյր հնազանդութիւնից խոյս տուողների թիւը, այնչափ հաստատուն կըլինի բժշկուելու յոյսը։

Դրեցի շտապովի։

Բոլոր սրտով Ձեզ նուիրուած՝

Յ. ՓՈՆ ԴԵՈԼԼԻՆԳԵՐ։

ԺԶ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐ ՄԻ ՀԻՆ-ԿԱԹՈԼԻԿԻ ԴՈՐՏՄՈՒՆԴՈՒՄ։

Յունիսի 23-ին 1878 թ. [1]։

Յարգելի պարոն! Ուղարկածդ թերթի լուրերը իմ և ուսուցչապետ Ֆրիդրիկոսի մասին չարամիտ ստեր են։ Արդէն տասն և չորսերորդ անգամն է, որ անդրլեռնեան լրագիրները հաղորդում են իմ հնազանդութեան մասին, գուցէ թէ մի քանի անգամ ևս կրկնուի։

Ես չեմ անպատուի իմ ծերութիւնը Աստուծու և մարդիկների առաջ, այդ մասին վստահ կարող էք լինել։

Բարեկամական ողջոյն։

Ձեր անձնուէր՝

Յ. ՖՈՆ ԴԵՕԼԼԻՆԳԵՐ։

ԺԷ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐ—ՊՐՕՖԵՍՍՈՐ ՄԻԽԵԼԻՍ-ԻՆ։

1 Մայիսի 1879 թ. [1]։

. . . Որ Լևոն ԺԳ-ից չի կարելի սպասել փոքր ի շատէ նշանաւոր բարեփոխութիւն եկեղեցու կանոնների նկատմամբ, այդ ստոյգ դարձաւ ինձ համար այն օրից, երբ նա յայտարարեց կարդինալներին—առանց բացառութեան կրեատուրներ իւր նախորդի—որ ինքը ոչինչ չի կարող ձեռնարկել առանց նոցա խորհրդի և համաձայնութեան։ Որ նա դարձրեց կարդինալ Նիւմանին (Newman), որ իւր խելքով և գիտութեամբ բարձր է հռոմէական vulgus praelaticum, այդ բացատրւում է նորանով միայն, որ Հռոմում յայտնի չէին այդ մարդու իսկական հայեացքները։ Եթէ Նիւման գրած լինէր Ֆրանսերէն, Իտալերէն և Լատիներէն, ուրեմն նորա գրքերից շատերը կըլինէին խնդիկսի մէջ։ Մի քանի տարի շարունակ հետևել եմ պապականութեան ազդեցութեան բոլոր դարերում և ուղղութիւններում։ և գլխաւորապէս ու-

1) Deutscher Merkur 1878, երես 221։

1) Ibit. 1879, երես 158։

սումնասիրել եմ առանձին պետութիւնների և ազգային եկեղեցիների պատմութիւնը, թէ ինչպէս նոքա կազմակերպուեցան Հռոմի ազդեցութեան տակ։ Հետևանքն այս է. Հռոմի ազդեցութիւնը աւելի վտանգաւոր և աւերիչ է, քան ինչպէս կարծում էի մօտաւորապէս մինչև 1860 թուականը։ Գերմանիայի վերաբերմամբ այդ կարելի է նոյն իսկ ձեռքերով շօշափել, եթէ քննենք մեր հին կայսերութեան կործանման պատճառները։ Բոմանական երկրներում աւելի վատ...

ԺԸ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐ ԴՈԿՏՈՐ ՐՈԲԵՐՏ Յ. ՆԵՎԻՆԻՆ՝ ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՌՈՄՈՒՄ [1]։

4 Մայիսի 1879 թ.։

ՍԻՐԵԼԻ ՆԵՎԻՆ!

Ենթադրում եմ, որ դուք ունիք այնքան ազդեցութիւն՝ որ կըկարողանաք զետեղել մի փոքրիկ յօդուած կամ նկատողութիւն ազատամիտ թերթերից մէկի մէջ, որով, իմ կարծիքով, հերքած կըլինինք ամբողջ Եւրոպայում տարածուած սուտ լուրերը, որ իբր թէ մտադիր եմ եղել և արդէն հպատակել եմ Վատիկանի հրովարտակներին։

Ես մի այնպիսի բան չեմ գրել և կատարել, որով առիթ տայի այդպիսի լուրերին։ Մի քանի լրագիրների բերած հանգամանքները—հնարովի են։

Միայն սորանից երեք շաբաթ առաջ տպագրութեան յանձնեցի («Allgemeine Zeitung-ի մէջ 6, 7 և 8-ին Ապրիլի) իմ մի ճառը, որի մէջ պարզապէս յայտնել էի, որ նոքա, որոնց միտքը գիտնականօրէն զարգացած է, երբէք չեն հաշտուի Վատիկանի ժողովի հրովարտակների հետ։

Վերջին ինը տարուայ ընթացքում նուիրեցի ժամանակս գլխաւորապէս հետազօտութեան բոլոր այն հարցերի, որոնք մօտ

1) Այդ նամակը—որի անգղիական բնագիրը ստացել է Բէյշը Նեվինից—գրել է Դեօլլինգեր անգղիական լեզուով։ Բէյշը իւր հրատարակութեան մէջ զետեղել է այդ նամակի գերմանական թարգմանութիւնը։ Այդ թարգմանութիւնը աչքի առաջ ունէի և ես։ Ռ. Թարգմ.

առնչութիւն ունին ժողովների և պապերի պատմութեան. ես նորից անցայ, այսպէս ասած, ամբողջ եկեղեցական պատմութիւնը. եզրակացութիւն այս է, որ Վատիկանի հրովարտակների հիմունքների անճշտութիւնն անհերքելի է։ Երբ ինձանից պահանջում են երգուել, որ այդ որոշումները ճշմարիտ են, այդ ժամանակ զգում եմ մի այնպիսի տպաւորութիւն, որպիսին կըստանայի եթէ նոխպէին երգուել, որ երկու անգամ երկուս ոչ թէ չորս, այլ հինգ կանէ։

Խնդրում եմ Ձեզանից, սիրելի Նեվին, հաղորդեցէք Հռոմում կատարուած գործերի մասին։

Կը յարմարեցնէք գուցէ թէ այնպէս, որ կարելի լինի մի նըկատողութիւն զետեղել ամերիկական թերթերից մէկի մէջ։

Totus tuus (*ամբողջովին Ձեզ նուիրուած*)՝

Ց. ԴԵՕԼԼԻՆԳԵՐ։

Միւնխեն 4 Մայիսի 1871 թ.։

ԺԹ.

ՄԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԿԻՆ—ԴԵՕԼԼԻՆԳԵՐԻՆ։

15 և 28 փետրվարի 1880 թ.։

1880 թ. փետրվ. 15։

Յարգելի պարոն դոկտոր.

Ահա քանի տարի է որ սրտիս խորքից խնդրում եմ Աստուծուն, որ նա ծագէ Ձեր վերայ իւր աստուածային սիրոյ ճառագայթը, որպէսզի այդ երկնային լուսով կարողանաք տեսնել այն անդունդը, որի առաջ կանգնած էք, և որպէսզի այդպիսով նա ազատէ Ձեզ այդ կորստից. և որովհետև Ձերդ գերապատուութեան մասին միտքը ինձ հանգիստ չի տալիս, ուստի վրձռում եմ, որքան էլ յանդուգն թուի Ձեզ այս գործը, խնդրել Ձեզ, որ Դուք էլ աշխատիք նպաստել այդ աստուածային բարութեան գալուն։ Ձերդ գերապատուութեան սուրբ միտքը այն-

քան խոր է թափանցել մեր սրբազան կրօնի վարդապետութիւնների մէջ, որ չէ կարող չիմանալ, թէ այդքան բարերարուած, բնութիւնից օժտուած և լուսաւորուած քահանան, եթէ գլուխ է բարձրացնում եկեղեցու հեղինակութեան դէմ և մեռնում է հակառակ մնալով նորան, շատ աւելի սարսափելի պատիժ կըստանայ հանդերձեալում, քան ուրիշները, որոնք աւելի քիչ գիտութիւն, շնորհք ունին, հեռւապէս և աւելի քիչ պատասխանատուութիւն։ Ես կատարելապէս սարսափում եմ և անարտայայտելի կարեկցութիւն եմ զգում, երբ մտածում եմ, թէ ինչ սարսափելի ապագայ է սպասում Ձեզ, եթէ որ Դուք այժմ էլ՝ այս մեռասաներորդ ժամին չդառնաք։ Ո՜հ, Ձերդ գերապատուութիւն, ես կըցանկայի ծնկաչոք աղաչել Ձեզ, վերջապէս խղճացէք Ձեր անբաղդ հոգուն, ազատեցէք նորան այս ամենասարսափելի դըժբաղդութիւնից։ Դուք այդ գիտէք և հաւատում էք, ապա ուրեմն ի՞նչը կարող է Ձեզ արգելել դառնալու. արդեօք այն մտածմո՞ւնքը, թէ ի՞նչ կասեն մի քանի մարդիկ. արդեօք հպարտութի՞ւնը, որ չի ուզում խոստովանել ոչ մի մոլորութիւն։ Ո՜հ այս բոլորը ի՞նչ է նշանակում։ Միթէ կարելի է տատանուել և յապաղել, երբ որ կշեռքի մի թաթի վերայ կայ յաւիտենականութիւն՝ լի աննկարագրելի տանջանքներով (թէև այս թաթի վերայ կայ մարդկային կարճատև պատուի զառեկը, իսկ միւսում՝ իբրև վարձատրութիւն հերոսական վճռականութեան համար՝ յաւիտենական, անսահման երանութիւն և Աստուծոյ տեսութիւն)։

Այն քիչ անձինք, որոնք գուցէ համարձակութիւն ունենան Ձեր սոյն քայլը դատապարտելու, չեն կարող որ և է ժամանակ առնել իրանց վերայ Ձեր մեղքը Աստուծու առաջ և Ձեր տեղ պատիժ կրել։ Ընդհակառակը շատ կաթոլիկներ՝ շատ աւելի սրբեր և հրեշտակներ երկնքում երանական ուրախութեամբ և ցնծութեամբ կընդունեն Ձեր դարձը և կըզարմանան Ձեր հերոսական անձնազոհութեան և խոնարհութեան վերայ. նոքա ամենը իրանց աղօթքներով կուղեկցեն և կօգնեն Ձեզ այն ժամին, որից ոչ ոք զերծ չէ։ Մի ժամանակ Դուք, Ձերդ գերապատուութիւն, յաւիտենական պերճախօսութեամբ նկարագրեցիք Ս. Ֆրան-

ցիսկոսի մահը և այդ նկարագրութիւնը վերջացրիք հետևեալ խօսքերով. «Տայ Աստուած մեզ բոլորիս էլ այդպիսի վախճան»: Նա կըլինի Ձեզ մօտ Ձեր վերջին ժամին և կըզօրացնէ ու կըմխիթարէ Ձեզ, եթէ Դուք այժմ ևս եկեղեցու խոնարհ որդի դառնալու արիութիւն ունենաք:

Ո՜հ, Ձերդ գերապատուութիւն, գոնէ մի անգամ էլ բաց արէք Ձեր սիրտը Աստուծու ողորմութեան շնորհի առաջ և մի սպասէք, ժամանակն անցողք է: Ձեր աղօթքների մէջ դիմեցէք Ս. Ֆրանցիսկոսին:

Մնամ Ձերդ գերապատուութեան ամենաջերմ ցանկութեամբ լցուած և բարեացակամ

***

1880 թ. 28-ն փետրվարի.

Գերապատիւ Տէր! Ձեմ կարող չկրկնել, Ձերդ գերապատուութիւն, այսօր, թէ որքան շատ և ջերմեռանդ աղօթում ենք ես և բարի կաթոլիկները Աստուծուն, որ նա առատութեամբ թափէ Ձեր վերայ լոյսի և շնորհաց անյաղթելի հոսանքը, որպէսզի Դուք յաղթուելով նորանից և աստուածային սիրուց ստիպուած ընկնէք փրկչի ոտքերը—ո՜չ՝ նորա Ձեզ համար միշտ բաց գիրկը, որպէսզի սուզուէք նորա աստուածային սրտի մէջ և այնտեղ հանգիստ գտնէք. այնտեղ է խաղաղութիւնն ու երանութիւնը, որ Դուք ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չէք վայելի՝ եթէ չդառնաք: Ո՜հ, Ձերդ գերապատուութիւն, ի՞նչ բան է հարիւր կամ իննսուն տարին յաւիտենականութեան առաջ: Ի՞նչ նշանակութիւն ունի մարդկանց առաջ ունեցած պատիւը, երբ հարկաւոր է, որ Դուք հրաժարուիք այդ պատուից, որպէսզի Աստուծու արդարութիւնից—աւելին ասեմ՝ նորա պատժից ազատ մնաք: Արդեօք որ և է նշանակութիւն ունի այն անցեալը, որի հետ պէտք է խզել բոլոր կապերը, եթէ դորանով մենք կարող ենք ձեռք բերել երանելի աստուածատեսութիւն: Թոյլ մի տաք որ մարդկային շարժառիթները խանգարեն Ձեզ անելու այն, որով Դուք կըդարձնէք Ձեր վերայ ամբողջ կաթոլիկական աշխարհի

ուրախալի զարմացումը և հանդիսաձեալում ձեռք կըբերէք յաւիտենական երանութիւն և անչափ վարձատրութիւն: Քանի դեռ ժամանակ կայ մտածեցէք այդ մասին: Տեսէք ի՞նչ սիրալիր կերպով սպասում է Ձեզ Փրկիչը, ի՞նչպէս նա՝ չընայելով Ձեր յամառելուն, աւելացնում է տարիներիդ վերայ տարիներ, կրկին ու կրկին իւր շնորհով բաղխում է Ձեր սիրտը: Մի ստիպէք նորան աւելի սպասելու. պատասխանեցէք, վերջապէս, նորա այն մեծ սիրուն անկեղծ գարձով և ազատեցէք Ձեզ յաւիտենական մահից: Ամենաանկեղծ ցանկութիւնս և աղօթքս է այսօր Շնորհաց Մօրը և այն հրեշտականման սրբին, որին Դուք, Ձերդ գերապատուութիւն, առաջ այնպէս բարձր էիք դասում և որի փառքը այնպէս պերճախօս կերպով յայտնում էիք, որ Դուք զղջման մէջ գտնէք լոյս և այժ այս դարձի համար և այդպիսով երկրային երկար կեանքից յետոյ ապահով լինէք, որ յաւիտեանս կըտիրէք Աստուծուն:

Մնամ այս ցանկութեամբ և այս աղօթքով Ձերդ գերապատուութեան անձնուէր՝

***

Ի.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԿՆՈՋ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ:

(1880)

. . . Ամենից առաջ յայտնում եմ Ձեզ իմ անկեղծ և խոր զգացած շնորհակալութիւնն այն բանի համար, որ Դուք հոգս էք քաշում իմ հոգու փրկութեան մասին, որ արտայայտուած էր Ձեր ինձ գրած բարեհաճ նամակի մէջ:

Ինչ վերաբերում է գործին՝ տղամարդու հետ խօսելիս կըհիմնուէի այն իրողութիւնների և հիմունքների վերայ, որ ես հրապարակեցի 1871 թ. երբ պահանջում էին, որ հնազանդուիմ Վատիկանի հրովարտակներին և որոնցից ոչ մի իրողութիւն և ոչ մի հիմունք մինչև այժմ չեն հերքուած և չեն էլ կարող որ

և է ժամանակ հերքուել. ես այդ բանում աւելի խոր համոզուած եմ այժմ, քան որ և է այլ ժամանակ։ Բայց Ձերդ…. անկասկած երբէք տեսած չէք լինի այդ շարադրութիւնը և կամ եթէ տեսած էլ լինիք՝ գոնէ ուշադրութիւն դարձրած չէք լինի։ Անկասկած Ձեզ ասել են, որ այն ամենը, ինչ որ ես հաստատումեմ՝ սխալ է, և Դուք դորանով հանգստացել էք. ես շատ բնական եմ համարում այդ։ Այսուամենայնիւ համարձակւումեմ Ձեր ուշադրութիւնը դարձնել մի քանի հանգամանքների վերայ, որոնք գուցէ մի քիչ մեղմացնեն Ձեր դատողութիւնը իմ դրութեան և վարմունքիս մասին։

Ես այժմ 81 տարեկան եմ, ամբողջ 47 տարի աստուածաբանութեան հրապարակական ուսուցիչ եմ եղած և այս երկար ժամանակամիջոցում ոչ մի ժամանակ և ոչ մի եկեղեցական—մոտիկ թէ հեռու—իշխանութիւնից ոչ մի ամբաստանութիւն չէ հասել ականջիս, ոչ էլ հրաւէր պատասխան տալու կամ մի որ և է բան աւելի լաւ բացատրելու համար։ Պիոս Թ-ի և նորա ժողովի հաստատած հաւատի նոր անդամները ես չեմ քարոզել Էքքէ+։ Պատանեկութեանս ժամանակ, երբ ուսանում էի Բամբերգում և Վիւրցբերգում՝ դոքա աստուածաբանական կարծիքներ էին, շատերն էլ աւելացնում էին՝ թոյլ հիմունքներով աստուածաբանական կարծիքներ։ Ես, որ ամբողջ կէս դար ամենայն օր զբաղւում էի այս նիւթերով և սոցա վերաբերեալ հարցերով, աւելի և աւելի համոզւում էի, որ այդ վարդապետութիւններն ու ոճնձգութիւնները ոչ միայն սուտ են և Ս. Գրքի, պատմութեան և աւանդութեան մէջ հիմք չունին, այլ և եկեղեցու, պետութեան և համայնքի վերայ վատ ազդեցութիւն ունեցան, յառաջ քան նոքա հաւատի անդամի այժ ստացան։ Բայց վերայ հասաւ 1870 օրհասական թուականը։ Եթէ ես հնազանդէի նոր ուսմունքներին ենթարկուելու պահանջին, այն ժամանակ իմ անունս կրհռչակուէր իբրև սուտ վարդապետ, և ոչ միայն իմը, այլ և իմ հանգուցեալ ուսուցիչների և բազմաթիւ ընկերների անունները, որոնք նոյն դրութեան մէջ են եղել, ինչ վիճակի մէջ որ եմ այժմ։ Խղուր էի խնդրում, որ ինձ թողնեն այն հաւատի

և դաւանութեան մէջ, որոնց մինչև այժմ հաւատարիմ եմ մնացել և ոչ մի յանդիմանութիւն կամ հակառակութիւն չեմ ստացել։ Դեռ երէկ ես ուղղափառ էի, իսկ այսօր երևումէ, որ ես մերժուելու արժանի հերետիկոս եմ, ոչ թէ այն պատճառով, որ ես փոխել եմ վարդապետութիւնս, այլ որովհետև մի քանիսը յարմար են դատել փոփոխութիւններ անել և կարծիքները հաւատի անդամ դարձնել։

Ես պէտք է իմ բանակութիւնը զոհեմ, ինչպէս ասումէ եզուիտների սիրելի ասացուածքը (sacrificio dell intelletto)։ Դուք, Ձերդ…, էլ նոյն էք ցանկանում, որ անեմ։ Բայց եթէ ես կատարէի այդ բանը այնպիսի մի հարցում, որ պատմական տեսակէտից բոլորովին պարզ և անտարակոյս է՝ այն ժամանակ պէտք է ուրանայի ամեն տեսակ պատմական ճշմարտութիւն և համոզմունք. այն ժամանակ ես պէտք է մոռանայի, որ ամբողջ կեանքիս ընթացքում խաբեբայութեան և ցնորքների աշխարհում եմ գտնուել և բոլորովին անընդունակ եմ եղել պատմական հարցերում ճշմարտութիւնը զանազանել առասպելից և ստութիւնից։ Այն ժամանակ ես կրկորցնէի իմ հիմունքները, նոյնպէս և կրոնական հայեացքների վերաբերմամբ, որովհետև դարձեալ պատմական իրողութիւններն են, որ կազմումեն մեր կրոնի հիմունքները։ Նախ և առաջ ես համոզուած եմ, որ աւետարանական և առաքելական պատմութեան գլխաւոր դէպքերը իրենց էութեամբ ճշմարիտ և անձեռնմխելի են և իմ այս համոզմունքը իմ վարդապետական կոչման և կեանքիս պարապմունքների համեմատ պէտք է լինի գիտնական՝ այսինքն իմ սեպհական մտաւոր աշխատանքով ձեռք բերած և մտագիւր հետազօտութեամբ ամրապընդած, որովհետև ամեն բան, ինչ որ եկեղեցու և նորա հերձնակութեան վերաբերմամբ հաստատւումէ, այն պատմական իրողութիւններ է ենթադրում։

Ի՞նչ կասէիք արդեօք, Ձերդ…, եթէ պապի անունով հրամայէին Ձեզ, որ Դուք հաւատաք և դաւանէք՝ թէ Նապոլէօն ա. Բոնապարտի գոյութիւն ու ամբողջ պատմութիւնը առասպել է և կեղծիք։ Եւ ահա ինչ անկեղծ և անխախտելի համոզմամբ

Դուք հաւատում էք Նապոլէօնի գոյութեան և նորա կեանքի գլխաւոր իրողութիւններին, նոյնպիսի համոզմամբ ես գիտեմ, որ Վատիկանի հրովարտակները ճշմարիտ չեն։ Այդ նշանակում է՝ որ ես գիտեմ և այն էլ ոչ միջնորդաբար, այլ ամբողջ կեանքումս բոլոր ալքիւրներն ուշի ուշով ուսումնասիրած լինելով։ Գիտեմ, որ պապի անսխալականութեան և բացարձակ իշխանութեան երկու դրութիւնները, որոնք քրիստոնէական աշխարհում միշտ եղել են իբր թէ հաւատի և գործնականութեան առարկաներ՝ ճիշտ չեն։ Միայն խորամանկութեամբ, բռնութեամբ, կաշառքով, խաբէութեամբ և կեղծիքով կարողացան կամաց կամաց հին վարդապետութիւնը ասպարէզից հեռացնել՝ չնայելով նորա հազարաւոր հիմունքներին, և յաղթութիւն շնորհել նորին, որ հնարուած է կրօնաւորների շահերի համեմատ։ Ի հարկէ դորա համար պէտք եղաւ մի քանի դար։

Ինձ հաւատացնում են, որ Ձերդ... լաւ մտաւոր կրթութիւն ունէք, հետևապէս ծանօթ էք, անկասկած, Ֆրանսիական դասական գրականութեան և այնպիսի մարդիկների, ինչպիսիք են Բոսուէտ և Ֆենելոն. գիտէք նոյնպէս, որ այս մարդիկ և նոցա հետ բոլոր եպիսկոպոսներն ու աստուածաբանները և առհասարակ ամբողջ Ֆրանսիական կղերը մինչև յեղափոխութիւն հաւատում և ուսուցանում էին ըստ գալլիկականի։ Այդ նշանակում է, որ նոքա մերժում էին Վատիկանի ժողովի հաւատի հէնց այս երկու անդամները։ Այսուամենայնիւ պապերը միշտ պահում էին, նոցա իրանց պաշտօնների մէջ, որով նոքա միշտ վկայում էին, թէ նոքա կատարեալ ուղղափառ են։ Եթէ որ իմ եպիսկոպոսը կամենար յայտարարել՝ թէ ես ազատում եմ քեզ բանադրանքից այն պայմանով, որ Դու պապի վերաբերմամբ դաւանես այնպէս, ինչպէս ուսուցանում էին Բոսուէտն ու Ֆէնելոն և նոցա հետ հարիւրաւոր ամենաբարեպաշտ և ամենագիտնական եպիսկոպոսներ՝ արդեօք ո՞վ աւելի յօժարութեամբ կընդունէր այս պայմանը, քան ես։ Բայց այդ բանի փոխարէն ինձանից պահանջում են, որ ես երդմամբ հաստատեմ Վատիկանի որոշումները, հետևապէս, այն ինչ որ ինձ համար ակնյայտնի ուխ-

տադրժութիւն է, այն էլ կրկնակի ուխտադրժութիւն, որովհետև դորանով ես նախ պէտք է դրժէի այն երդումը, որ պահանջել է ինձանից եկեղեցին պաշտօնս ստանձնելու օրից, այն երդումը, որով ես Ս. Գիրքը պիտի մեկնեմ միշտ ս. հայրերի մեկնութեան համեմատ և երկրորդ՝ ինձնից պահանջած այս նոր երդմամբ՝ բարոյապէս պիտի ոչնչանամ։ Որովհետև այս երդմամբ կըհաստատեմ որ սխալ եմ վարդապետել ամբողջ կեանքումս, որ եկեղեցական պատմութիւնը, ս. հայրերին և Ս. Գիրքը սխալ եմ հասկացել և մեկնել։ Եւ ի՞նչ հետևանքի կըհասնէի դորանով։ Նախ՝ որ իմ կեանքիս մնացորդում ոչ մի հանգիստ ժամ չէի ունենայ և ապա այն, որ կըփոխուէի միւս աշխարհ իբրև ստախօս և այն էլ ուխտադրժութեան սարսափելի բեռնով ծանրաբեռնուած...

ԻԱ.

ՀԵՖԵԼԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԵՕԼԻՆԴԵՐԻՆ։

10-ն Յունիսի 1886 թ.։

Գերապատիւ Տէր Stiftsprobst.

Շատ քչերին է շնորհւում այդպիսի խոր ծերութիւն միացած մտքի այսպիսի թարմութեան հետ, ինչպէս Ձերն է, գերապատիւ Տէր Stiftsprobst։ Թէև ես տասը տարով փոքր եմ Ձեզանից, սակայն արդէն զգում եմ ծերութեան անկարութիւնը և այդ պատճառով տեղապահս նշանակելու առաջին քայլն արել եմ արդէն։ Բայց նախ քան կեանքիս վախճանը, ցանկանում էի մի խօսք ասել Ձերդ ողորմածութեան և գերապատուութեան—մի խօսք, որ ներշնչել է ինձ դէպի մեծ գիտնականդ ունեցած անսպառ յարգանքը և նոյնպէս Ձեր դէպի ինձ ունեցած շնորհի երախտագիտական յիշողութիւնը։ Եւ այդ խօսքը մի անկեղծ խնդիր է. մոռացէք, Բարձրապատիւ Տէր, բոլոր այն վիրաւորանքները, որ հասցրին Ձեր ժամանակաւոր թշնամիները, և ի մեծ ուրախութիւն մարդկանց և հրեշտակների՝ հաշտուեցէք այն եկեղեցու հետ, որ Դուք այդքան երկար և փառաւոր կերպով պաշտ-

պանեցիք։ Առանց հեռաւոր դատողութիւնների մի կողմը մի գընէք խնդիրս, որպէս ուղարկած առանց իրաւունքի. նա բղխում է երախտագէտ և անկեղծ սրտից և ես գիտեմ Դուք ևս գիտէք, որ հազարաւոր մարդիկ ի ներքուստ կըմիանան այս աղերսանքին։ Այս հաշտութեամբ պսակեցէք Ձեր օրհնած կեանքի վառաւոր ասպարէզը։

Մնամ Ձերդ գերապատուութեան և ողորմածութեան խորին յարգանքով անձնուէր՝

Դ.-ր Հեգելէ.

ԻԲ.[1])

ԱՆՏՈՆԻՈՍ ՖՈՆ ՇՏԷՅԹԵԼԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԵՈԼԼԻՆԳԵՐԻՆ։

1878, 1879 և 1886 թթ.

Միւնխեն 1878 թ. Դեկտ. 12-ին։

Գերապատիւ և յարգելի Տէր Stiftsprobst.

Նորերումս, ես իմ ընկերներիս յիշատակ տալու համար, նորից հրատարակեցի այն յորդորական թուղթը, որ ես հովուական պաշտօնս սանձնելիս ուղղել էի Միւխենի և Ֆրէյզինգենի արքեպիսկոպոսութեան ժողովրդին և կղերին։ Գերապատիւ Տէր Stiftsprobst, շատ եմ ցանկանում տեսնել այդ ընծան իբրև յիշատակ և Ձեր ձեռքում, որ իմ պատանեկութեան անմոռանալի ուսուցիչն էիք և դէպի որը ես սրտումս միշտ պահել եմ նախկին յարգանքն ու երախտագիտութիւնը։ Բարեհաճեցէք ընդունել հօտիս ուղղած առաջին խօսքերս և թոյլ տուէք, որ ես համոզուեմ թէ կարեկցութեամբ և ընկերական տրամադրութեամբ կըմնամ Ձերդ գերապատուութեան անձնուէր՝

Միւնխենի և Ֆրէյզինգենի արքեպիսկոպոս՝

ԱՆՏՈՆԻՈՍ.

---

1) Արքեպիսկոպոս Ֆոն Շտէյթելէ-ի երեք նամակներին, տպուած են 22 համարում Դեոլլինգեր պատասխանեց մի նամակով. յառաջաբանի մէջ այդ երեք նամակները համարել եմ մէկ։ Ծ. Թարգ.

Միւնխեն 1879 թ. փետր. 27-ին։

Գերապատիւ և յարգելի Տէր Stiftsprobst.

Վաղը դուք ծանուցանում էք Ձեր ծննդեան 80-երորդ տարեդարձը. անկեղծութեամբ շնորհաւորում եմ։ Վաղը հոգով կըլինեմ Ձեզ մօտ աշակերտի երախտագիտութեամբ դէպի իւր յարգելի ուսուցիչը. աշակերտի յարգանքով դէպի ամենահարուստ և ամենահոչակուած գիտնականը, վշտալի հովուի սիրով դէպի իւր եղբայրակիցը, որի հետ դեռ չէ միացել այն քանի նկատմամբ, որ ամենից բարձր և նշանաւոր է։ Այսպիսի տրամադրութեամբ մաղթում եմ Ձեզ, յարգելի Stiftsprobst երկնքի ամենառատ օրհնութիւնը վաղուայ և Ձեր կեանքի հետևեալ օրերի համար և թող առատաձային բարութիւնը շնորհէ Ձեզ երկար կեանք։ Դուք իմ ասելուց առաջ զգում էք արդէն թէ աստուածային ուրիշ ինչ պարգևի մասին կարող եմ աւելի անկեղծութեամբ աղօթել Ձեզ համար, եթէ ոչ այն բանի, որ նորա լոյսն ու գաւազանը վերադարձնեն ձեզ այն եկեղեցու հետ միաւորուելու, որի գլուխը ցաւելով Ձեզ վերայ, ինչպէս ես, կըցանկար այնքան յօժարութեամբ հաշտութեան ձեռք մեկնել Ձեզ։ Թող Աստուծու բարութիւնը շնորհէ այդ բոլորին, նախ քան օրը երեկոյ կըգաւնայ և կատարեալ մութը կըկոխէ, որով անչափ կուրախանան ինձպէս անհամբերութեամբ սպասող հազարաւոր մարդիկ, և կըմխիթարուի ս. եկեղեցին, որից անջատուած լինելով՝ հոգին ի հարկէ ոչ հանգստութիւն կարող է գտնել և ոչ խաղաղութիւն։

Այն սիրով և այն հոգատարութեամբ, որոց վկան եղաւ 21 Յունուարի երեկոն՝ կամ մնամ յարգելի Տէր Stiftsprobst Ձեր անձնուէր՝

ԱՆՏՈՆԻՈՍ։

Միւնխենի և Ֆրէյզինգենի արքեպիսկոպոս։

Մինխեն 1886 թ. Յուլիս 30.

Գերապատիւ և յարգելի Տէր Stifstprobst.

Շատ քիչ օրեր են պատահում որ ես չմոռանամ Ձեր մասին առաջուայ սիրով և Ձեր փրկութեան և բարիքի հոգսն ու աղօթքը չշարժեն իմ սիրտը։ Այսօրը — Ձեր տօնի նախատօնակը — առիթ է ներկայացնում վկայելու իմ առաջներս։ Ես էլ տօնակցում եմ Ձեզ, բայց դժբաղդաբար չեմ կարող մնքուր ուրախութեամբ անել այդ։ Ուրախութիւնս պղտորւում է, երբ որ մտածում եմ թէ ես չեմ կարող եղբայրական ձեռք մեկնել քեզ միևնոյն ձգտման և կուռի համար, որ պէտք է մղենք միասին Քրիստոսի և նորա արքայութեան համար։ Երբ մտածում եմ որ պաշտելի ուսուցիչն այստեղ է կանգնած և երախտագէտ աշակերտը՝ այնտեղ, երբ մտածում եմ որ եպիսկոպոսը ոտիպուած է իրանից հեռու տեսնել իրան յանձնուածներից հէնց նորան, ում որ նա ամենայն սիրով և ջերմ սրտով կրցանկար տեսնել աւելի մօտիկ։ Ահա հէնց այս հոգեկան տրամադրութիւնը դրդում է Ձեր բարեացակամ եպիսկոպոսին՝ բարեմաղթելու իւր թանկագին եղբայրակցին, հրաւիրելու և խնդրելու նորան, որ հաշտուի հռոմէական կաթոլիկ եկեղեցու հետ, որի համար նա մի ժամանակ բարեյաջող կերպով մարտնչում էր թէ խօսքով, թէ գրով և թէ գործով։ Տայ Աստուած, որ նորից միանաք եկեղեցու հետ, որի մէջ մի ժամանակ Դուք Ձեզ բաղդաւոր էիք զգում։

Վերջին ժամանակներս, յարգելի Տէր Stiftsprobst, Դուք այնպիսի բարեկամական սէր և բարեացակամ տրամադրութիւն ցոյց տուիք, որ ես համարձակ և համոզուած ուղղում եմ Ձեզ այս հրաւէրը։ Աստուած համարեա անսովոր կերպով երկարացրել է Ձեր կեանքի օրերը և պարգևել է Ձեզ թէ հոգևոր և թէ մարմնաւոր ոյժ։ Բայց ո՞վ գիտէ թէ այլ ևս որքան ժամանակ բաց կըմնայ Ձեր առաջ դէպի եկեղեցին վերադառնալու ժամանակամիջոցը։ Իմ տարիքս էլ բաւականին շատ է։ Թող Աստուած պարգևէ իմ հովուական իշխանութեան ժամանակ այն բարեբաստ

օրը, երբ ես կըկարողանամ բերել Ձեզ դարձեալ Աստուծու եկեղեցին և նորա բարձրագոյն հովուի մօտ։ Այդ կըլինէր միլիոնաւոր հաւատացեալների համար մեծ տօն, հրեշտակների համար մեծ ուրախութիւն և Ձեր սեպհական փրկութեան գրաւական։

Աղերսելով Աստուծուն, որ պարգևէ այդ երջանիկ օրը, մնամ բոլոր սիրով և կարեկցութեամբ Ձեր ճշմարիտ անձնուէր՝

ԱՆՏՈՆԻՈՍ.

Մինխենի և Գրէյզինգենի արքեպիսկոպոս։

ԻԳ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖՈՆ ՇՏԷՅԽԵԼԼԻՆ.

1887 Մարտի 1.

Ձերդ Գերազանցութիւն։

Երկար — Դուք կասէիք չափազանց երկար — ժամանակ յապաղում էի կատարել իմ նախկին [1]) նամակում տուած խոստումն։

Մի քանի շաբաթ շարունակ մտածում էի, թէ ինչպէս ընդարձակութեամբ հաղորդեմ Ձերդ գերազանցութեան այն նշանաւոր հիմունքները, որոնց պատճառով մինչև այժմ գտնւում եմ այս դրութեան մէջ։ Այս նպատակին վերաբերեալ շատ բան արդէն գրել եմ, սակայն հետզհետէ համոզւում էի, որ այդ նիւթը իւր նշանակութեամբ և ամբողջութեամբ մի մեծ գիրք կամ տետրակ է դառնալու. և ես չեմ կարող, գերապատիւ Տէր, խլել Ձեր թանկագին ժամանակը նորա ընթերցանութեան համար, այդ պատճառով բաւականանում եմ միայն մի քանի իրողութիւններ յիշատակելով, որպէսզի կարողանամ Ձերդ գերազանցութեան իմ իսկական տեսակէտի և այժմեան հոգեկան դրութեան մասին հաշիւ ներկայացնել։

---

1) Դեօլլինգերի այդ նամակը չէ գտնուած։

Դեպ՝ այն անաթեմայի մէջ, որ այսպէսի ժողովի կապիդուլը Ձեր նախորդի անունով հրամայեց յայտարարել իմ դէմ՝ ես այժմէ կարող եմ տեսնել միմիայն բռնութիւն և անարդարութիւն։ Չէ՞ որ ես ասպարէզ դուրս եկայ այն բանի համար, որ ինձ սովորեցնէին, որպէսզի հրապարակաւ ինձ հերքեն։ Եւ եթէ ես միևնոյն ժամանակ խնդրեցի, որ ինձ էլ թոյլ տրուի խօսել, որ ուշադրութեան առնուին իմ տարակոյսները, այդ խօ ինքն ըստ ինքեան ենթադրումէր և բոլորովին կը համապատասխանէր եկեղեցական գործնականութեան։ Չէ՞ որ արքեպիսկոպոսի խորհրդականները համոզուած էին, որ կը տանեն յաղթութիւնը։ Իմ բոլոր ցուցումների սխալ լինելը նոցա աչքում պարզ էր, ինչպէս արեգակ։ Հետևապէս նոքա համոզուած էին, որ գործի քննութիւնը կարող էր վերջանալ միմիայն իմ հրապարակական պարտութեամբ և խայտառակութեամբ և ինձ կը մնար միմիայն շնորհակալութեամբ ու խոնարհութեամբ ընդունել առաջարկած վարդապետութիւնը և հնազանդել։ Հետևապէս իմ կողմից չէ եղել Pertinacia (յամառութիւն) և Դուք, Ձերդ Գերազանցութիւն, գիտէք, որ ուր այդ բանը չկայ՝ այնտեղ վարդապետութեան տարբերութեան պատճառով չի կարելի բանադրել և այդ բանադրանքն անզօր կը լինի։ Թէ ինչպէս վարուեցան ինձ հետ, դորան օրինակը վէ+ կարող գտնել պապա-ընկան մէջ։ Դեռ ոչ մի ժամանակ չէ պատահել, որ մի ծերունու, որ 45 ամեայ վարդապետութեան ընթացքում ոչ մի ժամանակ չէ ստացել գոնէ որ և է նկատողութիւն կամ անհաւանութիւն, որի ուղղափառութիւնը ոչ մի ժամանակ գոնէ մի քիչ հաստատ կասկածի տակ չէ ընկել, որ այդպիսի ծերունուն, առանց նորան լսելու և առանց մտածելու, սիրելի ձևով սատանային մատնէին։ Դորանից աւելի. հոգևոր վարչութիւնից իմ ստացած թղթերի մէջ ինձ յայտնումեն, որ ես ենթակայ եմ այն հետևանքներին, որոնց եկեղեցական օրէնքը միացրել է բանադրանքի հետ։ Իսկ եկեղեցական օրէնքը բանադրանքի վերայ նայումէ ոչ որպէս մահուան դատավճիռ միայն հոգեկան կեանքի, այլ և նորա մարմինը ենթարկումէ ամեն մի նախանձախնդրի սպանիչ հարուա-

ծին։ Որովհետև Ուրբանոս Բ. պապի հրովարտակը, որ ընդունուած է ընդհանուր եկեղեցական դասագրքի և օրինագրքի մէջ, այսպէս է ասում. «ինչպէս որ Հռոմի եկեղեցու կարգադրութիւնից սովորել ես, բանադրուածների սպանիչների վերայ պարտականութիւն դիր, որ նոքա իրանց նպատակի համապատասխան բաւականութիւն ստանան։ Որովհետև մենք նոցա մարդասպան չենք համարում, որոնք որ նախանձախնդրութեամբ վառուելով կաթոլիկական մայր եկեղեցուց մերժուածների դէմ՝ նոցանից մի քանիսին սպանեն։ Բայց որպէս զի նոյն մայր եկեղեցու կարգապահութիւնը (дисциплина) մնայ, դիր նոցա վրայ համապատասխան ապաշխարութիւն, որով նոքա կը կարողանան մեղմացնել իրանց դէմ ուղղած Աստուծու անարատ աչքերը, եթէ նոքա, ըստ մարդկային բնութեան, յիշեալ գործողութեան ժամանակ ընկնեն որ և է անմաքուր բանի մէջ» 1)։ Նոյնպէս Տուրբեկրեմատա կարդինալը [Turrecremata], ինչպես յայտնի է, պապի անսխալականութեան ուսման գլխաւոր հիմնադիրն է, յաջորդաբար յայտարարումէ սորա վերաբերեալ վճիռը՝ թէ, «եթէ մէկը ճշմարիտ նախանձախնդրութեամբ սպանել է բանադրուածին, այն ժամանակ nollam meretur poenitentiam», որ գտնը-ւումէ Գրացիանոսի Excommunicatorum-ի Causa 23 quaest. 5, c, 47. . . .

Այդպիսի բաներ են բերել իմ գլխին այն մարդիկ, որոնց ղեկավարումէր Պ. Ֆոն Շերրը, որ անկախ մարդ չէ. այդ մարդիկ իմ աշակերտներն են եղել։

Ի՞նչ յանցանք եմ գործել, որ ինձ ամենածանր պատիժ տուին, այնպիսի պատիժ, որ եկեղեցական դատաստանի տեսակէտից մահուան պատժից աւելի ծանր է։

Ես հրաժարեցայ ընդունել մի ժողով, որին, բայի եպիսկոպոսների թուից, պակասումէին համարեա բոլոր պայմանները, որ պահանջումէ աստուածաբանութիւնը նորա օրինականութեան համար. մի ժողով, որ ինչպէս ապացուցուած է, աղատ

1) Տես Գ. գրքի 365 երես։

չէր, չունէր հիմնաւոր հեռադիտութիւն և իսկական աւանդութեան ոչ մի բացատրութիւն. մի ժողով, որի միմիայն անօրինակ գործադարութիւնը արդէն գուշակում էր եպիսկոպոսների սարկանալը։

Ֆոն Շերը արքեպիսկոպոսը իւր դարձի առաջին ժամանակներում անկեղծաբար հաղորդեց ինձ շատ իրողութիւններ, որոնք այդ բանի վերաբերմամբ այլ և այս ոչ մի կասկած չթողին սրրտումս։ Դորա վերայ աւելացան միւս եպիսկոպոսների թէ բանաւոր և թէ գրաւոր յայտարարութիւնները, որոնք նոյն իմաստ ունէին։ Պարոն Ֆոն Շուլտէի նոր լոյս տեսած "Der Altkatkolicigmus„ շարադրութեան մէջ այդ տեսակ եպիսկոպոսական նամակների և վկայութիւնների առատ պաշար կայ։ Կարելի՞ է արդեօք այս բազմաթիւ ամենածանրակշիռ ձայների դէմ մի որ և է լաւ բան ասել։ Դուք, Ձերդ Գերազանցութիւն, անկասկած չէք անուանի եկեղեցու սատիսներ և զրպարտիչներ այն պատուելի ընկերներից, որոնցից ոմանք դեռ կենդանի են։ Այսպիսի լուրերը և ցուցումները տեսնելով, ամեն մարդ կըցանկար պահել իւր գլուխը եկեղեցու այս անջնջելի խայտառակութեան վրայի և տխրութեան մէջ։ Վատիկանի ժողովում կատարուածը շատ աւելի վատ էր, քան Եփեսոսի 449-ի ժողովում։ Որովհետև խորամանկութիւն ու խաբէութիւնը, հեգեկան ոտիպմունք, ազատ ժողովի անունով քօղարկուած սիստեմատիկական ճնշումը — այս բոլորն աւելի վատ է քան մարմնաւոր հարուածներն ու վայրի աղաղակներն, ինչպէս Եփեսոսում։ Եւ այժմ նոյն իսկ վարդապետութիւնը, այս առաքելական ժամանակից 18 դար յետոյ կազմած հաւատի նոր անգամները, տրւում են աշխարհին իբրև հնագոյն ճշմարտութիւններ, այդ բոլորը հաւատի հրովարտակներ են, որոնք հերքում են երեք տիեզերական ժողովների (168), 1415, 1431)[1]) հանդիսաւոր վճիռները. չնայելով որ այդ վճիռները հաստատել են պապերը։ Եւ հաւատի այս նոր գրութիւնները կազմում են և պիտ կազմեն վէմ անկեան, որոնց վերայ այսուհետև պէտք է հիմնուի կաթոլիկական վարդապետութեան ամբողջ շէնքի հաստատութիւն ու անձեռնմխելիութիւն։ Այս նախնական օրէնքը, որ կրկնում էին բոլոր հայրերը — Nihil innovetur, nisi wuod traditum est (թող ոչ մի նոր բան չմուծուի, ինչ որ աւանդուած չէ) այժմ դարձաւ հակառակը և հարկաւոր է կամ նորից փոփոխել և կամ արգելել ուսումնասիրութեան հին դասագրքերը, որովհետև նոցա հիմքը աւանդութիւն է, իսկ այս աւանդութիւնը միմիայն խաբուսիկ ուրուական կլինէր, եթէ չըհիմնուէր այն գրութեան վերայ՝ թէ ամենայն նորութիւն, որ հանդէս է գալիս հակառակ հին վարդապետութեան, անպէտք է և սխալ։

Խոստովանում եմ որ եղել է ժամանակ — 1836-ից յետոյ, երբ ես էլ անկեղծօրէն դանկանում էի միջոց ունենալ այսպէս սրտով ընդունելու և ապացուցանելու հաստատ, պապական սիստեմը ընդունելու և ապացուցանելու համար։ Չէնց այն ժամանակ ես տեսնում էի որ եղուիտական կարմարը իւր բոլոր արագ աճող ուժով ձգտում էր տալ այս վարդապետութեան բացասական նշանակութիւն և այդ բանի համար հռոմում և եպիսկոպոսութեան մեծ մասի մէջ գտնում էր պաշտպանութիւն։ Միևնոյն ժամանակ տեսնում էի, որ Ֆրանսիայում հին-գալլիկական վարդապետութիւնը մի առանձին զօրութեամբ արագ դուրս էր մղւում և անուանարկւում. մինչդեռ նոյն տեղում կատարեալ անհաստատութիւն հսկայական քայլեր էր անում։ Նախազգում էի թէ ինչ իրողութիւններ և դէպքեր կարող էին գալ մեր գլխին. և ես կարիք էի զգում իմ սեպհական ուսման և համոզմունքի համար ուսումնասիրել այս հարցը բազմակողմանի և հիմնաւոր կերպով և ամենից առաջ աղբիւրներն։ Միևնոյն ժամանակ մտածում էի՝ արդեօք չե՞մ կարող գրականութեան մէջ բաց մնացած տեղը լրացնել, գրելով պապականութեան պատմութիւնը, որ այժմեան գրականական պահանջներին համեմատ է։ Եւ ահա երկարամեայ և տոկուն աշխատանքի շնորհիւ ժողովեցի նիւթ, որից ընդարձակ

---

1) Սոքա են՝ առաջին՝ Զ. տիեզերական ժողովը, որ դատապարտեց Հոնորիոս պապին և արևմտեան երկու ժողովները. և երկրորդն Կոնստանցի և Բազելի մեծ ժողովները, որոնք նոյնպէս դատապարտեցին պապերին։ Թարգմ.

և լիակատար ոչ մի ապած շարագրութեան մէջ չի գտնուի։ Ձեմ կարծում, որ աչքիցս վախած լինի որ և է քիչ թէ շատ նշանաւոր վկայութիւն։ Հետևանքն այն եղաւ, որ ես համոզուեցայ, թէ այդ առարկան իւր հազար հինգ հարիւր ամեայ շարժումով և զարգացմամբ շատ պարզ եմ նկատում և այն առոիճանի ստուգութեան եմ հասցրել, որքան որ հնարաւոր է պատմական առպարէզում։ այնուհետև ես համոզուեցայ, որ պապականութեան պատմութիւնը գրելու մտադրութիւնս պէտք է թողնեմ. որովհետև իմ գիրքն անկասկած ինդէքսի մէջ կընկներ, և ես ստիպուած կըլինէի Տէր Ֆոն Շերրի ժամանակ մտած նոր գործնականութեան համաձայն կամ կեղծ հրաժարուել և կամ թողնել իմ ակադեմիական ուսումնական գործունէութիւնը, որին նուիրուած էի ամբողջ հոգով։

Իսկ ինչ վերաբերում է դաւանաբանական հարցին՝ ինձ համար միշտ պարզ և անկասկածելի է եղել, որ պապի ամենազօրութեան և անսխալականութեան ամբողջ շէնքը հաստատուած է խորամանկութեան և խաբէյութեան, բռնութեան և հարստահարութեան վերայ, սոցա բոլոր զանազանատեսակ ձևերով։ Պարզէ նոյնպէս, որ այն քարերը, որոնցով որ շինուած է այդ հաստատութիւնը, առած են մի շարք կեղծիքներից և նոցա վերայ հիմնուած եղրակացութիւններից ու հետևանքներից, որոնք գոյութիւն են ունեցել բոլոր դարերում, սկսած հինգերորդից։

Ահա իմ տեսակէտը. այժմ, Ձերդ Գերազանցութիւն, ինքներդ դատեցէք, արդեօք ի՞նչ զգացումներով պիտի ընդունեմ ես այն յորդորներն, որ առաջարկում էիք Դուք և այժմեան պապը, վերջինս երեք անգամ։ Ամենայն օր ասում եմ ինքս ինձ, որ ես անզօր, միշտ ու ամեն կերպ սխալուող մարդ եմ։ Իմ ամբողջ մտաւոր կեանքս իւր էութեամբ այս է՝ որ ես անդադար փոփոխում եմ և ուղղում նախկին հայեացքներս և կարծիքներս և կամ մերժում նոցա։ Իմ մէջ կենդանի է այն գիտակցութիւնը, որ ես երբէք յամառութեամբ չեմ խուսափել լաւ հայեացքներից. գոնէ չեմ կարող մտաբերել մի այդպիսի դէպք։ Ես հրաժարուել եմ, թէև ճնշուած սրտով, ամենասիրելի կարծիքներից, երբ

որ պարզւում էր նոցա ապիկարութիւնը։ Ի յարկէ, կարող է պատահել որ իմ գիտակցական ոյժերը խանգարուել են, որով անընդունակ եմ դարձել ճանաչելու պատմական իրողութիւնները։ Այդպիսի դրութեան օրինակներ, մինչև անգամ նշանաւոր մարդիկների վերաբերութեամբ, շատ կան։ Եթէ այդպէս է, ապա ուրեմն այդ հիւանդութիւնը վաղուց է որ ունիմ ես, որովհետև այդ վիճելի հարցերի վերաբերմամբ նոյն համոզմունքներն եմ ունեցել մօտաւորապէս 1859 թուից, այն ժամանակուանից՝ երբ վերադարձայ Հռոմից։ Եւ եթէ ես յիրաւի այդ հիւանդական դրութեան մէջ եմ եղել, այն ժամանակ իմ այնքան ցանկացած և խնդրած հրապարակական վիճաբանութիւնը ամենալաւ միջոց կըլինէր եթէ ոչ բժշկուելու, գոնէ յամենայն դէպս այն մարդիկների համար, որոնք այդ գործում վստահացան իմ գիտութեանը և դէպի ճշմարտութիւնը ունեցած սիրուս. և որոնք իմ իսկական դրութիւնը տեսնելուց յետոյ, ի հարկէ կըհիասթափուէին և կըվերադառնային կրկին մեծ համայնքը [1]։

Դուք, Գերապատիւ Տէր, անկասկած իմ հոգեկան դրութեան վերայ շատ վատ հայեացք ունէք։ Դուք ինձ խրատում էք, որ ես մտածեմ իմ հոգու փրկութեան համար. այդ լուրջ խրատին պատասխանում եմ երկիւղած շնորհակալութեամբ։ Դորանով ուզում էք ասել. «եթէ դու մեռնես առանց հրաժարուելու մոլորութիւնից, այն ժամանակ գժոխքի յաւիտենական դատապարտութեան կըմատնես քեզ։ Որովհետև առ սակաւն 1871-ից յամառութեամբդ մահացու մեղքի մէջ ես գտնուում, քո դրութիւնը ակամայ մոլորութիւն կամ մտածողութեան ոյժերի խանգարումն չէ, այլ զայրացումն և սատանայական կուրութիւն է»։ Եթէ ես յիրաւի այդպիսի դրութեան մէջ լինէի, անկասկած աւելի լաւ կըլինէր, եթէ ինձ հմայէիք, քան թէ դարձնէիք կրօնական խրատական խօսակցութեամբ։

---

1) Ինչպէս երևում է Դեօլլինգեր չէ ուզում վատիկանի եկեղեցին եկեղեցի անուանել, այլ մեծ համայնք անունն է տալիս (grosse Gemeinschaft). Ծանոթ. Թարգմ.

Բայց ես խնդրում եմ ուշադրութեան առէք այն, որ խօսքը իմ մասին չէ, այլ աւելի քան հաղարաւոր անձինքների, որոնց համար իմ սիալանքի բացուիլը և եկեղեցական մութ վարդապետութիւնների բացատրութիւնը այն հետևանքները կունենային, որոնց ջերմ սրտով ցանկանում է Ձերդ Գերապատուութիւնը:

Ձեր իշխանութեան ենթակայ են, Ձերդ Գերապատուութիւն, այն ամենը, ինչ որ հարկաւոր է Ձեր նպատակին հասնելու համար: Ընտրեցէք Ձեր թեմի հոգևորականներից, որ այդքան հարուստ է գիտնականներով, մէկ կամ մի քանի անձնաւորութիւններ, ես պատրաստ եմ պատասխանելու իւրաքանչիւրին և առաջարկում եմ միայն մի, ինքն ըստ ինքեան հասկանալի պայման, այն է՝ թոյլ տուի ունենալու երկու ողջիր արձանագրութեան մէջ ներմուծելու երկու կողմի խօսակցութիւնները և յետոյ տպագրութեամբ հրապարակ հանելու: Եթէ հերքեն ինձ, խոստանում եմ Ձեզ հանդիսաւոր կերպով իսկոյն և եթ հնազանդել և հրաժարուել սիալանքներից: Իմ կեանքի մնացորդը, եթէ երկինք կըշնորհէ ինձ, ես գործ կըդնեմ իմ սեպհական շարադրութիւնները հերքելու:

Ինչպէս նկատում եմ Ձեր նամակից, Դուք, Գերապատիւ Տէր, կատարեալ հաւատով համոզուած էք, որ նոր, այժմ 17 տարեկան հաւատի անդամներն ամփոփում են իրանց մէջ պարզ, ինչպէս արեգակ, ճշմարտութիւն և որ, հետևաբար, նորա դէմ եղած բազմաթիւ առարկութիւնների ոչնչութիւնը բաց անելը մեծ աշխատանք չէ պահանջում: Նա՝ որին Դուք կընորէք, ի հարկէ նոյնպէս պէտք է մտածէ և այդ պատճառով յաղթութեան կատարեալ համոզմամբ պէտք է դէմ դնէ 88 ամեայ հիւծուած ծերի: Խօսքը հաւատի խորհուրդների՝ ինչպէս են՝ Երրորդութիւն ու մարդեղութիւն, մասին չէ, որոնց մասին, ի հարկէ կարելի է վիճել առանց որ և է յաջողութեան մինչև աշխարհի վերջը: Մենք այստեղ կանգնած ենք պատմութեան վկայութիւնների և իրողութիւնների հաստատ հողի վերայ: Դոքա այնպէս լուսաբանուած և պարզուած առարկաներ են, որ իւրաքանչիւր

բարեկիրթ և լուսաւորուած մարդ, թէպէտ ուսումնասիրած չըլինի աստուածաբանութիւն, կարող է կազմել իւր սեպհական դատողութիւնը այս կամ այն կողմի ճշմարտութեան և սիալի մասին:

Գիտեմ որ իմ առաջարկութիւնը կը հանդիպի ամենազօրեղ ընդդիմութեան Ձեր օրդենարեատի կողմից, որովհետև նա սովորական կանոն է դարձրել մերժել նոցա, որոնք խնդրում են նորա ունկնդրութիւնը, և անմիջապէս ենթարկել եկեղեցական բանադրանքի: Բայց խնդրում եմ մտածէք, որ այդպիսի վարմունքը հակառակ է ճշմարիտ եկեղեցուն: Դուք գիտէք, որ՝ յաճախ եպիսկոպոսական սինոդները հիմնուած են եղել միայն նորա համար, որ սուտ վարդապետութեան մէջ մեղադրուածներին միջոց տան բացատրելու և պաշտպանելու. օրինակներ շատ կան դորա վերաբերեալ: Հասարակ աշխարհական Պելագիոսը գործ ունէր շատ սինոդների հետ վեց տարուայ ընթացքում, չնայելով որ ակներև էր նորա քարոզած վարդապետութեան ստութիւնը, մինչև որ վերջապէս բանադրուեցաւ եկեղեցական ժողովի կողմից: Աւելի շատ անուններ կարելի է բերել նոյն իսկ վերջին ժամանակներից: Ձեզ յայտնի է թէ երբ և ինչպէս փոխուեց այդ բոլորովին արդարացի սովորութիւնը: Դեռ տասներկու երորդ դարում գործ դրին այդ սովորութիւնը Աբելարդի և ուրիշների վերաբերմամբ, բայց հետևեալ դարում նորից վերականգնեցին պապերը հաւատի դատաստանը գաղտնի գործավարութեամբ, իբրև միջոց դարձի տանելու տանջանք, carcer durus, տանջական մահի պատիժ և հրամայեցին որ լոկ կասկածանքի պատճառով ենթարկեն խիստ քննութեան: Սակայն Հուսին և Հերոնիմին կոնստանցում թոյլ տուին մանրամասն և հանգամանօրէն պաշտպանել իրանց վարդապետութիւնը և ապա թէ այրեցին: Օրդինարիատը—պէտք է համաձայնիմ—ունենալով իւր կողմը պապական թէօրիան և գործնականութիւնը, անկասկած կասէ. այժմ, բանութեան և պապի անսխալականութեան թագաւորութեան մէջ, իւր վարմունքը բոլորովին կանոնաւոր է: Սակայն, կարծում եմ, լաւ կըլինէր վարուել ծերի հետ, որ կէս դար հա-

ւատարիմ ծառայել է եկեղեցուն, աւելի հին եկեղեցուն, աւելի հին եկեղեցու ոգով, քան հաւատաքննութեան (ինկվիզիցիա) և կոնդակների, և գոնէ լսել նորան։ Դուք, Գերապատիւ Տէր, ասում էք ինձ, որ իմ հնազանդութիւնը կրլինի յաղթանակ միլիոնաւոր հաւատացեալների։ Եթէ ճշմարիտ է որ միլիոնաւոր մարդիկ բաղդակից են ինձ, ապա ուրեմն նոքա հաւանօրէն լաւ կընդունէին և այն, որ ինձ հետ վարուէին մեղմ և դանդաղ։ Ես գիտեմ մի այլ թեմ՝ Բեգենսբուրգ, ուր ինձ հետ հաւանականօրէն կըվարուէին այնպէս, ինչպէս Միւնխենում։ Բայց որքան տարբեր կըլինէր իմ վիճակը, եթէ յաջողուէր ինձ այդ կրիսիսի ժամանակ լինել Վիեննայում, կամ Պրագայում, կամ Բամբերգում, կամ Բոռենբուրգում։

Բարեկամներս և պատմագէտները յաճախ ասում էին ինձ, որ ես պէտք է ուշադրութիւն դարձնեմ թէ չըկայ եկեղեցական մի այլ հաստատութիւն, որ խիստ ի չարն գործածութիւնից աւելի արհամարհուած լինի, քան բանադրանքը։ Հաշուած է որ նախկին ժամանակներում, օրին. տաննեւչորսերորդ դարում, բոլոր քրիստոնեաների կէսը մերժուած էր եկեղեցուց. հազարաւոր քրիստոնեաներ ամբողջ տարի մնում էին բանադրանքի տակ մի քանի շիլինգի [1]) համար։ Այդ ժամանակներում միայն մի մարդու համար երբեմն ենթարկում էին բանադրանքի ամբողջ մի ազգ։ Եկեղեցու հետ սերտ կապուած էր պապի վարդապետութիւնը՝ թէ կարելի է և պէտք է միլիոնաւոր հաւատացեալներ զրկել մի ամբողջ տարի Քրիստոսի պարգևած բարիքից, եթէ որ և է թագաւոր կըգործէ հակառակ պապական գահի։ Ես ինքս ինձ ասում էի—բանադրուած լինել—սովորական արկած է, որի վերայ մեծ մասամբ բանադրուածներն իսկ չէին դարձնում ուշադրութիւն այն աստիճանի, որ հուլմէական վարչութիւնը (шурія) մի առանձին սենեակ է նշանակել այն անձանց ցուցակ ծառայութիւնների մէջ, որոնք առաջարկում են բարձր աստիճան կամ պարգևատրութիւն։

[1]) Շիլինգ անգլիական փող է և հաւասար է մեր, մօտաւորապէս, 30 կոպ. արծ. Թան. Թարգմ.

Միևնոյն ժամանակ յայտնի է որ անարդար բանադրանքը, ս. հայրերի վարդապետութեամբ, ծառայում է ոչ որպէս անէծք, այլ օրհնութիւն բանադրածին։ Բայց և այնպէս չեմ մերժում, որ ինձ վերայ շատ վատ տպաւորութիւն թողեց այն շօշափելի ձգտումը՝ գրգռել իմ դէմ ժողովուրդի ատելութիւն և խրախուսել մոլեռանդների համարձակութիւնը։ Աղքունի ստիկանական տեսչութիւնը հարկադրուած էր Օրդինարիատի հրատարակած միջոցների պատճառով պաշտօնապէս նախազգուշացնել ինձ, որ ես լինիմ զգոյշ—որ յարձակումն է պատրաստւում ինձ վերայ։

Այդ բոլորը, վառք Աստուծու, անցել է վաղուց։ Այն ժամանակ ամօթի զգացումը տիրապետեց ինձ, որ գերմանական ազգի և միւս դաւանութեան պատկանող քրիստոնեաների առաջ բացուած էր մի այդպիսի տեսարան, որ աստուածաբանական ատելութիւնը հասցրած էր պարոկսիզմի—[ordum theologicum]։ Այն օրից ես լռեցի, չնայելով այն ամենազօրեղ գրգռման, որ ստիպում էր խօսել։ Բայց Ձերդ Գերապատուութեան հասկանալի կլինի, որ այժմ միայն որ և է յարաբերութեան մէջ մնելու միտքն անգամ կատարուած իրողութեան պատճառների հետ սարսափեցնում և տանջում է ինձ։ Սակայն նոցա վարմունքից առաջացած գործողութիւնը հակառակ էր նոցա մտադրութիւններին։ Ցանկանում էին ինձ շրջապատել թշնամիներով։ Վառել իմ դէմ ժողովուրդի ատելութիւնը։ Ձեզ շատ լաւ յայտնի ամենօրեայ կղերական մամուլը ստացել է իմ դէմ ուղղած carte blanche-ը, բայց բոլորն ի զուր։ Նոցա թիւը, որոնք հեռուից և մօտիկից ցոյց տուին ինձ բարեացակամութեան և համակրական նշաններ, կարճ ժամանակում հասապատկուեց և որ ամենից թանգն է ինձ համար—ոչ մէկը իմ բարեկամներից չթողեց ինձ։ Ոչ ոք այն անձինքներից, որոնց կարծիքը գնահատել եմ, չհեռացաւ ինձանից, ընդհակառակը հովանաւորողներիս և բարեկամներիս թիւը օրից օր աւելանում է՝ նոյն իսկ հոգևորականների շրջանում և Դուք, Ձերդ Գերապատուութիւն, խիստ կըզարմանայիք, եթէ բաց անէի Ձեր առաջ թէ քանիսը մեր դասին պատկանող անձինք յայտ-

նել են անմիջապէս իրանց համաձայնութիւնը կամ հասկացնել են առել նոյնը։ Եւ այլապէս չէր էլ կարող լինել։ Բռնութեամբ և ստիպմամբ են ներմուծուած նոր դաւանութիւնները. ստիպմամբ և բռնութեամբ էլ պէտք է պահպանուեն ապագայում։

Իմ այս խոստովանութիւնը լրացնելու համար ես պէտք է յիշեմ և մի կէտ՝ խօսքս այն խոստման մասին է, որ ես միւս քահանաների հետ ի միասին պատրաստուած էի եկեղեցու հրամանի համեմատ տալ երդմամբ.—«հաւատարապէս ընդունում եմ Ս. Գիրքը այն մտքով, ինչպէս որ ս. մայր եկեղեցին պահպանել և պահպանում է . . . և երբէք այլապէս չպէտք է հասկանամ ու բացատրեմ, քան ինչպէս որ հասկանում և բացատրում են միաձայն հաւանութեամբ ս. հայրերը»[1]) — այսպէս է ասում բնագիրը։ Ինձ թւում է, թէ նոքա, որոնք ընդունում են վատիկանի հրովարտակները, ինքեանք կատարում են ձեւական երդմնազանցութիւն։ Ճշմարտապէս յայտնի է այն մեկնութիւնը, որ տալիս էին Հռոմում 1870 թ. նոր դաւանանքներն ապացուցանելու համար Ս. Գրքից բերած կտորներին, նա բոլորովին շեղւում է ս. հայրերի մեկնութիւնից, և նոցանից ոչ մէկի շարադրութեան մէջ չի կարելի գտնել նման մեկնութիւն։

Ես հարցրել եմ մեր դասին պատկանողներից շատերին, թէ ի՞նչպէս նոքա կարող են հաշտեցնել այդպիսի երդմնազանցութիւնը իրանց խղճի հետ։ Նոքա կամ շեղւում էին ուղղակի պատասխանելուց և կամ շարժում էին ուսերը։ Նոքա ասում էին.— «իւրաքանչիւր քահանայ կամ աշխարհական կարիք չունի այդպիսի մանրամասնութիւններով զբաղուելու» կամ «հաւատի էութիւն ու արժանաւորութիւնը նորանումն է, որ վստահանում ենք այժմեան առաջնորդների վերայ և նոցա ենք թողնում հաշտեցնել հակասութիւնները, եթէ վերջիններս գոյութիւն ունին»։ Կարիք չկայ ասելու թէ ինչ տպաւորութիւն թողին ինձ վերայ այդպիսի ողորմելի պատճառանքներն — և ահա այն ճանապարհի —որի վերայ այժմ հրաւիրում էք ինձ ոտք դնել—սկզբին դրուած

1) Տես նոյն գիրք 373 ծանօթ.

ծանր քար, որին ոչ կարող եմ հեռացնել և ոչ էլ վերայից ցատկել։ Ես պարտաւոր էի գտնել նորից տալ այդ երդումը միայն վատիկանի ժողովի այն յաւելուածներով, որ պապական գահը ներմուծել է նորա բանաձևի մէջ և, այսպէս ասած, մի շնչով վկայ կոչել Աստուծուն, որ ես կամենում եմ հաւատալ և ուսուցանել մի որոշ վարդապետութիւն և միևնոյն ժամանակ այն, ինչ որ հակառակ է այդ ուսման։ Կարո՞ղ էք լրջութեամբ խորհուրդ տալ այդ։ Պարտաւորեմ արդեօք յաւիտենական Դատաւորի առաջ դուրս գալ կրկնակի երդմնազանցութեան խղճի ծանրութեամբ։

Չեմ կարող չենթադրել, որ Դուք, Ձերդ Գերապատուութիւն, գրել էք ինձ քաջալերուելով ընկերների խրախուսանքից կամ մինչ Ձեզ հասած հեռաւոր գրգիռներից դրդուած։ Եթէ այդ ճշմարիտ լինի, ապա ուրեմն գուցէ և ցանկալի է Ձեզ, որ ես հրապարակաւ խոստովանիմ որ Դուք կատարել էք Ձեր խնդիրը։ Ես բոլորովին պատրաստ եմ հրապարակ հանել իմ այս պատասխանը և նախապէս տպագրել կրտսի — ինքն ըստ ինքեան հասկանալի է Ձեր թոյլտուութեամբ — Ձեր նամակը։ Մեծ հաճոյքով ձեռնարկում եմ այդ բաւականին նշանաւոր գործը, որ այսպէս թէ այնպէս վերաբերում է ամբողջ մարդկութեան, որովհետև ինչպէս ես զգում եմ, շատ երկար լռութիւն պահպանելով տարակուսանքի մէջ ձգեցի հասարակութեան, որ ցանկանում էր իմանալ իմ համոզմունքների արդի դրութիւնը։

Դուք, Ձերդ Գերապատուութիւն, բնականաբար չունիք ժամանակ կամ անպատշաճ էք դատում Ձեր բարձր արժանաւորութեան պարապել մանաւորապէս ինձ ուսուցանելով և յանդիմանելով։ Բայց եթէ Ձեր տրամադրութեան տակ գտնուած բազմաթիւ գիտնական ատուածաբանների մէջ գտնուի մէկը, որ իւր վերայ առնէ այդ գործը, ես նախապէս խոստանում եմ ապացուցել տալու նորա պատասխանը, հասկանալի է իմ ծանօթութիւններով, եթէ կարևոր դատուի։ Դեռ էլի շատ բան հարկաւոր կլինէր ասել և հրապարակ հանել եկեղեցու շահերի տեսակէտից նայելով, եթէ ճշմարիտ վերջինս կարևոր կամ

պէտք է դառնայ columna veritatis (ճշմարտութեան կոթող), այն ժամանակ կաւելացնէի իմ շարադրութեան վերայ մի որ և է բան դորանից։

Խորին յարգանօք մնամ Ձերդ Գերապատուութեան խոնարհ՝

Ց. ՖՈՆ - ԴԵՕԼԼԻՆԳԵՐ։

Յ. Դ. Այժմ նկատումեմ, որ կարող է թուել, արդեօք չի հակասում վերջին առաջարկը նախկինին կամ պէտք չէ փոխարինէ նորան։ Իմ ջերմ ցանկութիւն է, իմ խորին յարգանօք Ձերդ Գերապատուութեան ուղղած խնդիրս է և կըմնայ նոյնը, որ թոյլ տաք ինձ բերանացի պաշտպանել և բացատրել իմ հայեացքները։ Եթէ թոյլ տաք, այն ժամանակ նամակս կըծառայէ ինձ և իմ հակառակորդին որպէս յարմարագոյն հիմք գործի բացատրութեան։

ԻԳ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՖՈՆ ՇՏԷՅՓԵԼԷՆ ԴԵՕԼԻՆԳԵՐԻՆ։

19 Մարտի 1887 թ.

Մեծարգոյ Տէր Stiftsprobst և արքունի խորհրդական. Ձեր սոյն ամսի 1-ին ինձ ուղղած նամակի մէջ ի միջի այլոց գրել էիք այս։ «Չեմ կարող չենդադրել, որ Դուք, Ձերդ Գերապատուութիւն, գրել էք ինձ քաջալերուելով ընկերների խրախուսանքից կամ մինչ Ձեզ հասած հեռաւոր գրգիռներից դրդուած»։ Ձեր նամակի այդ կտորը կարօտ է ուղղութեան։ Բարեհաճեցէք հաւատալ, որ այդ քայլը անելու համար ոչ ընկերներս են խրախուսել և ոչ էլ հեռաւոր գրգիռներ են հասել ինձ։ Ձեզ նորից դիմելու միտքը յղացայ ինքս. ես կատարեցի այդ պարտքի զգացումից դրդուած և դէպի Ձեզ տածած սիրուց։ Թոյլ տուէք ինձ չմտնել Ձեր նամակի միւս մասերի քննութեան մէջ։ Նոյն սիրով Ձեզ նուիրուած՝

ԱՆՏՈՆԻՈՍ

Արքեպիսկոպոս Միւնխենի և Ֆրէյզինգենի։

ԻԵ.

ՐՈՒՖՖՈ ՍՅԻԼԼԱ ՆՈՒԻՐԱԿԸ — ԴԵՕԼԼԻՆԳԵՐԻՆ

1 Հոկտեմբ. 1887 թ. 1)։

Հռչակաւոր դոկտոր! Այս մի մասնաւոր և մտերմական (конфиденціальная) նամակ է, որի մասին ոչ ոք գիտէ։ Ես հաճոյք եմ զգում գրել, ենթադրելով որ ախորժելի կըլինի Ձեզ իմանալ իմ Ձեր անձի վերաբերմամբ ունեցած զգացմունքներս։

Եթէ ամենասուրբ կոյս du Rosaire և Ձեր բարի պահապան հրեշտակը ներշնչեն Ձեզ ամենամեծ միխիթարութիւն պատճառելու եկեղեցուն ընտանեկան մեծ ոճի առթիւ, որ մենք պէտք է շուտով կատարենք մեր Ս. Հօր յոբելեանի օրը, ես ինձ կընուիրեմ Ձեր տրամադրութեան։

Որովհետև նորին սրբութեան հաճելի էր կարգել ինձ իւր ներկայացուցիչ Բաւարիայում, ուստի ցանկալի է որ ամենամեծ ուրախութիւնը հասնի նորան Մարիամ Ընգա-սրս-Ընի-նից և որ կազմուի մի այլ հանդիսաւոր տօն բազմաթիւ գիտնականների և բարեկամների մէջ, որանք սիրում են այն պատճառով, որ Ձեզ են պարտական իրանց կրթութեամբ։

Խնդրում եմ Ձեզ, հռչակաւոր դոկտոր, ընդունեցէք իմ անկեղծ զգացմունքները։

Արքեպիսկոպոս Պետրի, առաքելական նուիրակ։

ԻԶ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐ ՐՈՒՖՖՈ ՍՅԻԼԼԱ ՆՈՒԻՐԱԿԻՆ։

12 Հոկտեմ. 1887 թ. 2)։

Monseigneur! Իմ հասակի մարդիկ նախ մոռացում են մահուան և ապա այդ աղէտից (катастрофъ) յառաջացած հետևանքնե-

1) Դեօլլինգերին գրած այս և թէ միւս պատասխանների բնագիրը ֆրանսերէն է։ Ռ. Թարգմ.

2) Դեօլլինգերի այս պատասխանի բնագիրը ֆրանսերէն է։ Ռ. Թարգմ.։

րի մասին։ Գլխաւոր հոգսս՝ որ շատ բնական է՝ է հանգստացնել և վտանգներից ազատ կացուցանել խիղճս։ Ենթարկուելով բանադրանքի պրելատի կողմից՝ որին Պիոս Թ. այդ գործի համար առատ պարգևատրեց գովասանքներով՝ ահա տասնևվեց տարի է որ զգում եմ կարիք չարհամարհել այն ամէնը՝ ինչ որ կարող է օգնել բացատրելու այն՝ թէ ինչպէս պէտք է պահեմ ինձ այդ տանջող դրութեան մէջ։ Ես կարող էի կատարել բազմաթիւ չարագործութիւններ անպատիժ՝ քանի որ եկեղեցական կարգապահութիւնը (дисциплина) Գերմանիայում անչափ ներողամիտ է. բայց այն յանցանքը՝ որի մէջ մեղադրում են ինձ չլսուած չափով էր. ես հրաժարուեցի փոխել իմ հաւատը՝ հաւատալ և դաւանել այնպիսի մի վարդապետութիւն՝ որի հակառակը ինձ սովորեցրել էին իմ մանկութեան օրերում և որի սխալ լինելը հաստատեցին իմ յիսունուվեց ամեայ պարապմունքներս և հետազօտութիւններս։ Այդ բաւական էր որ եօթանասուն երկու ամեայ ծերուկին՝ որ մինչև այժմ չէր գրաւել իւր վերայ ոչ մի կշտամբանք և յանդիմանութիւն. ենթարկել պատժի որ եկեղեցու վարդապետութեամբ աւելի ծանր է քան մահը։

Թոյլ տուէք ինձ՝ monseigneur, բերել այստեղ մի քանի անձնական վաստեր՝ որոնք գուցէ թէ կարողանան թեթևացնել մասամբ Ձեր դատաստանի խստութիւնը։

Իմ գործունէութեան որպէս ուսուցչապետ աստուածաբանութեան շարունակուեց 47 տարի—այն է՝ 1823—1871 թ.։ Այդ երկար ժամանակուայ ընթացքումս ես դասախօսում էի այն՝ ինչ որ Պիոս Թ-ի 1870 թ. որոշումներին հակառակ էր։ Ամբողջ աշխարհը գիտէր և կարող է իմանալ ինչ որ ես հաւատում և ուսուցանում էի այդ հարցի նկատմամբ։ Այստեղի մէկը միւսին յաջորդող զանազան առաքելական նուիրակներ չէին կարող անգետանալ այդ։ Նոքա ինձ հետ վարում էին բարեհամբոյր և ոչ միայն նոքա՝ այլ և ոչ մի գերմանական՝ կամ ֆրանսիական կամ անգլիական եպիսկոպոս չէ ասել ոչ մի խօսք կամ չէ արել ոչ մի ակնարկ՝ որից կարողանայի գուշակել նոցա դժգոհութիւնը իմ դասաւանդութեան մասին։ Ես ուսուցանում էի այն՝ ինչ որ

սովորեցրել էին ինձ իմ ուսուցիչները՝ ինչ որ հաստատուել էր իմ հետազօտութիւններով և ինչ որ գտնում էի պատմական և աստուածաբանական աշխատութիւնների մէջ՝ որոնց համարում էի աւելի հիմնաւոր. այն է՝ որ պապերի անսխալականութիւնը վերջին ժամանակի հնարած կարծիք է՝ որ այժմ եկեղեցին տանում է։ Վերագրելը այդ ամբողջ կաթոլիկական աշխարհին կըլինէր՝ ինչպէս ասում է մի շատ տարածուած անգլիական հաւատի ձեռնարկ՝ բողոքական լուտանք։

Ես գիտեմ բազմաթիւ անհերքելի վկաների և նոցա բերանից դուրս թռած խոստովանութիւններից՝ որ վատիկանի ժողովն ազատ չէր՝ որ նորանում դիմել են սպառնալիքների՝ ահաբեկութիւնների և պատրանքների։ Ես այդ գիտեմ եպիսկոպոսներից՝ որոնց նամակները մինչև այժմ էլ պահում եմ կամ որոնք ինձ բերանացի խոստովանել են այդ։ Նոյն Միւնխենի արքեպիսկոպոսը՝ որ բանադրեց ինձ՝ եկաւ ինձ մօտ Հռոմից վերադառնալու հետևեալ օրը և պատմեց ժողովի մանրամասնութիւնները՝ որոնք չթողին իմ մէջ ոչ մի կասկած։ Ճշմարիտ է որ բոլոր պրելատները հնազանդեցան. բոլորն իրանց արդարացնելու համար ասում էին. «մենք չենք ուզում բաժանումն ձգել (sxusma)»։ Եւ ես չեմ ցանկանում լինել անդամ բաժանուած հասարակութեան. ես չեզոքացած եմ։ Համոզուած լինելով որ իմ դէմ յայտնած վճիռն անարդար և իզուր է՝ ես դարձեալ համարում եմ ինձ անդամ կաթոլիքական մեծ եկեղեցու և ինքն եկեղեցին Ս.Հայրերի բերանով ասում է՝ որ այդպիսի բանադրանքը չի կարող վնասել իմ հոգուն։

Իմ անաթեմա ստանալու օրից անցել է տասնևվեց տարի։ Ես այդ ժամանակը գործ եմ դրել նորից ուսումնասիրելու և հետազօտելու՝ աղբիւրներից նոր տեղեկութիւններ քաղելու և հետևելու աւանդութիւններին դարից դար։ Խորազնին հետազօտութիւնը այսպէս կոչուած վկայութիւնների՝ որոնք քաղել եմ յոգուտ ժողովների գրած շարադրութիւններից՝ ցոյց տուեց որ դոքա են մի խումբ եղծումներ՝ մոտացածին վկայութիւններ և կեղծիքներ՝ որոց մեծ մասի ստութիւնը յայտնի էր ծէ. դարում։

Այժմ՝ Mouseigneur՝ ինչ էք կամենում ինձանից։ Մինթէ պարտական եմ ասելու աշխարհին՝ կաթոլիկներ և բողոքականներ նայեցէք ինձ վերայ որպէս մի տգէտ մարդու՝ որ ամբողջ կէս դար խաբեց իրան և ուրիշներին և որը ըմբռնեց ճշմարտութիւնը միայն իւր երկար կեանքի վերջին օրերում։ Կըհաւատա՞ն արդեօք ինձ մարդիկ՝ որոնք ընդունակ են դատելու այդ տեսակ հարցերի մասին։ Ես գիտեմ թէ ի՞նչ կասէին նոքա։ Մէկ մասը կասէր. ահա մի ծեր մարդ նորից մանկացած (rimbambito) իսկ միւսը—թէ նա ստախօս և ստոր կեղծաւոր մարդ է.—նա իւր ամբողջ կեանքումն էր այդպէս կամ այժմ դարձաւ։ Իսկ յետոյ իմ առաջին պարտքը պէտք է լէնէր հերքել ինքս ինձ՝ իմ աշխատութիւնները՝ որոնք թարգմանուած են շատ լեզուներով՝ և ապացուցանել որ նոքա ոչ այլ ինչ են՝ բայց եթէ մոլորութիւնների մի ցանց։ Դա կըլինէր իսկապէս միակ իրողութիւնը աշխարհում և Դուք ամբողջ եկեղեցական պատմութեան մէջ չէք կարող ցոյց տալ նման հոգեկան փոփոխութիւն։

Այստեղ թոյլ եմ տալիս ինձ՝ Monseigneur՝ բերել մի ընորոշ իրողութիւն։ Երբ արքեպիսկոպոսը՝ ինչպէս ինքն է ասում՝ հնազանդելով պապի հրամանին հաղորդեց իմ դէմ հրատարակած վճիռը՝ ինքը նոյնպէս հրամայեց յայտնել ինձ՝ որ ես ենթարկուած եմ բոլոր պատիժներին՝ ինչ որ կանոնիկական օրէնքը հաւաքել է բանադրուածների վերաբերմամբ։ Պատիժներից առաջին և գլխաւորը նշանակուած է Ուրբանոս Բ. պապի նշանաւոր կոնդակի մէջ՝ որը թոյլ է տալիս իւրաքանչիւրին՝ եթէ նա կատարում է այդ եկեղեցու նախանձախնդրութիւնից դրդուած՝ սպանել բանադրուածին։

Միևնոյն ժամանակ հրամայեց Միւնխենի բոլոր եկեղեցիների ամբիոններից քարոզել իմ դէմ— և այդ քարոզներից յառաջացած հետևանքն այն եղաւ՝ որ ոստիկանութեան նախագահը հրամայեց նախազգուշացնել ինձ իմ անձի դէմ մեքենայած ոճիրներից և ասել՝ որ լաւ կանեմ եթէ առանց ուղեկցի դուրս չգամ։ Չամարձակումեմ։ Mouseigneur՝ այսպիսի մի հարց դնել՝ արդեօք պարտաւո՞ր էի հնազանդութեան դէպքում բացատրել

աշխարհին՝ որ անսխալական պապի այդ որոշումը բոլորովին համաձայն է աւետարանի բարոյականութեան։

Ես ակնարկեցի հիմունքների միայն մի մասը՝ որոնք հարկադրեցին ինձ հրաժարուել մերժելու և հնազանդելու մտքից. այդպիսի հիմունքներ շատ ունիմ՝ բայց գրածներս իմ կարծիքով բաւական են գաղափար տալու համար՝ որ այդպիսի համոզմունքներով մի մարդ կարող է ներքին խաղաղութիւն և հոգեկան հանգստութիւն վայելել նոյն իսկ այն դէպքում՝ երբ նա կանգնած է յաւիտենականութեան շէմքի վերայ։

Ընդունեցէք՝ Monseigneur՝ խորին յարգանքս.

Ց. ԴԵՈԼԼԻՆԳԵՐ.

ԻԷ.

ՐՈՒՖՈ ՍՅԻԼԼԱ ՆՈՒԻԲԱԿԸ ԴԵՈԼԼԻՆԳԵՐԻՆ։

14 Հոկտեմ. 1887 թ.

Հոչակաւոր ուսուցչապետ։ Խնդրում եմ Ձեզ մի մեղադրէք իմ խոսքերի համար։ Աստուած ազատէ այդտեսակ վարմունքից մերձաւորներիս հետ։

Դուք ասում էք. «Ես չեղոքացած եմ»։ Դա մի անմխիթար և տխուր վիճակ է՝ որից բոլորս ցանկանում ենք Ձեզ ազատուած տեսնել։ Ի հարկէ անկարող եմ դրդել Ձեզ դէպի արիասիրտ վճռականութիւն. այդ կարող է ընդհակառակը մեր տէրը—Ամենակալը։ Դուք աւելացնում էք՝ որ այդ իրողութիւնը—աչքի առաջ ունենալով անցեալ հանգամանքները—ճշմարիտ միակը կըլինի—պատմութեան մէջ։ Աւելի լաւ՝ թանկագին ուսուցչապետ. Դուք կարող էք տալ եկեղեցուն եղակի մխիթարութիւն և Ձեր հոգուն անչափ բարիք։ Իսկ ինչ վերաբերում է մի քանի թուլամիտներին (թոյլ տուէք գործ ածել այս խօսքը)՝ որոնք կըհամարձակուէին Ձեզ դատել՝ ինչպէս որ Դուք վախենում էք այդ բանից՝ հաւատացած եղէք՝ որ շատ շուտով ցոյց կըտան նոցա իրանց տեղը։ Միայն նոքա կարող են պնդել՝ թէ Դուք ամբողջ տարիներ խաբեցիք աշխարհին։

Մինչև 1870 թ. Ձեր կողմն էին բոլոր հակա-անսխալականները, (антинфаллибилисты), որոնք թէ ժողովում և թէ նորանից դուրս օգտւում էին կատարեալ ազատութեամբ ընդդիմութեան իրաւունքից և մինչև անգամ կատաղութեամբ։

Մինչդէռ Ձեր այդպիսի չէզոք դիրք բռնելը 1870 թ. Յուլիսին հաստատում է ամբողջ կաթոլիկական աշխարհի համեղմունքը, որ դուք սխալանքների մէջ էք ընկած։ Արդեօք նուա՞զ արժէք ունի Ձեզ համար ամբողջ կաթոլիկ աշխարհը քան այդ թուլամիտները։

Թող, հռչակաւոր ուսուցչապետ, չյուզէ ձեզ ոչինչ, եթէ Դուք ցանկանում էք դուրս գալ չէզոք վիճակից։ Նախ և առաջ բացարձակ վստահ եղէք պապի՝ մեր սուրբ հօր վերայ, Դուք գիտէք որ ուրիշ նշանաւոր անձնաւորութիւններ բաղդ կհամարէին իրանց նուիրել բարձր հովուապետին։ Դուք կարող էք հպարտանալ Ձեր հնազանդութեամբ և կաթոլիկ ընտանիքը տօնելով իւր հօր յոբելեանը կուրախանայ՝ տեսնելով նորա մօտ սիրելի որդուն։

Սպասելով մնամ միշտ պատրաստ Ձեզ ծառայելու և օգտակար լինելու։ Խնդրում եմ հաւատացէք իմ առանձին տրամադրութեան։

† Լ. արքեպիսկոպոս Պետրի, առաքելական նուիրակ։

14 Հոկտ. 1887 թ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

ԴԵՕԼԼԻՆԳԵՐ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻՆ.

7 Փետր. 1868 թ. 1).

Բարձրապատիւ Տէր։ Ձեր գրած տողերը պատաւորեցնում են ինձ բուռն շնորհակալութիւնս յայտնելու, որովհետև նոցա մէջ— չնայելով բոլորին— երևում է այնպիսի բարեմտական տրամադրութիւն, որի անկեղծութեան և պարզութեան դէմ եղած ամենափոքր կասկածն անգամ յանցանք է։

Հասկանալի է թէ որպիսի հաճոյքով կկատարէի Ձեր խնդիրը, կըհետևէի Ձեր խորհրդին եթէ կարողանայի կատարել այդ առանց համոզմունքներս վիրաւորելու։

Դուք ցանկանում էք որ ես հրապարակաւ բացատրեմ պարոն Շոլլ–ի իմ անձի դէմ ուղղած վատաբանութիւնները։ Նա հաշուել է ինձ Գալիլէյի, Ֆենելոնի, Հիրշերի և այլն, մի խօսքով նոցա թւում, որոնք հռոմէական դրան կողմից ենթարկուել են հալածանքի կամ գրաքննութեան։ Իսկ ես ենթակայ չեմ եղել ոչ մէկին և ոչ միւսին. իմ շարադրութիւնները մինչև այժմ էլ չեն ընկել ինդեկսի մէջ. հետևաբար ես չեմ պատկանում այդ հասարակութեան։ Իկարկէ կարող էի այդ երկու խօսքով յայտնել, բայց այդպիսի բացադրութիւնն անշուշտ չէր կարող բաւականութիւն տալ ոչ Ձեզ և ոչ էլ ուրիշներին։ Օրինակի համար այդ մատենագիրներն ու ընթերցողները՝ Volksbote Donauzeitung և այլ «բարեմիտ» լրագիրները կասէին. եթէ Դեօլլինգեր դեռ ևս չէ դատապարտուած, դորա պատճառը Հռոմի անզգուշութիւնն է բայց նա արժանի է այդ դատապարտութեան։ Դուք ճանաչում էք մեր «մաքուր ջրի անդրլեռնականներին» (ультрамонтановъ чистой воды) ինչպէս նոքա իրանց անուանում են Pastorablatt —ում, գիտէք նոյնպէս թէ ինչ են մտածում նոքա իմ շարադրութիւնների և նոցա հեղինակի մասին։ Ընդհանրապէս կասէին. ինչո՞ւ ծանրաբեռնել հասարակութեան այն բացատրութեամբ, որ առանց այն էլ յայտնի է իւրաքանչիւրին, այսինքն նոցա, որոնք հետաքրքրւում են այդ իրերով։ Վաղ ժամանակներից հետէ ըզգում են այն ահող զզուանքը, որով վերաբերում են լրագիրների հաղորդած տեղեկութիւնները անձիս վերաբերմամբ։ Շատ սակաւ անգամ կատարել եմ այդ, բայց և ամեն անգամ կատարելուց յետոյ զղջացել եմ։ Բոլորովին համոզուած եմ, որ եթէ այժմ բաւականութիւն տամ Ձեր ցանկութեան անշուշտ մի քանի օրից յետոյ պէտք է զղջամ։

Դուք ցանկանում էք որ ես դուրս գամ թագստից, ուր որ

1) Բարձրաստիճան եկեղեցականի նամակը, որին այստեղ պատասխանում է Դեօլլինգեր, դժբախտաբար գտնուած չէ նորա մահից յետոյ։

խռոված նստած եմ։ Սորանով պատկերացնում էք ինձ որպէս մի մարդ, որ իւր օրերը անցկացնում է անզգայ, անգործ մոռածողութիւնների մէջ իրականապէս կամ միմիայն երևակայութեամբ հասցրած վիրաւորանքների մասին։ Այնենևին այդպէս չէ իմ հոգու վիճակը։ Ես գործում եմ այն ինչ որ գործել եմ միշտ. հանդարտ և ուշադրութեամբ հետևում եմ իրերի ընթացքին ամենայն օր աշխատում եմ լրացնել, ուղղել իմ ծանօթութիւնները։ Որ այժմ յանուն կաթոլիկական կրօնի կատարուած շատ գործեր լցնում են սիրտս վշտով երբեմն ատելութեամբ, — որ յաճախ, ինձ թւում է, թէ կարծեցեալ բարեկամները և հովանաւորողներն, եկեղեցու աւելի վատ են վերաբերում դէպի եկեղեցին, քան յայտնի թշնամիները—այդ ճշմարիտ է։ Բայց մի՞թէ այս, Ձեր կարծիքով նշանակում է խռովել։ Այդ դէպքում Ս. Բերնարդոս, Ֆենելոն և ուրիշ շատերը իրանց ժամանակ նոյնպէս անկիւնում նոյնպէս խռովում էին։

Ձեր կարծիքով և ցանկութեամբ ես պէտք է հրապարակաւ յայտնեմ իմ հնազանդութիւնը պապական գահին։ Կարծում եմ որ շատ լաւ յայտնի է Ձեզ և մի քանի անգամ փորձած կլինիք նորա ճշմարտութիւնը՝ թէ qui s'exuse, s'accuse. Habemus confitentem reum, exore tuo te judico, sirve nequam [1]) կրբացականչէր ամբողջ հասարակութիւնը, որի ներկայացուցիչ և վարդապետ են հանդիսանում Volksbote և Donauzeitung «մաքուր ջրի անդրլեռնականները», ինչպէս նորա ճշմարիտ ինքնագիտակցութեամբ իրանց անուանում են։ Կարո՞ղ էք մոռածել որ այդ մարդիկ երբ և իցէ կներեն իմ յանդգնութիւնը, որով երբեմն այստեղ երբեմն այնտեղ թոյլ եմ տուել արտայայտել իմ սեպհական համոզմունքը, որ բոլորովին նման չէ նորան, որ հենց այժմ յաջող ընթացք ունի Հռոմում։ Երբէք։ Ես ճանաչում եմ իմ քաջերին (Pappenheimer)։ Ինձ համար այդ շրջանում անդառնալի նշանակութիւն

[1]) Ով ներողութիւն է խնդրում, նա ինքը մեղադրում է իրան։ Խոստովանողին գտան յանցաւոր, քո բերանով եմ դատում քեզ անպիտան ծառայ. Ռ. Թարգ.

ունի—Hic niger est, hunc tu, Romane, Caveto! Դուք ինքներդ, կարծում եմ, կզարմանայիք, եթէ գիտենայիք թէ ով և ինչու համար ամբաստանութիւն է արել ինձ վերայ Հռոմում։ Այստեղ ես կարող էի պատմել Ձեզ այդ պատմութիւնը։ Գիտնականների ժողովի վիճակի մասին, որ ի հարկէ չի կրկնուի, դուք լաւ գիտէք։ Մեր այն ժամանակ ձեռնարկած գործը կատարուեցաւ լիովի քաջալերութեամբ և նոյն իսկ մասնակցութեամբ երեք եպիսկոպոսների, որոց թւումն էր մեր արքեպիսկոպոսը։ Մենք բոլորս արդարև կարծում էինք, որ գործել ենք յօգուտ եկեղեցու շահերին. և ինչ վիճակ հասաւ առանձնապէս ինձ դորա համար Հռոմից։ Ի՞նչ պէտք է լսէի ես յանդգնութեանս և ձգտումներիս մասին Գերմանիայի գիտնականներին խորհրդի հրաւիրելու համար։ Եւ այս բոլորը փուլ եկաւ գլխիս գերմանացիների մատնութիւնների և դրդումների պատճառով։ Ի՞նչ կասէին հին բարեկամներս ու աշխատակիցներս՝ Մոլիէր, Գորրէս, եթէ նոքա տեսնէին նոյնանման դէպքեր։ Ես գիտեմ թէ ինչ կասէին նոքա. ես գիտեմ որ նոքա երկուսն էլ, որոնք այժմ կոչւում են անդրլեռնականներ—մէկն աւելի խիստ, իսկ միւսը մեղմ—կասէին նոցա «հեռու ինձանից»։ Quid nobis et vobis! Դուք այնպիսի մի սերունդ էք, որի հետ չի կարելի մի բան անել։

Երբ աւելի քան յիսուն տարի պարապում է մարդ անցեալ պատմութեան ուսումնասիրութեամբ, այն ժամանակ միայն կըսովորի փոքր ինչ հասկանալ պատմական նեմեզիդան [1]) պատճառի և հետևանքի կապակցութիւնը։ Ես ուսումնասիրեցի Սպանիայի պատմութիւնը՝ ինչպէս քչերն իմ ժամանակակիցներից և և դորա համար այնտեղի նորագոյն անցքերն ամենևին չզարմացրին ինձ։ Վերջին ժամանակներս Հռոմ երկար և յամառութեամբ զբաղուեց Սպանիայով և ի՞նչպէս։ Նախ՝ պապն ի նշան իւր առանձին յարգանքի և մատուցած ծառայութիւնների փոխարէն . . . Իզաբելա թագուհուն . . . ուղարկեց ոսկի վարդ։

[1]) Նեմեզիդա—վրէժխնդրութեան աստուածուհի հնում։ Թարգմ.

երկրորդ՝ մոտերքս կոնսիստորիայի հրապարակական նիստում գովաբանական ճառ խօսեց հաւատաքննութեան (инквизиція) մասին և հրատարակեց վերջինս իբրև ամենալաւ բարերար և եկեղեցական և հաստատութիւն։ Դուք այդ մասին կարող էք կարդալ Pastorolblatt-ում։ Երրորդ՝ պապը սուրբ հրատարակեց հաւատաքննիչին և հրամայեց բոլոր Սպանիացիներին պաշտել նորան այնուհետև որպէս օրինակելի անձն քրիստոնէական բարեմասնութեան։ Այժմ Սպանիան պատասխանում է և պէտք է պատասխանէ ապագայում վերոյիշեալ երեք ալլոկուցիա-ներին պապի ճառ կարդինալների ժողովում)։ Այո՛, կայ վրէժինդրութիւն։

Ի՞նչպէս էք կարծում յարգելի Տէր և խնամակալ։ Եթէ ես երբ և իցէ պարտաւորիմ տալ հրապարակաւ առհաւատչեան, ինքնըստինքեան հասկանալի է, անպայման և անսահման հնազանդութեան և խոնարհութեան հռոմէական գահին. որ և է կասկածի տեղիք չտալու համար, ապա ուրեմն պարտական չեմ յայտնելու իմ ամենահպատակօրէն համաձայնութիւնը (adhäsion) միևնոյն ժամանակ հաւատաքննութեան գովասանքներին և Դուպետրն Արբուէսի կանոնիզացիային[1])։ Արդեօք պարտական չէ՞ի ասելու. «թէպէտ ես, միւս բոլոր սպանական պատմութեան ծանօթ անձնաւորութիւնների հետ, մինչև այժմ այն կարծիքին էի, որ հաւատաքննութիւնը անթիւ չարիքներ է հասցրել Սպանիային, բայց այդ ալլոկուցիաների ժամանակից ես իսկոյն ոչնչացրի այդ կարծիքը և այժմ ամեն կերպ պէտք է հաստատեմ որ Roma locuta est, հաւատաքննութիւնը ամենալաւ բանն է և Սպանիան չէր կարող ուրիշ ոչ մի լաւ բան անել, քան հաւատաքննութիւնը նորից հաստատելը. Դուք գիտէք որ ով ասում է Այրը, նա պէտք է ասէ և Բ-ը։ Յանկալի էր իմանալ Ձեր կարծիքը և խորհուրդը։

Վերջացնելուց առաջ մի խօսք գոկտոր Պիխլեր-ի մասին։

1) Հռոմէական—կաթոլիկական եկեղեցում նշանակում է սրբերի կարգը դասել։ Թարգմ։

Բաւական էր նկատէիք, որ ես երեք ամսուայ ընթացքում միայն մի անգամ եմ տեսել նորան և այն էլ միայն հինգ րոպէ. տեսակցութեան ժամանակ նա ինձ պատմեց մի բարձրաստիճան օտարական պարոնի այցելութեան մասին, որը ցանկացել էր նորա միջնորդութեամբ նախապատրաստել ինձ իւր այցելութեան։ Ահա իմ բոլոր յարաբերութիւնը այդ մարդու հետ։

Այս երկար նամակից Դուք կըտեսնէք գոնէ, որ ես բարձր եմ գնահատում Ձեր ինձ ցոյց տուած բարեկամական և բարեացակամ տրամադրութիւնը։ Ես Ձեզ տուի միջոց աւելի խոր թափանցելու իմ ներքին աշխարհի, կարծիքների և շարժառիթների մէջ, որին շատ քչերն են արժանանում։ Մերժեցէք, եթէ տեսնէք որ ես մոլորուած եմ։ Դուք գիտէք որ ես խոյս չեմ տալիս յանդիմանութիւններից և իմ կարծիքների ուղղելուց։

Վերջապէս պէտք է խնդրեմ Ձեզ որ այս նամակը կարդալուց յետոյ հարկը պահանջած ժամանակ վերադարձնէք ինձ։ Ես չունիմ նորա պատճէնը և հեշտութեամբ կարող է պատահել, որ կարիք զգամ ուրիշներին ևս բացատրելու իմ այժմեան դրութիւնը և այլն։

Ձեր անձնուէր (totus tuus)

Ց. ԴԵՈԼԼԻՆԳԵՐ։

Ց. Դ.։ Ի նշան անկեղծ և բարեկամական սիրոյ ուղարկում եմ Ձեզ այս նամակի հետ Ձեզ յայտնի գրքի[1]) երկրորդ հրատարակութիւնը տեղ տեղ յաւելուածներով։

***

1) Անկասկած «Christenthum und Kirche».

1 1 MAY 2013

Ա.Ֆ 1
Ն 3

12551

Եպիսկոպոսական
բնակարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0578756